



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը


You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

572

n - 30



572
Г-30

№ 4 Մարդաբանական գրադարան № 4

ԳՐՈՓ. Փ. ԲՈՅՑԵԼ

ՏԱՐԵՐՔ

ԱԶԳԱԳՐԱԿԹԵԱՆ

ՄԱՍՆԻ

Գերմաներենից բարզ。
ԽՍՀԱԿ ՅԱՐԱԿԹԻԿԵԱՆ

Արտադրության
Ազգային հանրական հանդիսավորություն

ԹԻՖԼԻՍ
Կ. Մարտիրոսյանի տպարան | Տիպ. Կ. Մարտիրոսյան
Օբոլոնսկայ պող. 12. № 1/2.

1902.

20 JUL 2010

13124

572

0-3.

№ 4 Уарդар արանական գրադարան № 4

ՊՐՈՖ. Ֆ. ԲԱՏՅԵԼ

530
133-PA

ՊՈՅՀԱԿ ՅԱՐԱԿԹԻՒԹԵԱՆԴՐ

I

աշխատութիւնները

1. Հայոց գիրը, պատկռած Սահ.-Մեսլոպ. մըցանակով. գինն է 1 ր. 50 կ.
 2. Համառօտ 8բամարանութիւն. գինն է 1 ր.
 3. Գերմանիայի մանկավարժական բարձրագույն հաստատութիւնների գործունէութ. և հայ ուսանողները. գինն է 40 կ.
 4. Ներսիսեան դպրանոցի սաների առաջին դպրոց. ճանապարհորդութիւնը. յաւելուածով. գինն է 40 կ.
 5. Ներսիսեան դպրանոցի սաների երկրորդ դպրոցական ճանապարհորդութիւնը. գինն է 20 կ.
 6. Ստեփաննոս Պալատսնեան. գինն է 25 կ.
 7. Աշակերտի Յուշատետը. գինն է 30 կ.
 8. Զգացմունքների աշխարհ (Վէրք Հայաստանի). գինն է 30 կ.
 9. Սանահին. գինն է 30 կ.
 10. Իմ Օրագիրը. գինն է 25 կ.
 11. Ժաղեց (Ճանկական պարտէղ). գինն է 10 կ.
 12. Կին վիպագիր Ե. Սպիրիֆ. գինն է 15 կ.

Տպագրութեան շահմար պատճեանը 18

Համառօտ հոգեբանութիւնն:

1902.

24 AUG 2013

ՊՐՈՖ. ԲԱՏՅԵԼ

Թարգմանութեանս հեղինակ Փրիդրիխ Բատցէլը ծնուել է 1844 թ. Կարլսրուհէում և բնական գիտութիւններ ու աշխարհագրութիւնն է ուսել գերմանական մի քանի համալսարաններում, Բարձրագոյն ուսման շրջանն աւարտելուց յետոյ Բատցէլը ճանապարհորդում է Խոալիացում, Ռւնդարիացում, Ամերիկայի Միացեալ նահանգներում, ացցելում է Մեքսիկան, Կուբա կղզին և իւր տաղանդաւոր գրուածներով հռչակ ստանալով՝ 1876 թ. հրաւիրում է աշխարհագրութեան ուսուցչապետ Միւնիսէնի բազմարուեստից (պօլիտեխնիկում) բարձրագոյն գպրոյլի:

Ուսուցչապետութեան պաշտօնը նրան աւելի ևս միջոց է տալիս իւր երկարամեայ ճանապարհորդութեանց հետեանքները գիտնականօրէն մշակելու և իւր աշխատասիրած տասնեակ հատորներով՝ գիտնական գրականութեան աչքի ընկնող ոյժերից մէկը դառնայու:

Իմ ուսանողութեան միջոցին, 1886 թ., երբ Լայսլիգի համալսարանի աշխարհագրութեան ուսուցչապետ յայտնի ֆօն Թիխտհօֆէնը Բէոլին հրաւիրուեց, նրա փոխարէն Լայսլիգ կանչուեց Բատցէլը, որի դասախոսութիւններն այնքան հետաքրքիր էին, որ երբ այդ թուին համալսարանն ացցելեց Սաքսոնիայի Ներունազարդ արքան, մի ամբողջ ժամ նստեց ուսանողներիս շարքերում և լսեց յաղթանգամ Բատցէլի շեշտալից և ոգեստութեամբ արտասանած դասախոսութիւնը:

Պրօֆ. Բատցէլի բազմաթիւ և բազմահատոր աշխատութիւններից ամենից աւելի նշանաւոր են հանդիսացել նրա «Մարդա-աշխարհագրութիւնը» (Anthropogeographie) երկու հատոր և «Ծզգագրութիւնը» (Völkerkunde) երեք հատոր:

Այս վերջին եռահատոր գիտնական աշխատութիւնը ժողովրդին ևս մատչելի անելու համար՝ գերմաներէն հրատարակուել է դրա համառօտութիւնը. «Տարեք ազգագրութեանը» այդ համառօտութեան թարգմանութիւնն է:

ԻՍԱՀԱԿ ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ

1901 թ. Հոկտեմբեր
Տիգրան

ՏԱՐԵՐԻ ԱԶԳԱԳՐՈՒԹԵԱՆ

I

Մարդկային ազգի բնակութեան տեղը, կազմութիւնն
ու հանակութիւնը:

Մարդիկ բնակում են երկրագնդի բարեխառն և տաք
երկրներում ու կղզիների վրայ, մասամբ նոյնպէս հիւսիսային
կիսագնդի ցուրտ աշխարհում: Այբողջ մարդաբնակ աշխարհը, որի
ժակերեոյթը, առանց ծովերի, մօտաւորապէս 2,4 միլիոն աշ-
խարհագրական մղոն է, կարելի է երկուսի բաժանել մէկ՝ բե-
ռուային անմարդաբնակ սառնապատներին կից հիւսիսային և
հարաւային ծովեղբեայ երկրները, մէկ էլ արևելեան և արև-
մտեան, որոնց մէջ մարդուած է Ատլանտեան ովկիանոսը:
Այս ծովեղբեայ երկրներում բնակուող աղերն ամեն կողմից շըր-
ջապատուած չեն իրանց նմաններով և առանձնացած դիրք ու-
նին. այդ դիրքը հարկաւ պատճառ է լինում ազգագրական աղ-
քատութեան: Ընդհակառակն ազգերը խմբուած են այնպիսի
կէտերում, ուր հագորդակցութեան նշանաւոր առաւելութիւնն
են վայելում. այսպիսի կայանների ենք հանգիպում Խաղաղա-
կան Ովկիանոսում, նաև անաւանդ դրա հիւսիսային ծովեղբեայ
երկրներում, Միջերկրական ծովի սահմաններում և միջին Ամե-
րիկայում: Երկրի դիրքից ու կազմութիւնից պարզ երևում է,
որ հիւսիսային կիսագունդն աելի մեծ քանակութեամբ մարդ-
կանց բնակալիքը է մատակարարում, քան հարաւայինը, որ
երկրի այդ մասն աւելի ընդարձակ, ամեն կողմից ջօշափուող և
բազմատեսակ շքեղութեամբ լի աշխարհներ է ներկայացնում և
դրանով աւելի ճօխ կազմակերպութեան կալելիութիւնն է
առաջ բերում — մի խօսքով՝ հիւսիսային կիսագունդն
իւր դիրքավ, կազմութեամբն ու տարածութեամբը մարդկու-
թեան դարձացման նպատակների համար չի սկզբաննէ՝ անտի
գերագանց է հանդիսանում:

ՄԱՐԴԱՅԱՆԱՌԻԹԻՒՆ

Մարդկանց, ինչպէս նաև կենդանիների ու բոյսերի ծառալման հիմքը կազմում են դրանց կապակցութիւնը հիւսիսում և բաժանում՝ հարաւում։ Եթէ մարդկութիւնն ի նկատի ունենանք իբրև մի ամբողջութիւն, կտսնենք, որ նրա հիւսիսավին մասերն ընդարձակ և փոխադարձ կապակցութեան մէջ են գտնւում, իսկ հարաւային մասերը միմեանցից բաժանուած են։ Եթէ մի ակնարկ գցենք մարդկային ցեղերի վրայ, կտեսնենք, որ նեղրոսները պատկանում են հարաւին, իսկ մոնղուներն ու սպիտակամորթները հիւսիսին։ Քաղաքակրթութեան ամենաբարձր զարգացումը հասարակածից դէպի հիւսիս է գրտնուած։

Ատլանտէան ովկիանոսի շնորհիւ երկրի գոտու մէջ առաջացած խորին անդունդը նոյնպէս ծովեզրեայ աշխարհներ է։ Ստեղծում։ Ավակայն թէև այս աշխարհները՝ միջօրէականի ուղղութեամբ տեղի ունեցած կենդանի հաղորդակցութեամբ, ներդուի երկրների ընակիչների խտութեամբ և կլիմայական աւելի յաջող հանդամանքների շնորհիւ այնպէս աղքատ չեն, ինչպէս յաջող հարաւի և հիւսիսի աշխարհները, բայց և այնպէս Ամերիկայում զարգացման ամենաբարձր աստիճաններն արևելեան կողմբն են գտնւում, Ամերիկայում—արևմտեան, այսինքն Ատլանտեան ովկիանոսից հեռացած եղրային երկրներում։ Անտարակոյս Աֆրիկայի ազգաբնակութիւնը սերտ կերպով կապակցուած է։ Աֆրիկայի ազգաբնակութեան հետ, այն ինչ Ամերիկայի ազգաբնակութեան հետ ունեցած մօտիկ յարաբերութեան հետքն անդամ չկայ։ Ավակայն այդ կապակցութիւնն ասլիական յամաքեր արևելեան եղբներից աւելի հեռու է տարածում և հասնում մինչև Ասիայի մեծ կղզիները։ Այդպիսով հիւսիսի և հարաւի եղրային երկրների մէջ առաջ է դալիս մի մեծ քաղաքակրթուած տարածութիւն, որ իբրև արևմտեան կարելի է հակադրել Խաղաղական Պվկիանոսի վրայով մինչև Ամերիկա հասնող արևելեանին։ Այս բաժանման հիմնական գաղափարներն են «երկաթ» և «ոչ երկաթ»։ Թէև արևմտեան մասը հիւսիսում աւելի մեծ տարածութիւն ունի քան արեւելեանը, բայց և այնպէս հիւսիսավին և հարաւային երկրներին

մէջ տեղի ունեցած հակադրութիւնը, որ հետզհետէ աւելի ակնյացտնի է լինում մինչև այդ սահմանների ուղղանկիւն կերպով միմեանց հանդիպելը, դարձեալ մնում է։ Սահմանների այդ խաչաձև իրար հանդիպելում ժամանակի տարբերութիւն է նկատում մարդաբանական և այս ազգագրական խմբակցութիւնների մէջ։ Ազգերի ամենավերջին զարգացման գործում, անկասկած, մեծ դեր է խաղացել երկաթը։ Երկաթ ունեցող և աներկաթ երկրների սահմանը միանում է ուրիշ նշանաւոր ազգագրական տարածութիւնների սահմանների հետ։ Ուր երկաթ չկայ, այստեղ անձանօթ է նաև անասնապահութիւնը, որի նեցուկներն են՝ եղն ու կովը, գոմէշը, ոչխարը, այծը, ձին, ուղդը և փիղը. աներկաթ երկրների մեծագոյն մասում անյայտ է նոյնպէս խոզ և հաւ պահելը։ Աւելի աչքի է ընկնում ընկերական և քաղաքական հանդամանքների տարբերութիւնը։ Ամերիկայում, Աւստրալիայում և ովկիա նեան աշխարհներում տիրում է աւելի հնագոյն զարգացումն, այսինքն խմբերի ամուսնութիւն, (ցրոքութեան) օտարացեղ ամուսնութիւն (exogamie), մայրական իրաւունք և ընտանիք։ Իսկ Ասիայում, Աֆրիկայում և Եւրոպայում տիրում է ընտանիքի նահապետական համակարգութիւնը, այսինքն զոյգերի ամուսնութիւն և պետութիւնների կազմակերպութիւն՝ ըստ ժամանակակից հասկացողութեան։ Ուրեմն մարդկութեան մէջ էլ արևելքն ու արեւմուտքը միմեանց հակառակ են կանդնած։ Ամերիկան մարդկաւթեան ծալագոյն արևելքն է և այստեղ աւելի սպասելի են հին զարդարնան աստիճանները՝ քան թէ Աֆրիկայում և Եւրոպայում, որ ծալագոյն արևմուտքն են ներկայացնում։

Մարդկային ցեղերի ծալագոյն ին այսպիսի պարզ պատկեր չէ ներկայացնում։ Նեղրոսներն էապէս հարաւային ցեղ են։ Նրանց հիւսիսավին սահմանը Աֆրիկայում անապատն է, հարաւային Ասիայում շարունակում է լեռների միջով և նկատելի կերպով գուրս է ցցւում միայն ինդոսի անկիւնում, հիւսիսավին արևադարձի վրայ, և ընկղմում է ովկիանեան աշխարհում։ Հասարակածի տակ։ Մեր աչքի առաջ ունինք ուրեմն մի հարաւային պետութիւն, որ զլիաւորապէս պատկանում է արևելեան

կիսագնդին, որի փակ և ամենամեծ երկրները բոլորը միասին դժուռում են արևադարձային և հարաւային բարեխառն գօտիում։ Հարաւային դիրքի վրայ ազդում են գետնի այստեղ իշխող հանդիսացող և տարօրինակ ձեւակերպութիւնները։ Մինչ դեռ հիւսիսի և հարաւի մէջ եղած աշխարհագրական հակադրութիւնն ամբողջ երկրի շուրջն է տիրում, մարդաբանական-ազդագրական հակադրութիւնը սահմանափակում է այսպէս կոչուած հիւսաշխարհով և նրա մասերով։ Այդ տեղէ գտնուում երկրի այդմասի մարդկացն յայտնութիւնների և գիւտերի հարստութեան մեծ մասը որ ամենա-բարձր զարդացման հետ ներփակում է նաև ամենատուրինը։ Ըստիկայում մի ցեղ գոյութիւն ունի թէ հիւսիսում և թէ հարաւում, այստեղ այնպիսի մեծ ազգագրական տարբերութիւններ չկան, ինչպէս որ հիւսիսային և հարաւային Աֆրիկայում, հիւսիսային և հարաւային Ասիայում։ Աւտրալիայում։ Մարդաբանութեան տեսակէտից Ամերիկան իր ամբողջ տարածութեամբ պատկանում է հիւսիսային երկրներին, իսկ ազգագրական տեսակէտից՝ մասամբ միայն։

Ըստհակառակն Աֆրիկայի և Ասիայի համար ամենաշահաւոր խնդիրն այն է, թէ ինչպէս են յարաբերում միմեանց հարաւային և հիւսիսային երկրները։ Այստեղ նրանք խիստ տարբերում են զանազան սահմանագծերում։ Նեղրոսների և հիւսիսային Աֆրիկայի մէջ տարածուած է հաղորդակցութիւնը խանգարող անապատը. այդ մասերից ամեն մէկը մեծ է և ինքնուրուն։ Հարաւային Ասիան բազկացած է հիւսիսից և մէջտեղը ոչ բոլորտին բաժանուած ու թոյլ կերպով միացած մասերից։ Հնդկաստանն այնպիսի աղղեցութիւնների է ենթակայ եղել, որոնք տարբերում են նրան Աֆրիկայից. մարդաբանական և մասամբ նոյնպէս ազգագրական տեսակէտից։ Աֆրիկան աւելի հին, այսինքն միենոյն ծագման աւելի քիչ փոփոխուած դրութիւնն է ներկայացնում, քան Հնդկաստանը։ Վերջապէս Մալայ-եան երկրը Մադակասկարով և Հնդկաստանով որոշում է հիւսիսային ազգերի ճիւղերի մոտքը դէպի հնդկա-աֆրիկական աշխարհական իշխարհները։

Քանի որ Աֆրիկայի հիւսիս-արևեմտեան ծայրից մինչև

Ֆիդշի ձգուող տարածութեան վրայ սկամորթ ցեղերը շփւում էին սպիտակամորթների հետ, հասկանալի է, որ դրանք միմեանց հետ պէտքէ խառնուէին։ Այսպիսի զանազան աստիճանի խառնուրդունեցաղ ցեղերը բնակւում են Սուրանում, Սահարայում, հիւսիսային և միջին արևելքան Աֆրիկայում, հարաւային Արաբիայում, Պաղակասկարում, հարաւային առաջաւոր և անդրդանգէսեան Հնդկաստանում և Աւտրալիայում։ Նեղրոսների խառնուրդի մի-մի հետք գտնում ենք հարաւային Եւրոպայում և ծայրադոյն Պօլինէզիայում։ Փակ դրութեամբ միայն աւտրալիական լաւ որոշուող ցեղը կարողացել է զարգանալ։ Աւամորթ, զանգըաներ, և երկարագլուխ այդ ցեղն առաջացել է ըստ երեսութիւն պատուասների և մալայ-պոլինէզեան տարբերի խառնուրդից։ Պապուաների միպի ըստ ծագման անյայտ առանձնայատկութիւնն այստեղ ևս աչքի է ընկնում. դրան աւելանում է նաև այն ախտաբանական շարժառիթը, որ գտնում է քաղաքակրթութեան ստորին աստիճանի և աղքատիկ կեանքի թողած հետքերի մէջ։

Միմիայն ծովերի ջրավին մակերեւութը հաւասարում է երկրի ամբողջ մակերեւութիւն համարեա երեք քառորդին. այսպիսով բոլոր ցամաքն իրենից համարեա թէ երեք անգամ մեծ ծովի մէջ գտնուող կղզի է։ Մարդկութեան զանազան մասերն իրենց պատմական տեղափոխութիւններով շատ անգամ հասել են ծովին. նաւագնացութեան գիւտից առաջ կար ժամանակ, երբ ծովը մարդկութեանը շրջափակում էր երկրի այն սահմաններում, ուր նրա որորանն էր։ Նաւագնացութեան գիւտը, որի առաջին արգասիքը վաղուց արդէն կորել է, — երկրի ամեն մասերում մենք գտնում ենք նաւագնացութեան արուեստի բարձր զարգացման և դրա հետ միասին այդ արուեստի անգիտութեան հետքեր — կարելի գաբձեց մարդկանց ծաւալուիր երկրի համարեա թէ բոլոր մարդաբանակ մասերում։ Երկրի զանազան մասերում պատահում ենք նաւաշինութեան և նաւագնացութեան արուեստի զարգացման բարձր աստիճանների՝ ամենից շատ Խաղաղական Ավկիանոսում և ամենից քիչ Ատլանտեան ավկիանոսում։ Նաւագնացութեան արուեստն անհաւասր տա-

բանուելով՝ շուտով մոռացուելու յատկութիւնն է կրում, այդ
պատճառով և նրա չփոյութիւնն ու նոյն իսկ չլիշուելն ի նկա-
տի ունենալով՝ չպէտք է շուտով եզրակացնենք, որ մարդիկ
բոլորովին և շարունակաբար հեռու են մնացել ծովից: Մար-
դաբնակ ուշխարհի այժմեան մեծութիւնը մի վաւերագիր է մարդ-
կութեան խորին ծերութեան՝ այն տեսակէտից, որ սակաւա-
թիւ հեռաւոր և փոքրիկ կղզիների բացառութեամբ, համա-
րեա թէ արդէն բոնում է բնակութեան յարմար բոլոր տեղերը:

Քրի ընդարձակ ծաւալուիլը մարդու համար սնունդի հա-
րուստ աղբիւրներ բացեց և այդ պատճառով էլ ջրի եղերքների վրայ
մարդկային խիտ բնակութիւններ հաստատուեցին։ Քրի ծաւալ-
ման շնորհիւ կարելի դարձաւ հեռաւոր հաղորդակցութիւնը,
որ հին ժամանակներն անկարելի էր՝ ամեն տեղ թշնամիներով
լցուած երկրների միջավ. բարձր քաղաքակրթութիւնն էլ եղերք-
ներից տարածուեց դէպի երկրի ներսերը։ Այդ պատճառով ևս
ջրի ծաւալուիլը մարդկանց հոգու վրայ նոյնպէս զարմա-
նալի ներգործութիւնն ունեցաւ. ամենայն տեղ նկարուած
աշխարհի պատկերներում տեղ է բռնում ծովի հօրիզոնը։ Ճա-
տերը երկիրն ըմբռնում են իբրև ընդարձակ ծովի մէջ գտնուող
կղզի և հանդերձեալ աշխարհը՝ հեռու, ծովի մէջ։ Այդ պատ-
ճառով էլ հոգին ջրի վրայով պէտք է ճանապարհորդէ. դրա-
նից է առաջանում նաև այն հանգամանքը, որ դադաղին տըր-
ուում է նաւակի ձև, նաւակը թաղւում է կամ թէ փոքրիկ
նաւակը ծառայում է գերեզմանաքարի տեղ - ինչպէս զայեակ-
ներն են անում։

Մարդկային սեռի միութիւնն այն երկրացին և մոլորակալիս չայտարար նշանն է, որ յատուկ է ստեղծագործութեան ամենաբարձր աստիճանին։ Իրաւացի է, երբ զիտնական մտքով խօսում ենք մարդկային սեռի միութեան մասին, եթէ միութիւն ասելով հասկանում ենք՝ ոչ թէ միատեսակութիւնը, այլ ժողովուրդների կեանքի ամեն ասպարէզներում վկայութիւններով ապացուցուած միաբանութիւնը հաղարաւոր տարիներ պարփակող պատմութեան մէջ, ինչպէս նաև բնութիւնից տըլլուած ընական հողի միութիւնը։ Եթէ քաղաքակալը թութեան յա-

ուաջադիմութեան ամանակը — տեմպօ — վերջին պատմական դարաշրջաններում մասամբ այնպէս արագ է ընթացել, որ որոշ ազգակիմքեր միւսներից շատ առաջ են անցել, այնուամենայնիւ այօրուայ մարդկութեան՝ ինչպէս ամենաբարձր, նոյնպէս և ամենաստորին շերտերի մէջ կարելի է գտնել ընդհանուր ստացուածքի մեծամեծ մնացորդները։ Եթէ հարց տրուի այդ ընդհանուր ստացուածքի ծագման մասին, կարելի է նորից մատնացոյց անել այն հանգամանքը, որ անդուլ շարժողութիւնն է մարդկութեան նշանացոցը։ Դրա ոյժի և յարատեռթեան հետ համեմատելով՝ երկիրը փոքր է. հազարաւոր սերունդներ, որ մեզնից առաջ են եղել, նոյն — իսկ առանց կամենալու էլ, կարող էին երկրի շուրջը պտտել՝ սկսած այն վայրկեանից, երբ ծովի ու գետերի վրայով ընթացող նաւերը գտնուեցան։ Սակայն այդ վայրկեանը շատ հեռու է մեզանից։ Միմիայն կարճատես յաւակնութիւնը կարող է համարել իբրև ընդհանուր պատմութեան դեռ ևս չհասած զագախնակէտ այն հանգամանքը, որ Ամերիկայի գիւտից յետոյ, 400 տարուայ ընթացքում, եւրոպացիք կլրողացան իրենց հետ միասին տարածել այնտեղ նաև իրենց ընտանի կենդանիները, պէտքական բոյսերը, զէնքերն ու զործիքները, իրենց կազմակերպութիւններն և կրօնը։ Կոլումբոսից առաջ միայն նօրմանները չեն գտել Ամերիկան։ Այս աշխարհը, որ մենք փքուն խօսքով «Նոր» ենք անուանում, արևմուտքից աւելի քան մէկ անդամ պէտքէ գտնուած լինէր, մինչեւ որ գունատաղէմք եւրոպացիներն, իբրև վերջին գտնողներ, արևելեան կողմից մօտեցան նրա ափերին։ Երբ մալայեացիները հազիւ մի քանի գարերի ընթացքում, 200 երկարութեան աստիճան տարածութեամբ սփռուեցան, Մադակասկար և Յատեր կղզիների վրայ, — ինչպէս որ ապացուցում է այդ նրանց լեզուով և ուրիշ հանգամանքներով, — երբ եւրոպացիների գիւտից յետոյ Ամերիկայում առանձին ցեղերն իրենց բնակավայրերից հինգ հարիւր մզոն հեռացան, երբ Աֆրիկայի ամբողջ կէս մասի վրայ, լայնութեան քառասուն աստիճանների տարածութեամբ միմիայն բարբառով զանազանուող — ինչպէս օրինակ վերին և ստորին գերմաներէնը — մի լեզու է խօսուում պէտք է համաձայնել, որ եւ-

րոպական քաղաքակրթութիւնն առաջինը չէ, որ տարածուել է, ամբողջ աշխարհում։ Մեծ տարբերութիւնը միայն այն է, որ ինչ այսօր տեղի է ունենում զիտակցորդն, նախորդ հազարաւոր տարիների ընթացքում կատարուել է անօրոշ բնագրմամբ։ ընդունուր պատմութեան ընթացքում Աղէքսանդրի և Կոլումբով ձեռքով, իսկ ոչ պատմական ժամանակներում՝ հազարաւարների շնորհիւ։

Մարդկանց թիւը, սերտ կապ ունի բնակութեան տեղի հետ, որովհետեւ վերջինս նշանաւոր ազդեցութիւն ունի նրանց ներքին զարգացման, ծաւալման և յարաբերութիւնների վրայ։ Մարդկանց այսօրուայ հազար հինգհարիւր միջինի չափ հաշուող ընդհանուր թիւը պէտք է նկատենք արդիւնք այնպիսի զարգացման, որին առաջ չէր հասել մարդկութիւնը։ Այժմեան հանգամանքների զարգացումն աւելի մեծ չափով կախումն ունի ազգաբնակութեան շատութիւնից, քան թէ կարծւում է սուվորաբար։ Ազգերի կազմակերպութիւնը, եւրոպական և ասիական զարգաքակրթութեան շրջանից դուրս, թոյլ չէ տալիս խիտ ազգաբնակութիւն հաստատելու։ Երկրի մի աննշան կտորը մշակութիւնից կամայնքները միմեանցից բաժանուած են ընդառակ դատարկ տարածութիւններով, որոնք կամ իբրև որսատեալ դատարկ տարելոյն սահմանափակում են հազրդակցութիւնը, մարդու ըստ կարելոյն սահմանափակում են հազրդակցութիւնը, մարդու կանց աւելի մեծ և մնայուն ամբոխումն անկարելի է այդտեղ։ Որուրդութեամբ զբաղուազագիրը, որ բոլորովին երկրագործութեամբ չեն պարապում կամ թէ շատ չնշին տեղ են տալիս դրան, չեն պարապում կամ այնպէս անօր են բնակուում, որ ամեն մի քառակուսի մղոնի վրայ միայն մի մարդ է ապրում։ Հազուագիւտ չէ նաև անօր մարդաբնակութիւն։ Որտեղ մի փոքր երկրագործուաւելի անօր մարդաբնակութիւն։ Որտեղ մի փոքր երկրագործութեամբ ևս զբաղեցում են, ինչպէս օրինակ հնդկական շատ ցեղերի, դաշեակների և պապուասների մօտ, տասից մինչեւ քաղերի, դաշեակների և պապուասների մօտ, տասից մինչեւ քառասուն մարդ են ապրում մի քառակուսի մղոնի վրայ։ իսկ Աֆրիկայի ներսը և Մալայան Արշակէլազրոսում, ուր երկրագործութիւնն աւելի բարձր զարգացմանն է հասել, մի քառակուսի մղոնին գալիս է հաբիւրից մինչեւ երեքհարիւր մարդ։ Հիւ-

սիսային Ամերիկայի հիւսիս-արևեմտեան եղբայրնակ և ձկնորսութեամբ զբաղուող ազգերը բնակուում են իրաքանչիւր քառակուսի մղոնի վրայ մինչեւ հարիւր մարդ, նոյն խտութեամբ են բնակուում նաև թափառական հովուական ցեղերը։ Ովկիանեան կղզիներում, ուր թէ ձկնորսութեամբ և թէ երկրագործութեամբ են պարապում, իւրաքանչիւր քառակուսի մղոնի վրայ գտնուում են մինչեւ հինգհարիւր մարդ։ Նոյնչափ խտութեամբ են բնակուում նաև առաջաւոր Ասիայի մեծ մասսամբ անապատանման երկրներում ապրող թափառական և նստակեաց խառն ցեղերը։ Այսպիսով արդէն ոտքներս դրինք հողի մի ուրիշ ձեւակերպութեան շեմքը, որն իւր հսդկական-ասիական երկրներում իւրաքանչիւր մղոնի վրայ կերակրում է տասը հազարից աւելի մարդ, իսկ եւրոպականում, աղդիւնաբերութեան և հազրդակցութեան օգնութեամբ, տասնևհինգհարի հազոր մարդ։

Արդէն այս թուերը ցոյց են տալիս զանազան գոտիներում և երկրներում ապրող ազգերի ստորին աստիճանացոյցը։ Բոլոր բնական ազգերը բնակուում են անօր տարածութեան վրայ։ Բարձր զարգաքակրթութեան հետ միանում է նաև խտաբնակութեան բարձր աստիճանը։ Առաջիններն աւելի մեծ կախումն ունին գետնի յատկութիւնից, քան վերջինները։ միատեսակ կազմութիւն ունեցող երկրներում նրանք ընդհանրապէս հաւասարացափ խտութեամբ են բնակուում։ Լաւ մշակուած, բայց անօր բնակուած, ընդարձակ ցորենի դաշտերի և պարտէզներով ծածկուած խտաբնակ երկրների տարբերութիւնները քաղաքակրթութիւնից են առաջանում։

Խիտ ազգաբնակութիւնը զբաւական է ոչ թէ միայն գորեղ աճման, այլ նաև քաղաքակրթութեան անմիջական յառաջադիմութեան։ Մարգիկ որչափ աւելի մօտ շօշափեն իրար, այնչափ աւելի կհազորդեն միմեանց իրենց մտքերը, այնչափ աւելի քիչ քաղաքակրթութեան արդիւնքներ կլորչեն, այնչափ աւելի կբարձրանայ բոլոր ոյժերի զործադրութեան մրցումը։ Ազգերի թուի աւելանալն ու հաստատուն գառնալը սերտ կապակցութիւն ունի քաղաքակրթութեան զարգացման հետ։ Պեր ընդարձակ տարածութեան վրայ անօր ազգաբնակութիւն կայ,

այնտեղ քաղաքակալթութիւնն էլ ստորին աստիճանի վրայ է գտնուում. իսկ թէ հին և թէ նոր քաղաքակալթութեան կենդրուներում՝ մէշտ խիտ ազգաբնակութեան ամբոխումն է եղել: Չինաստանում և չնդկաստանում վեցհարիւր միլիոնից առելի մարդ է բնակւում, այն ինչ դրա չափ տարածութիւնը ունեցող ներքին Ասիայի՝ Մոնղոլիայի, Տիբեթի և ալևելեան թուրք ազգերի երկրներում հաղլու դրա վաթուներորդ մասը: Երկրի մարդաբնակութեան վեց-եօթերորդական մասը պատկանում է քաղաքակալթուած երկրներին:

Մինչդեռ եւրոպական աղքերի պատմութիւնը դարերից ը վեր աճման նոյն հաստատուն ձգտումն է ցոյց տալիս, որ արդէն տեսնում ենք հնագարեան պատմութեան մէջ, բնական ազգերը տատանման և յետագիմութեան այնպիսի օրինակներ են ներկայացնում, որ առաջինների մօտ չենք հանդիպում կամ թէ միայն կարճ ժամանակով ենք գտնում՝ այն էլ պատահական հանգամանքների ազգեցութեան շնորհիւ, ինչպէս օրինակ պատերազմների և համաձարակների միջոցին։ Անօր մարդաբնակութեան մէջ ինքն ըստ ինքեան արդէն գտնում է նրա դիւրին կերպով անկման առիթը. այդ փոքրիկ թուերն աւելի հեշտութեամբ են անյայտանում ու կորչում։ Քաղաքակրթութեան ստորին աստիճանի վրայ գտնուող բոլոր ազգերի յատկութիւնն է՝ կենսական ոյժերի շուտափութ սպառումն։ Դրանց տնտեսական կռուանն անձուկ ու թերի է, չափարութիւնը յաճախ հասնում է աղքատութեան, կարիքը շատ շուտ-շուտ է հիւր գալիս զրանց մօտ և չկան այն նախազգուշացուցիչ միջոցները, որով բժշկականութիւնը շրջապատում է մեր կեանքը։ Արկտիսի և հարսւալին կիսագնդի անապատներում բնութեան արտաքոյ կարգի զօրեղ ոյժերի հետ կռուելով երբեմն, նաև մասնաւոր մարդաբնակ աշխարհի սահմաններում, ամբողջ ազգեր նաւանդ մարդաբնակ աշխարհի սահմանամբ է, ամեն ազգեր է միմիայն իբրև հետեանք՝ իրենցից աւելի քաղաքակրթուած աղդերի հետ ունեցած շփման։ Սակայն խնդիրն աւելի մարդաբնակ հետազոտելով՝ երկու դիպուածի ենք հանդիպում

առաջինն է ինքնակործանումը, երկրորդը՝ գերակշռող քաղաքակրթութեան ազգեցութեան շնորհիւ առաջացած բնաջինջ լինելը: Սովորաբար երկուսն էլ միասին են ներդորձում. ոչ մէ-կը դրանցից, առանց միւսի գործակցութեան՝ չէր կարող այն-պէս արագ իր նպատակին հասնել: Ազգերի առողջ աճման հիմքն է երկու սեռի մօտաւորապէս հաւասար թիւը. բնական ազգերի մէջ սովորաբար այդպէս չէ լինում և տղաների թիւը ըստ մեծի մասին փոքր է: Մալտուսի «Հաճոյական խոչնդոտը» յատուկ է մարդուն, որի հայեցքն ուղղուած է դէպի ապագան: Սակայն մարդկային հասարակութեան մէջ բարձրագոյն դասակարգերին չէ վերապահուած՝ «ժամանակաւոր գուարճութեան դոհերովը՝ մշտական բարեկեցութիւն ձեռք բերել», այլ այն բոլոր միջացները, որ կարող են արգելք լինել բազմանալուն, մեծ չափով գործ են դրում ամենաստրիխն խաւերում. գլխաւորապէս պատերազմը, սպանութիւնը և մարդկանց յափշտակելը: Վեցտեղ մարդկային կեանքի արժէքը շատ չնչին է. դրա ապացոյց կարող է համարուել մարդագոհութիւնն ու մարդակերութիւնը: Վերջապէս ընական ազգերը շատ հետու են այն իդէալական առողջութիւնից, որ թիւրիմացութեամբ վերագրել են նրանցը. միմիայն Վֆրիկայի նեգրոսները կարող են իրեւ շատ պնդուկազմ ցեղ համարուիլ: Ընդհակառակն աւտրալիացիք, ովկիանացիք և ամերիկացիներն աւելի ևս ենթակայ են հիւանդութեանց, քան քաղաքակիրթ մարդիկ և աւելի դժուարութեամբ են օդընտելանում: Անկասկած է, որ դրանք շատ տեղերում, դեռ եւրոպացիների հետ շփուելուց առաջ, սկսել էին կամաց-կամաց ծիւրուիլ: Սակայն քաղաքակրթութիւնն էլ յետոյ այդ խանգարումը հասցնում է մինչեւ վերջին ծայրը՝ անցկացնելով այն տարածութիւնը, որի ընդհարձակութեանը յարմարեցրած էր ընական ազգերի առանձնախատուկ հասարակական և քաղաքական յօրինուածութիւնը: Քաղաքակրթութիւնը ներմուծում է այնպիսի պահանջներ և հաճուքներ, որոնք այդ մարդկանց վարած կեանքի եղանակին և աշխատանքի կատարմանը չեն համապատասխանում. քաղաքակրթութիւնը բերում է դրանց համար անծանօթ ու սարսափելի աւելիչ հիւանդու-

թիւններ և անխուսափելի վէճեր ու կրիւներ: Մեծ երկրներում, ինչպէս օրինակ Հիւսիսային Ամերիկայում, Աւստրալիայում, Նոր-Զէլանդիայում, քաղաքակրթութեան յառաջադիմութեան հետեանքն եղաւ բնիկների յետ մզուխը դէպի երկրի ամենայարմար մար մասերը և դրա հետ սերտ կապակցուած այդ մարդկանց քանակութեան նուազումը: Փոքր երկրներում, նա մանաւանդ ովկիաննեան կղզիներում, բայց նաև կուբա և չայտի կղզիների վրայ բնիկները մասամբ բնաջինջ են եղել, մասամբ էլ խառնուել ուրիշ ցեղերի հետ և յամենայն դէպօ՝ անյայտացել: Որտեղ որ աւելի ստորին ատտիճանի վրայ գտնուող ցեղերի մեծ տոկունութեան և յաջող բնական յարաբերութեանց շնորհիւ ոչչացման զրո-ծողութիւնը գանդաղել է, — ինչպէս Աֆրիկայի զանազան մասներում, Հիւսիսային Ամերիկայում, Մէքսիկայում — այնտեղ տեղի է ունենում խառնուրդի կազմուելը, որ շուտով իւր վերջնական նպատակին կհասնի, այսինքն կոչնչացնի բնիկների առանձնայատիկութիւններն ու ինքնուրունութիւնը: Արդէն մեծ տեղափոխութիւններ են տեղի ունեցել, շատերն էլ սկսել են տեղի ունենալ և շատ ընդարձակ տեղերում ազդեցն ենթարկում են այս կրաւորական շարժմանը: Հիւսիսային Ամերիկայում մինչեւ ԳՅ⁰ արևմտեան երկարութեան մնացել են միայն հնդիկ ցեղերի տխուր աւերակները. Վկիտօրիխայում և նոյզիւսդվակէսում հաղիւ թէ հազար մարդ մնացած լինի բնիկների սերունդներից, իսկ հիւսիսային Ասիայի, Հիւսիսային Ամերիկայի, Աւստրալիայի, Ռվիկաննեան կղզիների եւրոպականանալը միմիայն ժամանակի խնդիր է:

Հազարաւոր փորձերն արդէն այժմ ցայց են տալիս սեղ, որ այսպիսի շարժումների և տեղափոխութիւնների միջոցին ցեղերը չեն կարող անփոփոխ մնալ, և նոյն իսկ ամենամեծ ցեղերը, որոնց ներկայացուցիչների թիւը հարիւրաւոր միջօն-ների է հասնում, չեն կարողանում դիմանալ ամեն կողմից մը-ռնչող կոհակների ժայռերին դիպչելուն: Երկրի շատ մասերում փոթորկալի կերպով է առաջ գնում ցեղերի խառնուելու գործը: Հիւսխային և արևելեան Աֆրիկայից արաբներն ու բերքեր ցեղին պատկանողներն առաջ են դնում դէպի նեգրոսները, որոնց հեռաւոր ցեղակիցները հասնում են մինչև հարաւային

ծալը, իրենց սեմիտական գծագրութեամբ: Հոթէնդունելի տեղը բռնում են խառնածնունդները, Եւրոպացիների հետ խառնուածները: Կանադայում համարեա ֆրանսիական բոլոր գաղութների յատկութիւնն է Հնդիկների հետ խառնուելը, միջին և հարաւային Ամերիկայում արդէն այսօր մեստիցներն ու մուլատներն աւելի պնդակազն են, քան թէ բռն հնդիկները, Պվլիանիայում վազուց արդէն մարայեա-պօլինէդիացիք յերևան են ելել նեզրասների մէջ, ամբողջ ներքին Ասիայում իշխող են հանդիսանում մոնղոլական-չինական և եւրոպական խառնուրդները, նրանք հասնում են մինչև Եւրոպայի խորքը և ազդում են մեր աշխարհամասի արևելքի ու հիւսիսի վրայ: Այս գործողութեան ընթացքում՝ թէ աւելի մեծ քանակութիւնը, թէ արագ աճումը և թէ արուեստների գերազանցութիւնը միշտ յօդուտ քաղաքակրթութեան բարձր աստիճանների վրայ գտնուղները ոչնչացնում են ստորին աստիճանների վրայ գտնուղներին նաև այն դէպքում, երբ առաջինները մեծամասնութիւն ընկ կաղմում: Եթէ ընական ազգերի ընդհանուր անյատանալու մէջ մի որևէ է մխիթարական բան կայ, այդ այն ստորդ հանդամանքն է, որ դրանց մեծ մասը խառնուելավ քաղաքակրթագործերի հետ՝ ինքն էլ քաղաքակրթուում է: Թէև յաճախ կրկնում է իրեւ թէ հին փորձների հետևանք այն միտքը, թէ խառնուրդ սերունդները պահպանում են երկու ծնողների առաւելապէս վատ յատկութիւնները, բայց բաւական է մի հայեացք ձգել ներկայ ժամանակի ժողովուրդների կեանքի վրայ, որպէս զի տեսնենք, որ մուլատները, մեստիցները, արաբների ու նեղրոսների խառնուրդները հիւսիսային և հարաւային Ամերիկայում և Սփրիկայում հնդիկների ու նեղրոսների առաջնորդներն են հանգիսանում: Մի անգամ մկառած խառնուրդը շարունակում է և քաղաքակրթուած ցեղի արեան ամեն մի նոր հասանքը հետզհետէ հաւասարեցնում է գոյութիւնը ունեցող տարրերութիւնները:

Եթէ ընդհանուր պատմութիւնը՝ քաղաքացիութեան առաջնային գործութիւնները և այլն 7/1. 1922

թէկ ընդհատուող, բայց այնուամենայնիւ առաջ դիմող ծաւալումն է ցոյց տալիս երկրիս վրայ, դրա գօրաւոր գործոնն է քաղաքակիրթ ազգերի քանակութեան բնական գերակշռութիւնը: Մինչդեռ արագապէս աճող ազգն իւր աւելորդը ուրիշներին է տալիս, բարձր քաղաքակիրթութեան ազգեցութիւննինքն ըստ ինքեան գերակշռող է հանդիսանում, քանի որ այդ է խիստ բազմանալու պատճառը կամ պայմանը: Այսպիսով քաղաքակիրթութեան ծաւալումն երևում է մեղ իրրև՝ քաղաքակիրթ ազգերի ինքն իրեն ընթացքն արագացնող շարունակաբար աճումն երկրիս վրայ, որ շարունակ ձգտում է աւելի ևս կատարեալ կերպով իրագործել իբրև նպատակ և խնդիր, յոյս և ցանկութիւն յառաջադրուած մարդկացին սեռի միութիւնը:

Ի վերջո՞յ եթէ փորձենք հակառակ ընթացքով հետախուզել այն ճանապարհները, որով ընթացել են մարդկութեան ամենանշանաւոր մասերը, իբրև սկզբնակէտ մարդկացին կդժնենք միատեսակ, միաժամանակ և միատեղ գոյութիւն ունեցող շատ փոփոխութիւններ, կամ ինչպէս Բլումէնբախն է ասում, այլասերութիւնները, որ առաջ սակաւ կէտերում են միասին հաւաքում, որպէսզի յետոյ, հաղորդակցութեան շատանալովն աւելի ևս միմեանց շօշափելու ու վերջը միմեանց այնպէս մղելու և խառնակուելու, որ սկզբնական տեսակներից այսօր ոչ մէկն էլ գոյութիւն չունի՝ իր նախնական առանձնայատկութիւններով: Սակայն դրանց մնացորդները ցոյց են տալիս այն երկու մեծ հակադրութիւնները, որ գոյութիւն ունեն դեռ այսօրաւացեղերի մէջ ևս՝ հիւսիսացին կիսագնդի—սպիտակ և մոնղոլական ցեղերը—և հարաւային կիսագնդի—նեղուների ցեղը—մէջ: Պրանց պատկանում են ցամաքացին միութեան և ովկիանական բաժանման հակադրութիւնները, հիւսիսացին բևեռացին երկրների խորքը մտած և ովկիանոսի միջոցով բևեռացին աղդեցութիւնից բաժանուած աշխարհի հակասութիւնները: Նեղերոս ազգերը կարող են մի անգամ աւելի հիւսիս ապրած լինել, քան այժմ, ինչպէս Աֆրիկայում, նաև Ասիայում և Խաղաղական ովկիանոսում, յամենայն դէպս նրանք բնակում էին

իրանց այժմեան բնակավայրերի սեղմուած տեղերից դէպի հարաւ:

II

Բնական ազգերի դիրքը մարդկութեան մէջ:

Նախ մի երկու խօսք ասենք այս էջերում յաճախ կըրկնուող «բնական ազգեր» անուան վերաբերմամբ: Այս անունը մենք տալիս ենք այն ազգերին, որոնք աւելի ենթակայ են, բնութեան ճնշմանը կամ աւելի կախումն ունին բնութիւնից, քան թէ քաղաքակիրթ ազգերը: Այս անունն արտայատում է այն տարբերութիւնը, որ գոյութիւն ունի կեանքի եղանակ, հոգեկան ընդունակութիւնների և պատմական դրութեան մէջ. քանի որ այս անունն այդ ուղղութեամբ ոչինչ չէ բացարում և նախապաշարում, հէնց այդ պատճառով էլ կրկնակի յարմար ենք գտնում մեղ համար: Մենք ասում ենք բնական ազգեր ոչ թէ նրա համար, որ նրանք ըստ կարելոյն սերտ յարաբերութիւն ունին բնութեան հետ, այլ որովհետև նրանք ապրում են բնութեան ննීමան ներբոյ: Բնական և քաղաքակիրթ ազգերի տարբերութիւնը պէտք է որոնել ոչ թէ իրանց՝ բնութեան հետ ունեցած կապակցութեան աստիճանի, այլ այդ կապակցութեան տեսակի մէջ: Քաղաքակիրթութիւնը բնական ազգութիւն է ոչ թէ լիալատար անջատման մտքով, այլ բազմապատիկ, լայն և ընդարձակ կապակցման տեսակիտով: Հացահատիկն իւր շունչարանում ամբարող զիւզացին նոյնչափ վերջնական կախումն ունի իւր արտի հաղից, որչափ ճահիճներում ջրաբբինձ հնձող հնդիկը, որ ինքը չէ ցանել. սակայն այս կախումն ունենալին առաջինի համար այնչափ ծանր չէ, որովհետև նա իմաստութեամբ պաշար ժողովելով՝ այդ ստրկութեան շղթայի ներքոյ այնքան էլ հեշտութեամբ չէ ճընշուում. այն ինչ ամեն մի փոթորկի, որ բրնձի հասկելը չուրն է թափում, երկրորդի՝ կեանքի նեարդերն է շօշափում: Մենք բնութիւնից ամբողջավին չենք ազատուի, եթէ նրան մանրամասն ուսումնասիրենք և շահուենք նրանից, այլ միայն նրա էութեան կամ ընթացքի մի դիպուածքից անկախ

կլինենք՝ բազմապատկելով կապակցութիւնները։ Հէնց մեր քաղաքակալութեան պատճառով՝ այսօր մենք աւելի սերտ կապակցութիւն ունինք բնութեան հետ, քան թէ երբ և իցէ գոյութիւն ունեցող բոլոր սերունդները։

Թէև այնպէս է թւում՝ թէ բնական և քաղաքակիրթ ազգերի համեմատութիւնն այդ երկուսի մէջ խոր անդունդ է բացանում, բայց այնուամենայնիւ մենք դրանով չենք բաւականայ, այլ ամենից առաջ կհարցնենք՝ թէ ի՞նչ դիրքունին ընած բնական ազգերն ամբողջ մարդկութեան մէջ:

Արդեօք կարելի՞ է բնածին մարմնութան տարբերութիւն-ներն ի նկատի ունենալով՝ անսխալ եղբակացութիւն անել մարդկութեան ընդհանուր տարբերութիւնների տեսակի ու քա-նակի մասին։ Ազգագրական տեսակէտից, որ ամենապարզ կեր-պով ցոյց է տալիս մարդկութեան մեծ և ծանրակշիռ քաղաքա-կրթական տարբերութիւնները, ամենից առաջ այն ցանկու-թիւնն ենք յայտնում, որ բաղաբակիրք ցեղ գաղափարը մարդկութեան նկատմամբ աւելի մանրամասն քննուի, քան-թէ այդ տեղի է ունեցել մինչև այսօր։ Կարելի է նախատե-սել, որ ասողներ կլինին թէ քաղաքակիրթ ազգերի մարմնի կաղմութեան մէջ այնպիսի յատկութիւններ կան, որոնք առաջացել են քաղաքակրթութեան շնորհիւ, ինչպէս որ միւս կողմից էլ բնական ազգերի մարմինը որոշ զծերով պարզ ցոյց է տալիս կեանքի այն եղանակի ազգեցութիւնը, որ զորկ է այն ամենից, ինչոր մենք սովոր ենք քաղաքակրթութիւն-անուաննել։ Անդամազնին Գուստավ Ֆրեյը, որ բնական ազգե-րըն ուսումնասիբել է հենց իրենց բնութեան մէջ, ասում է. մարդկային մարմնի ներդաշնակ զարգացումը կարելի է միմիայն բաղաբակիրութեան ազդեցութեան ներքոյ։ Եւ մարդ կարդալով նրա նկարագրութիւնները հոթենդունների, բուշմանների և նոյն խոկ կաֆրների մասին, համոզում է, որ լաւ կազմակերպուած, արտաքուստ գեղեցիկ մարմիններ նրան-ցում աւելի հաղուազիւտ են, քան մեզանում՝ զառամեալ կար-ծուած քաղաքակիրթ մարդկանց մէջ։ Կա մի տեղ պարզ ար-տայաբում է, «որ առողջակաղմ, կանոնաւոր զարգացած մար-

մին ունեցող գերմանացին, ինչ վերաբերում է թէ ձևերի յարաբերութեանը, թէ ոլիքին և թէ լիուռեանը, իսկապէս զերազանցում է Ա-Բանտուին պատկանող մարդու միջին կազմութեանը»։ Սակայն այս բանառուները, կարելի է աւելացնել, կաֆրների ճշղաւորութեան, որոնց մասին է մասնաւորապէս խօսւում ալիտեղ, ամենատւժեղ և վայելչահասակ ազգերից մէկն է Աֆրիկայում։ «Նորազոյն ժամանակներում աւելի յաճախ ենք լսել ալղայիսի դատողութիւններ և այսօր այն ամերիկացի ազգազրի խօսքը, թէ «Տելվեդէրի Ազօղոնի ամենալաւ նախատիպը հնդիկն է», նոյն իսկ իբրև գեղեցիկ խօսք չի կարելի ընդունել անկանած։ Աւելի խորը ժամանցելով՝ նոյն իսկ ուկրների կազմութեան մէջ տարբերութիւններ են գտնուել, որոնք վերադրում են մէկ տեղ քաղաքակրթութեան ազգեցութեանը, մի այլ տեղ անքաղաքակրթ կեսնքի ներգործութեանը։ Վիրլսովը լապլանդացիներին և բուշաններին ուղղակի ներկայացրել է իբրև ախտաբանական, ալիսինքն քաղցի և կարիքի շնորհիւ թշուայած, անկեալ ցեղեր։ Սակայն ցեղերի տարբերութեան արհեքը որոշող ամենանշանաւոր փորձը, որի համար զիտութիւնը շատ փոքր և միմիայն ամբողջ աշխարհի պատմութիւնը լարող և ուժեղ է, գեռ նոր է կազմակերպում։ Ստորին կուսուած ցեղերի ներմուծումը բարձր ցեղերի քաղաքակիրթ ըրջանի մէջ և այն շրջափակների կործանումը, որ առաջնդիմութիւնը էին այդ ներմուծմանը, ոչ թէ միայն մարդայինութեան մի փայլուն գործն է, այլ միաժամանակ նաև միենախորին գիտնական նշանակութիւն ունեցող իրողութիւն։ Ամենաստորին կարծուած ցեղերի միջիօնաւոր մարդիկը, սեառորթները, առաջին անգամ կմասնակցեն ամենաբարձր քաղաքակրթութեան բոլոր առաւելութիւններին, իրաւունքներին և լարտականութիւններին։ ոչինչ չէ արգելում նրանցը գործնելու զարգացման բոլոր միջոցները։ Եթէ այսօր միայն մօաւոր ճշտութեամբ կարողանալինք ասել, թէ մի քանի սերունդների ընթացքում ինչ կլինէր այն տասերկու միջիօն նեղըս ստրուկների վիճակը, որ Ամերիկայում վերջին քսան տարուայ միջոցին ազատուել են ստրկու-

մի քաղցած ընտաճիք անդղի ճանկերից խլում է դէշը, ոչ ըստ բնութեան բոլոր օրէնքների վաղուց նրան էր պատկանում, և մի խռով անյագ ու նախանձու շնագալերի նման որսի վրայ ընկնելով չէ դադարում լափելուց, մինչեւ որ նրանց չափից դուրս լցուած ստամոքսը քնելու չէ ստիպում՝ այս ապացուց է կեանքի եղանակի այնպիսի անասնացման, որ ճնշում է ամեն տեսակ հոգեկան նշով: Մեզ չէ զարմացնում նոյնպէս, որ Աֆրիկայում ճանապարհորդողները՝ փախուստ տուող շիմպանզէների կամ օրանգների հօտերի հետ են համեմատում շփոթուած բուշմաններին, որոնք ամեն օտարականի, լինի նա սպիտակամորթ թէ ուեամորթ, միւնոյն է, թշնամի են համարում: Սակայն իզուր են միշտ այս խեղճ բնական ազգերի վրայ յարձակում, որոնք բնութիւնից աւելի մեծ հակումն չունին անասնանմանութեան, քան թէ մենք: Կան այնպիսի բարուապէս ընկած եւրոպացիք, որոնք աւստրալիացիներից սուր են գտնում: Սնանանման լինելու կամ թէ լինել կարողանալու այս անհաճոյ ընդունակութիւնը տարաշախտաբար յատուկ է ամեն մարդու՝ ոմանց քիչ, ոմանց շատ: Այդ զլիսաւորապէս կախումն ունի քաղաքակրթութեան աստիճանին համապատասխանող ազակերպութելու ընդունակութիւնից: Միմիայն քաղաքակրթութիւնը կարող է մի սահման գծել մեր և բնական ազգերի մէջ: Մեծ վճռականութեամբ պէտքէ շեշտել, որ «բնական ազգեր» գաղափարն իւր մէջ չէ պարունակում ոչինչ մարդաբանական, անդամազննական ու բնախօսական, այլ միմիայն զուտ ազգագրական, բաղաբակրական գաղափար է: Բնական ազգերը քաղաքակրթութեամբ խեղճ ազգեր են: Եմեն ցեղի պատկանող և ամեն բնական յատկութեանց տէր ազգերը կարող ոն կամ դեռ հասած չլինել քաղաքակրթութեան կամ թէ քաղաքակրթութեամբ յետաղիմած լինել: Հնագոյն զերմանացիներն ու զալերը հուվմէական քաղաքակրթութեան դիմացը համեմատաբար ոչ պակաս խեղճ էին քաղաքակրթութեամբ, քան թէ մեր դէմ կանգնած կաֆրները և ովկիանացիք. շատերը՝ որոնք այսօր ուստաց քաղաքակրթութ ազգին են պատկանում, Պետրոս Մեծի ժամանակ զուտ բնական ազգեր էին:

թիւնից և որոնք ազատութեան և նորագոյն քաղաքակրթութեան արդիւնքները վայելելով հարիւր միլիոնի կհասնին, այն ժամանակ կարելի կլինէր վարահութեամբ վճռել՝ յեղերի տարբերութեան մէջ եղած քաղաքակրթութեան աղդեցրութեան մէջ եղած բարեկարգութիւններով:

Կարելի է այն կարծիքը յայտնել, որ վերջին տարիների ընթացքում տեղի ունեցած ցեղեցի համեմատական ուսումնասելութիւնները նուազեցնում են սպլորաբար ընդունուած մարդաբանական ցեղական տարբերութեան կշիւր և յամենայն գէպս չեն նպաստում այն ըմբռնմանը, որ մարդկութեան այսպէս կոչուած ստորին ցեղեցը նկատում է իրեւ կենդանուց փոխակերպուած մարդկանց խումբ: Դրանով չենք ուզում մերժել մարդու ընդհանուր նմանութիւնը կենդանիների նետքուած մարմնի, սակայն ժիւտում ենք այն ենթադրութիւնը, թէ մարդկութեան որոշ մասերն աւելի նման են կենդանուն, քան թէ ուրիշները: Ազգերի ուսումնասիրութեան միջոցին ամեն ցեղեցի մէջ էլ հանդիպում ենք այնպիսի գծերի, որոնց կենդանական կարելի է անուանել. այլ կերպ էլ չէր կարելի սպասել: Որովհետեւ մարդս իր մարմնի կազմութեան մէջ պահպանել է կապիկի որոշ նմանութիւնը, այդ պատճառով և նոյն իսկ նորագոյն համակարգով դիտնականները միայն այդ բանին կարմորութիւն տալով՝ կրկնն վերադարձան Լիննէի համակարգութեանը, որ Հոմօ սեռը կապկի հետ միատեղ Primates զարդարութեանը, որ առաջ կշտամբուելու, թէ անտրամաբանօրէն են դատում. բաւական է միայն ի նկատի ունենալ մարդկային ընութեան հոգեկան արտայատութիւնը, որպէս զի շատ կողմերից սուր կերպով աչքի ընկնի նիւթեղին հիմքի անասնականութիւնը: Մենք ամենք գժեախտաբար այնպէս ենք ըմբռնում, որ իրեւ թէ մարդու մէջ մի դաշտան է թաղնուած և «անասնական» ցանկութիւն, անասնանալ և ուրիշ այսպիսի լիզուի ձեւերն ապացուած է լինուած ստիպուած էլ լինում այդպիսի նմանութիւնները զտնելու:

Իսկապէս մարդկութեան ելքու խմբերի քաղաքակրթութեան տարբերութեան անդունզը, թէ ըստ լայնութեան և թէ ըստ խորութեան, կատարելապէս անկախ է նրանց ձիրքերի տարբերութեան մէծութիւնից: Պէտքէ ի նկատի ունենալ, որ մի ազգի քաղաքակրթութեան սեպհականութեան բարձր աստիճանի վը-րայ ներգործում են մեծ քանակութեամբ պատահական դի-պուածներ, ուստի պէտքէ զգուշանանք դրանցով իսկոյն և թէ կեռուանքներ եղակացնել այդ ազգի հոգեկան և մար-մնական կազմութեան մասին: Բարձր ձիրքերի տէր ազգերը կարող են քաղաքակրթութեամբ խեղճ լինել և այդպիսով մարդ-կութեան մէջ առհաջարայլ ստորին դիրք ունեցողների տպա-ւորութիւնն անել: Զինացիներն ու մոնղոլները միւնոյն ցեղին են պատկանում, բայց որպիսի տարբերութիւն կայ դրանց քաղաքակրթութեանց մէջ: Այդ տարբերութիւնն աւելի աչքի կրնկնի, եթէ մոնղոլների տեղ վերցնենք բարբարոս ցեղերից մէկն ու մէկը, որոնք Զինաստանի սահմանի նահանգներում կղզիների նման են երեսում՝ աւելի բարձր քաղաքակրթութեան տէր մարդկային ծովի մէջ: Ըստ նորագոյն հետազոտութիւն-ների այնպէս է թւում, որ ախնօսներից, հիւսիսային ջապոնա-կան կղզիների սկզբնական բնակիչներից, շատերն աւելի մօտ են կովկասեան, քան մոնղոլեան ցեղին: Բայց այնուամենանիւ նրանք բնական ազգ են, մինչեւ անգամ մոնղոլ-մալայիան ջապոնացիների կարծիքով: Յեղը քաղաքակրթութեան սեպհա-կանութեան հետ ինքն ըստ ինքեան ուշինչ կապ չունի: Թէ և յիմարութիւն կիներ ժխտել, որ մեր օրերում ամենաբարձր քաղաքակրթութիւնն ալսպէս կոչուած կովկասեան կամ սպի-տակ ցեղի յատկանիշն է, բայց միւս կողմից նոյնպէս նշանա-ւոր իրողութիւն է, որ հազար տարիներից ի վեր քաղաքա-կրթութեան ամեն շարժումների ընթացքում՝ իշխող է հան-գիսանում մարդկանց այն ձգտումը, որով նրանք կա-մենում են բոլոր ցեղերին իրենց նեղութիւններին ու պարտականութիւններին մասնակից անել և այդպիսով ծանրակշիռ կարեսը թիւն են տալիս «մարդկութիւն» մեծ գաղափարին: Այդ գաղափարը թէև ժամանակակից աշխարհի

Հրաշալի յատկութիւնն է համարւում, բայց դրա իրականա-
նալուն շատերը դեռ հաւատ չեն ընծացում: Բայց եթէ դուքս
նայենք պատահարների այն նեղ շրջանակից, որին յան-
դգնութեամբ ամբողջ աշխարհի պատմութիւն են անուանում,
կտեսնենք, որ սկզբնական և նախապատմական ժամանակների
ներկայացուցիչներն ամեն ցեղերից էլ եղել են:

III

Քաղաքակրութեան էութիւնը, ծագումը եւ արածուիլը

տոյ, ապագայում, պէտք է կազմեն քաղաքակրթուած ազգերի հոգեւոր կեանքի հրաշալի և ծաղկալից անտառը: Կրօնը միւնոյն ժամանակ արուեստ և գիտութիւն, աստուածաբանութիւն և փիլիսոփայութիւն է, այսպէս որ այս աշխարհի աղքատիկ կեանքում չկայ ոչ մի իդէալական ձգտումն, որ չգրտնուէր նրա սահմանների մէջ: Այդ ազգերի քահանաների համար կարելի է ասել, բառի բուն նշանակութեամբ, որ նրանք աստուածային դադունիքների պահպանողներն են: Այս դադունիքների յետազայում տարածուիլը Մողովրդի մէջ, բառի իսկական մտքով ժողովրդականացնելը, քաղաքակրթութեան առաջագիմութեան ամենապարզ և ամենալաւ նշանն է:

Ինչ վերաբերում է բաղաբական և տնտեսական կազմակերպութեանը, ընական ազգերի մէջ նկատում ենք քաղաքակրթութեան սեպհականութեան շատ մեծ տարբերութիւններ. նրանցից շատերը բաւականին յառաջադիմել են քաղաքակրթութեան զործում: Ստորդ է նմանապէս, որ այդ տարբերութիւններն առաջանում են ոչ այնքան նրանց ընդունակութեանց զանազանութիւնից, որքան դարձացման պայմանների խիստ տարբեր լինելուց: Զարգացման ընթացքում դեր է խաղացել փոխանակութիւնը և անաշառ դիտողը շատ անդամաւելի իրերի համաձայնութիւն է նկատել, քան տարբերութիւն: «Զարմանալի է», բացազանչում է Խապմանը՝ Գամարա ցեղի սովորութեանց մասին խօսելիս, «թէ որպիսի նմանութիւն է տիրում աշխարհիս երեսին եղած մարդկային ընտանիքների սովորութիւնների ու դործողութիւնների մէջ: Նոյն իսկ դամարացիներն այսպիսի սովորութիւններ ունին, որոնք բռնորովին միւնոյնն են, ինչ որ նոր-դէէլանդացիներինը, ինչպէս օրինակ առաջնատամների հանելը և ճկոյթիկորելը: Եւ որովհետեւ քաղաքակրթութեան էութիւնը կայանում է փորձառութեան դէպքերի հաւաքման, հաւաքածի պահպանման, տեալանութեան և վերջապէս նրանց դարձացումը շաբունակելու կամ բազմապատկելու ընդունակութեան մէջ, այդ պատճառով խնդիր է՝ թէ ի՞նչպէս կարելի է, որ իրականանալ քաղաքակրթութեան առաջին հիմնական պայմանը,

այսին քն քաղաքակրթութեան սեպհականութեան ժողովելը՝ հմտութեանց, դիտութեանց, ուժի դրամակլանի ձեռով: Վաղուց արդէն համաձայնութեամբ որդուած է, որ դրան հասնելու առաջին քայլը պէտքէ լինի բնութեան աղատակած շնորհածից կախումն ունենալուց կատարելապէս դադարել և սկսել գլուխացորէն արդիւնաւորել մարդկանց համար ամենակարեւոր պտուղները՝ սեպհական աշխատանքի միջոցով. նաև մանաւանդ երկրագործութեամբ և անասնապահութեամբ: Այդ վոփոխութիւնը միանգամից ասպարեզ է բաց անում քաղաքակրթութեան ամենահեռաւոր կարելիութիւնների համար, բայց միւնոյն ժամանակ պէտքէ նկատել, որ առաջին քայլից մինչև այսօր միայն հասած բարձրութիւնը՝ շատ հեռու է:

Մարդուս, նոյնապէս և ամբողջ ազգերի, ոգին ցոյց է տալիս բաւականին մեծ զանազանութիւն՝ ինչպէս տարբեր ձիրքերի, նոյնապէս և այն տարբեր աղեցութիւնների շնորհիւ, որ արտաքին հանգամանքները ներդործում են նրա վրայ: Գլխաւորապէս տատանւում է ներքին կապակցութեան աստիճանը և դրա հետ միասին սեպհականութեան հաստատուն լինելը կամ տևողականութիւնը: Այդ սեպհականութեան կապակցուած զինելը և միմեանցից անջատուիլը հաստատապէս բնորոշում է նոյնապէս քաղաքակրթութեան ստորին աստիճանները, ինչպէս օր նրա կապակցութիւնը, անբաժանելի լինելը և ամման զօրութիւնը՝ բնորոշում են բարձրագոյն աստիճանները: Քաղաքակրթութեան ստորին աստիճանների վրայ այնքան քիչ տեղ է բռնում աւանդութիւնը, որ այդ աստիճանների վրայ գտնուող ազգերը ոչ կարողանում են իրենց նախկին վիճակի մասին գիտակցել, ոչ էլ զօրացնել ու բաղմապատկել իրենց ոգեկան սեպհականութիւնն առանձին հանձարեղ մարդկանց հնարագիտութեամբ կամ դրսից եկող դորդումների ընդունելով ու խնամելով: Եթէ ամեն բան խարէական չէ, հէնց այդ բանումն է ազգերի խորին տարբերութեան հիմքը: Ըստ երեսովին այդ հարցը շօշափում են, երբ միմեանց հակադրում են ոչ պատմական և ոչ պատմական ազգերը: Մի-

թէ պատմական գործերը կորած են պատմութեան համար միայն այն պատմառով, որ պատմազրութեան մէջ չեն լիշտում: Պատմութեան էութիւնը կայանում է նոյն իսկ պատահածի և ոչ թէ պատահածը լիշտու և պահպանելու մէջ: Աւելի լաւ կլինի, եթէ այս տարբերութիւնը վերազրենք ազգայնութեան անհատականութեան և յօրինուածութեան հակառակութեանը, որովհետև ներքին կապակցութիւնն այն ամենախորին տարբերութիւնն է ցոյց տալիս, որ գոյութիւն ունի պատմական գործունէութեան, ուրեմն և գլխաւորապէս մարդուս ողեկան շրջանում: Մարդկութեան ինչպէս ընկերական և պետական, այնպէս և ոգեկան պատմութիւնն ոչ այլ ինչ է, եթէ ոչ յառաջադիմութիւնն պատահած գործերուց՝ դէպի միաբան գործելը: Առաջին տեղը բռնում է արտաքին բնութիւնը, որով դաստիարակուում է մարդկային ոգին, ձգտելով նրա հետ մի այնպիսի յարաբերութեան մէջ մտնել, որի վերջնական նպատակը բնութեան կարգուրեալ հոգեկան պատկերի շէնքն է՝ այսինքն արուեստի, բանաստեղծութեան և զիտութեան ստեղծագործութիւնը: Տարբեր ցեղերին պատկանող բնական աղգերը՝ անդամազննական — մարդաբանական մտքով՝ աղգերի խմբակցութիւններ չեն կազմում: Եւ որովհետև նրանք մ սրբկութեան ամենավսեմ բարիքներին — լեզուին և կրօնին — մասնակից են, ուստի և նրանց տեղը ըլպէտք է մարդկութեան տոհմացոյց ծառի վերջին աստիճանի վըրայ դնել, կամ թէ նրանց դրութիւնն իբրև ամենասկզբնական և մանկական դրութիւն ըմբռնել: Տարբերութիւն կայ մանկան արագ հասունացող տհասութեան և որոշ նկատմամբ կանգառած և անշարժ չափահասի չնչին հասունութեան մէջ: Քընական աղգերը մօտ են այս վերջին տեսակին և առաջինից հեռու: Թրանցը մենք անուանում ենք քաղաքակրթութեամբ խեղճ աղգեր, որովհետև ներքին և արտաքին հանգամանքներն արգելք են եղել նրանցը՝ այնպիսի յարատև զարգացումն ձեռք բերել քաղաքակրթութեան շրջանում, ինչպիսին են քաղաքակրթութիւնը աղգերի յարկանիշները և կրթութեան յառաջադիմութեան գրաւականները: Քայց և այնպէս մենք չենք վստահանայ անքաղաքակրթ աղգերի յարականիշները: Քայց և այնպէս մենք չենք վստահանայ անքաղաքակրթ անուանել նրանցը, որովհետև

քաղաքակրթութեան բարձր աստիճաններին հասնելու սկզբնական միջոցները — լեզուն, կրօնը, կրակը, զէնքն ու գործիքները — ամենքըն էլ ունին և հէնց այդ և դրանց նման ուրիշ միջոցներ ունենալը — օրինակի համար լիշենք միայն ընտանի կենդանիներն ու մշակուող բոյսերը — վկայում է այն բազմաթիւ և բազմատիսակ շօշափումների մասին, որ տեղի են ունենում խկական քաղաքակրթ աղգերի հետ:

Թէ ինչո՞ւ նրանք չեն օգտուում այդ պարզեներից՝ պատճառները բազմազան են: Առաջին պատճառներից մէկն է համարում նրանց նուազ հոգեկան ընդունակութիւնը: Այս բացարութիւնը թէև յարմար է, բայց առ սակաւ անարդարացի: Այժմ գոյութիւն ունեցող բնական աղգերի մէջ յամենայն դէպս ընդունակութեանց մեծ տարբերութիւն կայ: Բայց կարելի է ընդունել, որ քաղաքակրթութեան զարգացման ընթացքում նոյն իսկ շատ քիչ բանով աւելի բարձր ընդունակութեանց տէր աղգերն աւելի և աւելի են տիրացել քաղաքակրթութեան միջոցներին և իրենց յառաջադիմութեանն ապահութիւն և հաստատութիւն սեպհականել, այն ինչ աւելի նուազ ընդունակութեանց տէր աղգերը յետ են մնացել: Սակայն արտաքին հանգամանքները, ինչ վերաբերում է նրանց արգելող կամ նպաստող աղգեցութեանը, աւելի պարզ կարելի է ճանաչել ու գնահատել. ուստի և առաջ այդ հանգամանքների լիշեն աւելի իրաւացի և տրամաբանական է: Մենք ըմբռունում ենք՝ թէ ինչո՞ւ բնական աղգերի բնակավարերը գտնւում են գլխաւորապէս մարդաբնակ երկրի ծալքագոյն եղբներում, ցուրտ և տաք աշխարհներում, հեռաւոր կղզիների վրայ, կըղղիացած սարերում և անապատներում: Մենք հասկանում ենք նրանց յետամանացութիւնն երկրի այն մասերում, որոնք երկրագործութեան և անասնապահութեան զարգացման համար քիչ յարմարութիւններ ունեն, ինչպէս Աւատրալիան, հիւսիսային բեւուային աշխարհները և Ամերիկայի հիւսիսային և հարաւային ծալքագոյն մտածերը: Անկատար զարգացման հասած օժանդակ աղբիւրների անվատակելիութիւնն իբրև մի ծանր շղթայ կախուած է նրանց ոտքից և սահմանափակում է նրանց շար-

ժողովաթիւնները մի նեղ տարածութեան մէջ: Դրանից է առաջանում նրանց չնչին թիւը և զրանից էլ հետեւում է նրանց հոգեկան և մարմնական վաստակի չնչին ամբողջական դումարը, հանճարեղ մարդկանց հաղուագիւտ լինելը, այնպէս և բացակայութիւնը այն փրկարար ճնշողութեան, որ գործ է դնում շրջապատղ բազմութիւնը անհատների շրջահայեցութեան վրայ և ներգործող է հանդիսանում հասարակութեան դասակարգերի և փրկարար աշխատանքի բաժանման նըպաստման գործում: Յժանդակիչ միջոցների այդ անվտահելիութիւնից մասամբ հետեւում է նաև բնական աղքերի չնչին տեականութիւնը: Թափառական հովուական կեանքը մի ընդհանուր յատկութիւն է դրանց համար և դիւրացնում է դըրանց անհաստատ քաղաքական ու անտեսական կազմակերպութեանց անկարելիութիւնը, նոյն իսկ եթէ փութացան երկրագործութիւնը կապում է դրանցը հողակրծութիւն: Այսպիսով յաճախ, չնչին ճոխապէս մասնատրուում և լաւ խնամուած քաղաքակրթութեան միջոցներին, առաջանում է մի բաժան բաժան, ուժասպառ և անպտուղ կեանք: Առանց ներքին կապացութեան՝ այս կեանքն ապահով առումն չի կարող ունենալ. այս այն կեանքը չէ, որի մէջ առաջացան քաղաքակրթութեան առաջին սադմերը և որ մենք պատմական շրջանի սկզբում հիանալի կերպով աճած ենք տեսնում: Այս կեանքը լի է աւելի քաղաքակրթութեան բնկորներով և քաղաքակրթական այնպիսի շրջանների, աղօտ լիշորութիւններով, որոնք մասամբ պատմական շրջանի նկըրից շատ առաջ եղած պէտքէ լինեն: Ի վերջու, եթէ կարճ ամփոփենք՝ թէ ինչպէս ենք ըմբռում բնական աղքերի դիրքը՝ համեմատութեամբ այն աղքերի, որոնց պատկանում ենք և մենք, կասենք. լուս քսդաքակրթութեան՝ այդ աղքերը մեղնից ստորև գտնուող խաւ են, այն ինչ ըստ բնական կազմութեան և ընդունակութեան՝ մասամբ, որչափ որ այդ կարելի է նշմարել, հաւասար են մեզ և մասամբ էլ մեղնից շատ հեռու չեն: Այսպիս այդ խաւից աղքերի նոյն իսկ անցողական ամունք, որ կոչուել է նոյնպէս աղքերի մացաւներ, առաջ կըքերէլ մի յարատե բան, ամեն մի նոր սերունդ աւելի վեր կը-

գայով մենք ինքներս՝ պիտի անցնելինք, այլ այնպէս, որ այդ խաւը հաւաքւում և կազմւում է ինչպէս կանգ առաջ, նոյնու պէս և մի կողմը նետուած և յետամնաց տարրերից: Ուրեմն բնական աղքերը դրական յատկութեան մի զօրեղ սաղմն են պարունակում իրենց մէջ: Դրանումն է կայանում նրանցն ուսումնասիրելու արժէքն ու արաւելութիւնը: Այն բացասական ըմբռումը, որ միայն այն է տեսնում, ինչ որ նրանք չունին, համեմատելով մեղ հետ' մի անշրջահայեց անգնահատութիւն է:

Քաղաքակրթութիւն բառով սովորաբար արտայալում ենք մի որու ժամանակի բոլոր նոգեկան ստացուածքի գումարը: Երբ խօսում ենք քաղաքակրթութեան աստիճանների, կամ բարձրը և ստորին քաղաքակրթութեան ու կիսաքաղաքակրթութեան մասին և քաղաքակրթութեան ու բնական աղքերը հակադրում ենք միմեանց՝ մերընդունած որոշ չափը վերցնում ենք քաղաքակրթութեան այն բարձր աստիճաններից, որին մենք ինքներս ենք հասել, որովհետև միայն մեր քաղաքակրթութիւնն ենք մենք քաղաքակրթութիւն անուանում: Սակայն ամեն ազգ ունի հողեռո ձիրքեր և լուր կեանքում հոգելան կարողութիւններ է զարգացնում: Ամեն մէկը զիտութեան և կարողութեան մի որոշ գումարը իւրն է անուանում, որ և ներկայացնում է իւրեւ իւր քաղաքակրթութիւնը: Այս «հոգեկան ստացուածքների գումարների» դանաղանութիւնը զտնուում է ոչ թէ միայն դըրանց մեծութեան, այլ և անման զօրութեան մէջ: Քաղաքակրթուած ազգը երկում է մեղ իւրեւ մի զօրեղ ծառ, որ զարաւոր աճմամբ ուժեղ և յարատե կերպով բարձրացել է քաղաքակրթութեամբ խեղճ աղքերի ստորութեան և անցողականութեան վրայից: Կան բոյեր, որ ամեն տարի ոչնչանում են. կան և ուրիշ բոյեր, որոնք հասարակ խոտից զաւնում են պնդակազմ ծառեր: Զանողանութիւնն ամեն մի տարուայ աճման արգափիքի պահպանութեան, հաւաքման և միացման մէջն է: Այդպէս էլ բնական աղքերի նոյն իսկ անցողական ամունք, որ կոչուել է նոյնպէս աղքերի մացաւներ, առաջ կըքերէլ մի յարատե բան, ամեն մի նոր սերունդ աւելի վեր կը-

բարձրացնէր և առաջուց ձեռք բերած արդասիքից կտար նրան աւելի հաստատուն յենակէտ եթէ նրա մէջ պահպանման և միացման ձգտումը ազգեցիկ լինէր: Սակայն այդ չկայ. և այդ պատճառով այն բոլոր բարձրանալու որոշած բոյսերը գետնի երեսին են մնում և թշուառ կերպով ոչնչանում՝ կռուելով օդի և լուսի համար, որ նրանք վերևում լիութեամբ կարող էին վայելել: Քաղաքակրթութիւնը շատ մարդկային սերունդների արդասիքն է:

Ինչպէս տարածական, այնպէս և ժամանակի սահմանակաման—որ առանձնացնում է թէ խրճիթները, զիւղերը, ազգերը և թէ միմեանց հետեւող սերունդները—մէջ է կայանում քաղաքակրթութեան ժխտումը. դրա հակառակ՝ միմեանց հետ ապրողների միաբանութեան եւ միմեանց հետեւողների կապակցութեան մէջ է գտնում նրանց զարգացման կանչիութիւնը: Միմեանց հետ ապրողների միաբանութեամբ ապահովում է քաղաքակրթութեան պահպանումը, իսկ սերունդների կապակցութեամբ՝ ծաւալուիլը: Քաղաքակրթութեան զարգացումը զանձ ժողովել է: Գանձերն ինքն ըստ ինքեան են աճում, երբ պահպանող ոյժեր են հսկում դրանց վրայ: Մարդկային ստեղծագործութեան և գործունեութեան ամեն ապարեզներում իւրաքանչյւր բարձր զարգացման հիմքը միութիւնն է: Միմիայն միաբան գործունեութեամբ, փոխազարձ օգնութեամբ, լինի այդ թէ ժամանակակիցների մէջ և թէ սերնդէ սերունդ, յաջողուել է բարձրանալ քաղաքակրթութեան այն աստիճանը, որի վրայ որ այժմ կանգնած են մարդկութեան ամենազարգացած անդամները: Այս միութեան եղանակից և ծաւալումից է կախուած այդ աճումը: Այդ բանին աւելի նըստել են ժամանակակից ազգերի անհատական մրցութեանն ոյժ տուող մեծ համայնքներն ու պետութիւնները, քան թէ տուհմերի բաղմաթիւ փոքրիկ ու համագոր միութիւնները:

Բարձրագոյն քաղաքակրթութեան զարգացման էական նշանը մենք համարում ենք յառաջադիմութեան ձգտողների ըստ կարելոյն ներքին կապակցութիւնը՝ թէ միմեանց և թէ նախկին սերունդների հետ և զրանից առաջացած արդիւնքը:

և վաստակի ամենամեծ գումարը: Ծայրայեղութիւնների մէջ են գտնուում այն բոլոր միջին աստիճանները, որ մենք ամփափում ենք կիսաբաղաբակրութիւն բառի մէջ: Մի քանի խօսք էլ այս անուան մասին: Մինչդեռ բարձրագոյն քաղաքակրթութեան մէջ տեսնում ենք պահպանող և թէ առաջ մղող և զարգացնող ոյժերի եռանդուն զործագրութիւնը, կիսաքաղաքակրթութեան մէջ առաջիններն իսկապէս մեծ զործունէտեան են հրաւիրում, այն ինչ վերջինները յետ են մնում և այդպիսով կիսաքաղաքակրթութեան խոնարհագոյն աստիճանը որոշում: Կիսաքաղաքակրթութեան միակողմանիութիւններն ու անկատարելութիւնները վերաբերում են ոգեկան յառաջադիմութեանը, մինչդեռ տնեսական զարգացումն աւելի շուտ է հաստատում: Երկու հարիւր տարուց առաջ, երբ Եւրոպան և հիւսիսային Ամերիկան շողիով, երկաթով և ելէքտրականութեամբ զեռ ևս իրենց հսկայական թռվչքները չէին արել, Զինաստանն ու Ջապոնիան եւրոպացի ճանապարհորդներին սաստիկ զարմացնում էին իրենց երկրագործութեան, արհեստների և վաճառականութեան արգասիքներով և նոյն իսկ իրենց այսօր խորին անկման հասած ջրանցքներով և ճանապարհներով: Սակայն եւրոպացիները և եւրոպացիների սերունդ աղդերն Ամերիկայում և Աւստրալիայում վերջին երկու հարիւր տարուայ ընթացքում ոչ թէ միայն հասան այդ թռվչքի ետևից, այլև վաղուց արդէն նրանից առաջ են զնացել: Այստեղից կարելի է որոշել թէ ինչումն է կայսնուած չինական քաղաքակրթութեան և առ հասարակ ամեն կիսաքաղաքակրթութեան առեղծուածը: Ի՞նչն էր արդեօք պատճառը, որ արեմուտքը արևելքին գերազանցեց, եթէ ոչ ազատ ողեկան ստեղծագործութեան հաճույքը: Վօլտէրն իրաւացի կերպով նկատում է, որ ընութիւնը չինացիներին տուել է բոլոր գործիները՝ դանելու այն ամենը, ինչ որ օդտակար է իրենց, բայց զրանից աւելի ոչինչ: Ինչ վերաբերում է օդտակարին, գործնական կեանքի արուեստներին նրանք մեծ արդիւնք են ցոյց տուել, մինչդեռ երևոյթների պատճառների և կապակցութիւնների մասին նոյն իսկ մի գիտնական հայեացք, մի տեսութիւն անգամ չեն տուել մեզ:

Վըդիօք այս թերութիւնն առաջացել է նրանց ընդունակութեանց վերաբերեալ մի պակասութիւնից, թէ նրանց ընկերավարական և քաղաքական կազմակերպութեան, անշարժութիւնից, որ պաշտպանում է միջակը և ճնշում հանձարեղը; Քայլ որովհետեւ այդ թերութիւնը մնում է նրանց կազմակերպութեան ամեն տեսակ փոփոխութիւնների միջոցին, պէտքէ ընդունենք, որ առաջանում է ընդունակութեան պակասութիւնից: Միմիայն դրանով կարելի է բացատրել նաև նրանց ընկերական կարգերի անշարժութիւնը: Վճռական պատասխանը հարկաւ միայն ապագան կարող է տալ, որովհետեւ դեռ պէտք է տեսնել թէ ինչ յառաջադիմութիւն ցոյց կտան այդ ազգերն այն քաղաքակրթութեան ճանապարհի վրայ, որ այնպիսի մեծ եռանդով ցայց են տալիս դրանցը Եւրոպան և Հիւսիսային Ամերիկան: Քայլ որ դրանք այդ ճանապարհով կամենում են կամ թէ պէտք է գնան, վաղուց արդէն անկատկած է: Այս խնդիրն անկարելի է վճռել, եթէ քաղաքակրթութեան աշբողջութեան տեսակէտն ընդունենք, որ Զինաստանի, Քապօնիայի և այն անկատարելութիւնները համարում է իրեւ նըշան դրանց կեանքի ընդհանուր ստորին աստիճանի և յաճախ միւնոյն ժամանակ՝ իրեւ ապացոյց դէպի լաւը փոխուելու փորձելի լվակատար անյաջողութեան: Եթէ նրանք նոյն իսկ միայն կիսաքաղաքակրթութեան ընդունակ լինեին, յառաջադիմութեան կարելի Եւրոպայից և Հիւսիսային Ամերիկայից գորեղ գործոններ առաջ կրերէր, որոնք հետզհետէ կկերպարանափոխէին ժաղովրդի զանգուածը: Այժմեան քաղաքակրթակիրթագերից շատերին այսպիսի գործողութեան եղանակն է բարձը զիւրքի հասցբել: Յիշենք միայն ուռուսներին, ունգարացիներին և այն հանգամանքը, որ միլիոնաւոր գերմանացիների և այլ քաղթականների շնորհիւ այդ կիսամոնդուները բաղմատեսակ յաջողութիւններ են ունեցել Եւրոպացիների մէջ:

Ամեն մի աստիճանի և աղքի քաղաքակրթութեան ստացուածքի գումարը բաղկացած է նիւթական եւ ոգեկան կարողութիւնից: Այդ երկուսը միմեանցից զանազանելը մեծ կառութիւն ունի, որովհետեւ դրանք շատ տարբեր նշանակու-

թիւն ունին ամբողջ քաղաքակրթութեան ներքին արժէքի և գլխաւորապէս դրա զարգացման ընդունակ լինելու համար: Այդ երկուսը միւնոյն միջոցներով, միւնոյն դիւրութեամբ և միաժամանակ չեն ձեռք բերուում: Ոգեկան քաղաքակրթութեան ստացուածքի հիմքը նիւթական քաղաքակրթութիւնն է: Մարմնական կարիքներին բաւականութիւն տալուց յետու, ոգեկան ստեղծագործութիւնները շռապութիւն են երեւում: Այդ պատճառով և քաղաքակրթութեան ծագման վերաբերեալ ամեն մի խնդիր կարելի է վերլուծել հետևեալ հարցման. ինչն է նըպաստում քաղաքակրթութեան նիւթական հիմքերի զարգացմանը: Այսուղի զլխաւորապէս պէտք է շեշտել, որ թէւ այդ զարգացման ճանապարհը բնութեան միջոցների գործազրութիւնն է մարդուս նպատակների համար, բայց և այնպէս մեծագոյն գնահատութեան արժանի է՝ ոչ թէ բնութեան նիւթերի հարստութիւնը, այլ ոյժերի կամ աւելի լաւ ասենք, ոյժերի զրգուածը: Բնութեան այն ձիրքերը մարդուս համար ամենից մեծ արժէք ունին, որոնց ընտրիւ կրացուին նրանք ներքին ոյժերի արժիքի աղբիւները՝ յարատեւ գործունելու համար:

Ինքն ըստ ինքեան հասկանալի է, որ ամենից քիչ կարող է անել այդ բնութեան այն հարստութիւնը կամ այն, այսպէս կոչուած, բարիքը, որ ապատում է նրան այնպիսի որոշ աշխատանքից, որ ուրիշ հանգամանքներում կարես որ կըլինէր, ինչպէս օրինակ ջերմութիւնն արևագարձային երկրներում աւելի է զիւրացնում խրճիթ շինելը և զգեստներ հագնելը, քան թէ բարեխառն գոտիներում: Եթէ համեմատենք այն, ինչ որ կարող է տալ բնութիւնը՝ մարդկային ոգուն յատուկ կարելիւթիւնների հետ, կտեսնենք, որ տարբերութիւնը խիստ մեծ և առաւելապէս հետեւ այլն է. բնութեան ձիրքերը տեսակով և քանակութեամբ յարատեւ անփոփոխ են, սակայն ամենակարեսների արժանիքը տարկցատարի տատանուող և անհաշուելի է: Դրանք կապակցուած են որոշ արտաքին հանգամանքների հետ, որոշ գոտիներում կախումն ունին որոշ բարձրութիւններից և հողի որոշ տեսակներից: Դրանց վերա-

բերմամբ մարդկային ոյժը հենց սկզբից սահմանափակ շրջանի մէջ է գրուած. դա կարող է ընդարձակել նրա ոգու և կամքի ոյժի զարգացումը, բայց ոչ երբէք՝ բեկանել: Դրա հակառակ՝ մարդուս ոյժերը ամբողջովին միմիայն իրեն են պատկանում, նա ոչ թէ միայն կարող է գործադրել դրանց, այլև բազմապատկել և զօրեղացնել՝ առանց մի որեւէ սահմանափակման: Ոչինչ այսպէս համոզեցուցիչ կերպով չէ ցոյց տալիս մեզ բնութեան շահագործման կախումն ունենալը մարդկային կամքից, ինչպէս երկրի ամեն կողմերում, ամեն կլիմաներում, բարձրութեան ամեն տեսակ աստիճանների վրայ բնակուղ բնական ազգերի միանման դըրութիւնը:

Պատահմամբ չէ, որ կուլտուր (բաղաքակրթութիւն) խօսքը հասկացւում է նաև Երկրագործութեան մտքով: Այդտեղ է դրա ստուգաբանական արմատը և այն բանի հիմքը, ինչ որ մենք հասկանում ենք կուլտուր բառի ընդարձակ մտքով: Գետնի մէջ ոյժերի մի ամբողջ գումար թափելն ամենալաւ և շատ բան խոստացող սկիզբն է՝ բնութիւնից ձեռք բերուած այն անկախութեան, որով իւր նպատակին է հասնում հողու շնորհիւ: Զարգացման շղթայի օղակներն այստեղ ամենից հեշտութեամբ են միանում, որովհետև տարուէ տարի կրկնուող աշխատանքով՝ միւնոյն գետնի վրայ կենդրոնանում է ստեղծաշործութիւնը և հաստառաւմ աւանդութիւնը. և այլպիսով առաջ են գալիս քաղաքակրթութեան հիմնական պայմանները:

Քաղաքակրթութեան զարգացման հայար անկառած ամենամեծ նշանակութիւն ունին բնութեան պայմանները, որոնք թույ են տալիս երկրի պտղաւէտութեան և նրա վրայ դրուած աշխատանքի հարստութեան հաւաքելը: Բայց այնուամենանիւ չի կարելի ընդունել, ինչպէս ասում է նաև Բուկէն, թէ պատմութեան մէջ ոչ մի օրինակ չկայ, որ մի երկր իւր սեպհական ջանքերով քաղաքակրթուած լինի, եթէ վերոցիշեալ պայմաններից մէկն առանձին յաջող հանգամանքների մէջ չկայ: Մարդուս առաջին դոյութեան համար ան-

կառկած ամենից նպաստաւոր էին տաք, խոնաւ և պտուղներով առատ երկիրները և սկզբանական մարդուն ամենից դիւրութեամբ կարելի է երևուկայել իբրև արևադարձային երկրի բնակիչ: Սակայն միւս կողմից՝ եթէ քաղաքակրթութիւն ասելով պէտքէ հասկանանք միայն մարդուս ոյժերի զարգացումը բնութեան շնորհիւ, ապա ուրեմն այդ կարող էր տեղի ունենալ միմիայն որևէ է ճնշողութեան ներքոյ, որ մարդուն անյաջաղ հանգամանքների մէջ դնենով՝ պէտքէ ստիպէր նրան իրեն համար աւելի հողալու, քան թէ արևադարձի փափուկ որպանում: Բարեխառն երկիրները մենք միւնոյն կարեորութեամբ ընդունում ենք իբրև քաղաքակրթութեան որորան, ինչպէս որ արեւադարձային երկիրները՝ իբրև մարդուս որորան: Մէքսիկայի և Պերուի բարձրաւանդակութեանց վրայ աւելի քիչ պտղաւէտ երկիրներ կան, քան թէ դրանց շրջապատող զաշտավայլերում, բայց այնուամենանիւ Ամերիկայի ամենաբարձր զարգացումն այդ երկու բարձրաւանդակների վրայ ենք գտնում: Նոյն իսկ այսօր զրանք իրենց բարձր քաղաքակրթութեամբ անապատների պէս ամայի և մնբերի են երեսում համեմատելով այն արտաքոյ կարգի փարթամ և հրաշալի բընութիւն ունեցող զաշտերի և դարաստափերի հետ, որոնք շատ տեղերում միայն մի օրուայ ճանապարհ հեռու են այդ բարձրաւանդակներից: Արևադարձային երկրներում հողի պտղաւէտութիւնն առ հասարակ խիստ նկատելի կերպով նուազում է, իսկ բարձրաւանդակներն ամեն տեսակ կլիմայական պայմանների մէջ, երբէք այնքան պտղաւէտ չեն լինում, որքան դաշտավայլերը, ըլրաշատ երկիրները և սարերի դոշերը: Եւ ամերիկական քաղաքակրթութեան կենդրոնավայրերն այդ երկու բարձրաւանդակների վրայ էին. Մէքսիկայի քաղաքակրթութեան կենդրոնը, Տեխոսխտիտան մալրաքաղաքը, (այժմեան Մէքոխայի տեղը) գտնում էլ 2280 մետր բարձրութեան վրայ, իսկ Պերուի Կուցկօ քաղաքը 3500 մետր բարձրութեան վրայ էր: Այդ երկու երկրներումն էլ աւելի քիչ չերմութիւն ու խոնաւութիւն կայ, քան թէ միջին և հարաւային Ամերիկայի միւս մեծագոյն մասերում:

Վերովիշեալից կարելի է եզրակացնել, որ թէև քաղաքակրթութիւնն իւր արմատով սերտ կապակցութիւն ունի գետնի մշակութեան հետ, սակայն առաջինի զարդանալով՝ վերանում է այդ երկուսի յարաբերութեան անհրաժեշտութիւնը։ Երբ ազգերն աճում են, իրենց քաղաքակրթութիւնն էլ խում է գետնի հետ ունեցած կապը և հետզհետէ զարդանալով՝ աւելի և աւելի ստեղծում է այնպիսի գործօններ, որոնք միմիայն արմատացմանը չեն ծառայում։ Կարելի է ասել, որ երկրագործին յատուկ է մի բնական անգործութիւն, նա զէնքի գործածութեան անսովոր լինելով՝ սիրով ստացուածք է ձեռք բերում, նստակեաց կեանք վարում և կորցնում է իւր արիութիւնն ու ձեռներէցութեան ողին։ Ընդհակառակը քաղաքական ոյժի արտայատութեան ամենաբարձր չափը գտնում ենք որսորդների և նովիլիների մօտ, որոնք շատ հանգամանքներով երկրագործին իբրև բնական հակոտնեայ են հանդիսանում, նա մանաւանդ հովիւները, որոնք իրենց շարժունութեան հետ միացնում են քաղմութեամբ ասպարէզ իջնելու ընդունակութիւնը, իսկ ոյժի հետ կապակցում են կարգապահութիւնը։ Հենց այն, ինչ որ երկրագործին դժուարութիւն է պատճառում այդ ոյժը զարդացնելու համար, այստեղ իբրև նպաստող հանգամանք է առաջանում։ այն է նստակեաց կեանքի պակասութիւնը, շարժունութիւնը, ոյժի, արիութեան և զէնք գործածելու վարժութիւնը։ Եւ եթէ մի հայեացք ձգենք երկրի վրայ, կտեսնենք թէկապէս, որ այսպէս կոչուած կիսաքաղաքակրթ ազգերի ամենահաստատուն կագֆակերպութիւններն առաջացել են այդ տարբերի ի մի ձուլուելով։ Չինաց անպայման երկրագործ ժողովրդին, մոնղոլներից ինտոյ, իշխում են մանդշուները, պարսիկներին տիրում են Թուրքեստանի իշխողները. եզիպտացիները գտնուում էին հեկտուների, արաբների և այժմ էլ գտնուում են թուրքերի իշխանութեան ներքու. սրանք բոլորը թափառական ազգեր են։ Աֆրիկայի ներսը թափառական վահումաններն են Ռւդանդա և Ռունիօր հաստատուն պետութիւնների հիմնադիրներն ու պահպանողները։ Սուդանի պետութիւնների շարքի մէջ, որ ծովից

ծով է ձգւում, ամեն մի առանձին պետութիւն հիմնուել է անապատներից և ամայի տեղերից գաղթողների ձեռքով։ Աէքսիկայում ըիրտ ացտէկները նուամել են քաղաքակիրթերկազմործ տոլտէկներին։ Անապատի և մշակուած երկիրների սահմաններում վերովիշեալ կանոնը կարելի է բազմաթիւ օրինակներով հաստատել։ Սրանով մենք ճանաչում ենք պատմութեան մի օրէնքը։ Ուրեմն սակաւ պտղաւէտ բարձրաւանդակներն ու անմիջապէս զրանց կից գտնուող երկրի շերտերն ամեն տեղ ոչ թէ այն պատճառով են նպաստել բարձրագոյն քաղաքակրթութեան զարգացմանը և քաղաքակիրթ պետութիւնների կազմութեանը, որպէս ետև ցուրտ կլիմա ունենալով ստիպել են ժողովրդին երկրագործութեամբ պարապելու, այլ որովհետև այստեղ թափառական ազգերի նուաճող և կապակցող ոյժը միացաւ քաղաքակիրթ օազիսներում միասեղ սեղմած, սակայն պետութիւն կազմելու անկարող, երկրագործի աշխատասիրութեան հետ։

Քաղաքակրթութեան նպաստող և խոչընդուռ հանդիսացող տեղական հանգամանքներից զուրս՝ նման կլիմայական պայմաններում, կլիմայի ներգործող յատկութեան շնորհիւ առաջանում են քաղաքակիրթ երկիրներ, որոնք զօտու ձևալ գասաւորուած են երկրագնդի շուրջը։ Դրանց կարելի է խաղաքակրթական զօտիներ անուանել։ Այն պատմական վորձերի հիման վրայ, որ ցայսօր յայտնի է մարդկութեանը՝ բարեխառն զօտին իսկական բաղսիակրթական զօտին է։ Իրողութիւնների ամբողջ շարքեր վկայում են այդ բանը։ Վերջին երեք հազար տարուայ ամենանշանաւոր պատմական զարդացումներն այս զօտուն են պատկանում։ Հնագոյն պատմութեան սիրտը բարախում էր Միջերկրական ծովի շուրջը, այդ զօտու տակ. որ այդ պատահական բան չէր, շատ որոշ կերպով ապացուցանում է այն հանգամանքը, որ պատմական զարդացումը հաստատուն մնաց բարեխառն զօտու տակ՝ նաև Եւրոպայից դուրս, նոյն իսկ եւրոպական քաղաքակրթութեան նոր աշխարհներում տարածուելուց յետով, ինչպէս Ամերիկայում, Աֆրիկայում և Աստրալիայում։ Թէև անվերջ

կերպով բազմաթիւ թելեր են հիւսում այս գործուածքի մէջ, բայց որովհետև այն ամենը, ինչ որ ստեղծադործում են աղքեր, վերջ ի վերջոյ անհատի գործունէութեան վրայ է հիմնում, անկասկած է, որ ըստ կարելոյն շատ գործելու ընդունակ տնհատներ հաւաքւում են բարեխառն գոտու տակ: Քաղաքակրթութեան առանձին շրջանները միանում են մի քաղաքակրթական գոտու տակ, որտեղ հաղորդակցութիւնը, փոխականակութիւնը և քաղաքակրթութեան տարրերի բազմանալն ու հաստատուին ամենայացող պայմանների մէջ են լինում, որտեղ, որից խօսքով, քաղաքակրթութեան պահպանումն և յառաջադիմութիւնը կարող են ծաղկել աշխարհագրական ամենամեծ հիմքերի վրայ:

Հնագոյն կիսաքաղաքակրթութիւնները, որոնց մնացորդները գտնում են արևադարձային երկրներում, պատկանում են այնպիսի ժամանակի, երբ քաղաքակրթական աշխատանքը այնպիսի մեծամեծ պահանջներ չէր անում անհատներից, բայց երբ հէնց այդ պատճառով քաղաքակրթութեան բարգաւաճումըն անցողական էր: Հին և նոր քաղաքակրթութեան աշխարհագրական ժաւաման ուսումնասիրութիւնը ցոյց է տալիս, որ քաղաքակրթութեան գոտիների քաղաքակրթական վտառտակի աճումը տեղի է ունեցել բարեխառն կիմայում: Այս խորհրդանութիւնը մեծ նշանակութիւն ունի մարդկային սեռի սկզբնական պատմութեան, նրա տարածման պատմութեան և արևադարձային երկրներում մնացած քաղաքակրթութեան բեկորների բացատրութեան համար: Քաղաքակրթութեան անկման մի ուրիշ եղանակը ցոյց են տալիս այն օրինակները, որ քաղաքակրթութեամբ աւելի ստոր աղղերը կլանում են քաղաքակրթութեամբ իրենցից աւելի բարձր կանգնած աղղերին. առաջններին օգնութեան է հասնում կեանքի դժուար պայմաններին աւելի լաւ յարմարուելու առաւելութիւնը: Արհամարհուած սկրիլնդներն իրենց մէջ ընդունեցին Գրեօնլանդիայի նորմաններին: Չէ որ արկտիսի սառցապատները դնացող եւրոպացիներին խմբերն, այդտեղ եղած ժամանակի ընթացքում, պացիների խմբերն, արկտիսի սառցապատները դնացող եւրոպացիներին հարկադրուած էին յարմարուել էսկիմոսների սովորութեանը և

ուսանել արկտիսի բնակիչների արուեստներն ու հմտութիւնները, որպէս զի կարողանալին բևեռալին գոտու բնութեան ոյժերի հետ կոփու մղել: Այլպէս էլ արեադարձային և բևեռալին երկրների դաղթականութեան յաջող հետեւանքներն ապահովելու հարմարում են բնիկների պահանջներին:

Անկատար միջոցներով գլուխ եկած լիակատար քաղաքակրթութիւնը ճաշակագիտական և բարոյագիտական տեսակետից աւելի վսեմ երևոյթ է, քան թէ դէպի բարձրը ձգտելու և աճման միջոցին տարրալուծուած քաղաքակրթութիւնը: Սոյ պատճառով և բարձր ու ստորին քաղաքակրթութեանց իրար շօշագիտու առաջին հետև անքներն անհաճելի են լինում: Յիշենք օրինակի համար կէտորսների և փախստական նաւաստիների առաջին գաղթականութիւնները՝ արուեստներով և աւանդութիւններով հարուստ Նոր-զէէլանդ կամ չաւայի կղզիներու և կոտորնենք թէ ինչպիսի ազգեցութիւն ունեցաւ այդտեղ առաջին օղէտների և անառականոցների բացուիլը: Հիւսիսային Ամերիկայի վերաբերմամբ առաջին անգամ զօօլկրաֆտն ուշագրութիւն դարձրեց այն արագ անկման վրայ, որ կրեց բնիկների տնական արդիւնաբերական գործունէութիւնը, երբ սպիտակամորթները ներմուծեցին աւելի կատարելագործուած և նպատակայարմար գրդիքներ, կշիռներ, զգեստներ և այլն: Երբ եւրոպական վաճառականութիւնը դիւրութեամբ սկսեց մատակարաբել այն ամենը, ինչ որ երկար, յարատել և դժուար աշխատանքով հազիւ կարողանում էին անկատար կերպով պատրաստել մինչև այդ ժամանակ, բնիկների գործունէութիւնը պակասեց՝ ոչ թէ միայն դաշտում, ուր նրանք բաւականին գործ էին անում, այլ և առ հասարակ թուլայաւ, կորցրեց ինքն իրեն վրայ վստահ լինելու զգացմունքը և այդպիսով ժամանակի ընթացքում նոյն իսկ արուեստն անյատացաւ: Այսօր յայտնի է մեզ, որ նոյնը տեղի է ունենում Աֆրիկայում, Պոլինէզիայում և խեղճ էսկիմոսների աշխարհում: Աֆրիկայի համար հաստատուած կանոն է, որ ծովեղներին տարածուած է քայքալման շրջանը, զրանից յետոյ զալիս է

բարձր քաղաքակրթութիւնը, իսկ ամենալաւը երկրի ներսումնէ, որ գեռ ևս շօշափուած չէ: Կոյն իսկ ջապօնական ինքնուրոյն արուեստը՝ նահանջեց՝ արուեստագիտական կողմից աւելլստորին աստիճանի վրայ գտնուող եւրոպականի դիմացը:

IV

Lb 2011

«Վարդուս ձիրքերը, հանգամանքներն ու պատմութիւնն
այնպէս են դասաւորուել, որ լեզուն ամեն տեղ և առանց բա-
ցառութեան միմիայն նրա սեպչականութիւնն է դարձել։ Եւ
որովհետեւ լեզուն յատուկ է ամեն մարդու, այդ պատճառով և
մարդկութեան արտօնութիւնն է. միմիայն մարդս լեզու ունի»։
(Հերութեր) Մարդիկ թէկ տարբեր աստիճաններով են տիրապե-
տում լեզուին, սակայն այդ տարբերութիւնն էական չէ։ Ամեն
ազգ կարող է մի ուրիշ ազդի լեզուն ստվրել. մենք ամեն օր
տեսնում ենք օրինակներ, որ մարդիկ լիակատար կերպով տիրա-
պետում են օտար լեզուներին։ Այս բանում քաղաքակիրթ ազ-
գերն անպայման չեն գերազանցում բնական ազգերին. շատ
բարձր գիրք ունեցող վաղանգաներ խօսում են կիդու-ահելի,
ոմանք էլ արաբերէն. բազմաթիւ վանիամլեզիներ նոյն լեզուն
են սովորել։ Աջլիկայի արևմտեան եղրների վաճառաշահ կենդ-
րոններում բաւականին թուով նեղըսներ կան, որ երկու, նոյն
խոկ երեք լեզու են խօսում. կանագայի հնդիկների դպրոցներում
միսիօնարներին զարմանք է պատճառում այն հանգամանքը,
որ հնդիկ պատանիները մեծ դիւլութեամբ են սովորում անդ-
իերէն և ֆրանսերէն։

Լեզուի միջոցները, այսինքն հնչիւնն ու դրա հետ կցուած շարժմունքը, միմեանց շատ նման են ամբողջ երկրի վրայ և նոյն իսկ լեզուի ներքին կազմութիւններն էլ շատ չեն տարբերում միմեանցից: Կարելի է ասել, որ մարդկացին լեզուն պէկն է միայն արմատով, որ խորը տարածուած է մարդուն հոգու

մէջ, սակայն բաժանուած է բազմաթիւ և շատ տարբեր ճիւղերի ու սատերի: Կան անթիւ լեզուներ, որ ամեն մի աստիճանում տարբերում են միմեանցից. բազմաթիւ բարբառներ, քոր կամ դուստր լեզուներ, ինքնուրոյն լեզուատոհմեր փոփոխակի հնչիւններով լցնում են մարդկանց խրձիթներն ու անտառները: Մի քանի ազգեր կարողանում են մօտաւորապէս հասկանալ միմեանց. մի քանի լեզուներ էլ, թէև միմեանց այնքան մօտ չեն, սակայն հարեւանցի դիտողութիւնից լետոյ արդէն նմանութիւն են ցոյց տալիս. միւս կողմից էլ կան լեզուներ, որոնց նմանութիւնն այնքան աննշմարելի է, որ միմիայն գիտութիւնը կարող է որոշել: Եւ վերջապէս կան մեծ քանակութեամբ լեզուներ, որ ըստ երեսութիւն բոլորովին տարբեր են միմեանցից՝ ոչ միայն բառերով, այլ նաև կազմակերպութեամբ, արտայատիչ յարաբերութեամբ և նախադասութեան տարբեր կազմութեամբ: Սակայն այս տարբերութիւնները բոլորովին չեն համապատասխանում խօսողների հոգեկան զանազանութիւններին: Զանազան ընդունակութեանց տէր անհատները միւնչին բարբառն են գործածում, միւս կողմից էլ միւնոցն ընդունակութեանց և ուղղութեան տէր անհատները միմեանց չեն հականում: Այդ տարբերութիւնները չեն համապատասխանում նաև աշխարհագրական զանազանութիւններին և յաճախ չեն համապատասխանում նոյն խակ ցեղական տարբերութիւններին: Որչափ հեռու է բուն անդիմացոց անդիմերէն խօսող նեղոսը, նոյնչափ էլ հեռու է լեզուով բոլորովին մարբերուող չինացին Փոքր կղզիաբնակներից: Ազգերի հետազոտութեան տեսակէտից՝ լեզուի նշանակութիւնը բոլորովին այլ տեղ պէտք է որոնել և ոչ թէ լեզուների ազգակցութիւնն ապացոց համարել նաև ազգերի ազգակցութեան: Լեզուն միշտ և զլիսաւորապէս պէտք է համարուի մարդկութեան ամեն տեսակ բաղախակրական գործի կանիապայմանը: Լեզուն կարելի է անուանել մարդու առաջին և ամենակարևոր, այն, նոյն խակ որոշիչ գործիքը: Բայց այդ էլ նոյնչափ փոփոխական, որչափ մի որ և է այլ գործիք: Մի բառ կարող է դարերի ընթացքում շատ տարբեր նշանակութիւններ ստանալ, կարող է բոլորովին անյալտանալ

և դրան կարող է փոխարինել ուրիշ նոր հնարուած, կամ թէ մի այլ լեզուից վերցրած բառ: Լեզուն կարելի է գործիքի նման թողնել և նորից ընդունել: Միայն անհատներ չեն, որ մոռանում են խրեանց մայրենի լեզուն, ինչպէս օրինակ տասերկու տարեկան հասակում Աւտրալիայի բնիկ դարձած ֆրանսիացի Նարգիզ Պելլետէրը և Ակկա Միանիսը, որ մանկական հասակում իտալիա բերուեց և մի քանի տարուայ ընթացքում բոլորովին մոռացաւ իւր մայրենի լեզուն, ամբողջ ազգեր թողնում են խրեանց լեզուն և ընդունում են մի ուրիշ լեզու, ինչպէս որ մարդ փոխում է իւր զգեստները: Կան քաղաքակրթութեամբ ձեռք բերուած ուրիշ յատկութիւններ, որոնք լեզուից աւելի յարատեւ են, օրինակի համար անասնաբուծութեան դիտութիւնը: Զանազան ազգերի կրօնները համեմատելով՝ շարունակ նկատում ենք, որ թէև անունները փոխում են, սակայն իրը միշտ նոյնն է մնում. այս ամենալաւ ապացուց է, որ լեզուն համեմատելով ուրիշ ազգագրական յատկանիշների հետ, ամենից շատ է փոփոխութեան ենթարկում: Ազգերի կեանքը ճանաչողների համար այս ինքն ըստ ինքեան համականակի երեսութիւն մասին մենք այս քան երկար չէինք կանգ առնի, եթէ մինչև ալժմս էլ շարունակ լեզուաբանական դասակարգութիւնները մարդաբանական—ազգագրականի հետ չշփոթէին: Զէ որ նոյն խակ Լեպուիուսի նման մի լեզուագէտ հեղինակութիւն կարեւոր է համարել բոլոքել այն ըմբռնման զէմ՝ որպէս թէ ազգերն ու լեզուները՝ ծագմամբ և ցեղակցութեամբ համապատասխանում են իրար, ինչպէս որ շատերն ենթարկում են ցայտմ: Համականակի է, որ այսիսի խորագննին հայեցողութեան շնորհիւ՝ ոչ միայն կրցնում են խրեանց արժէքը, այլ բոլորովին մերժելի են գառնում: Հնըդկագերմանական ցեղ, սեմիտական ցեղ, բանտու ցեղ և այն գաղափարները, որովհետեւ դրանք սխալեցնում են մեզ և որչափ որ անհամեմատ մեծ արժէք և ազգեցութիւն ունեցած լինին լեզուները՝ իրեւ մարդկութեան հոգեկան զարգացման առաջին նեցուկներ, այնչափ ևս անհամեմատ չնչին է դրանց նշանակութիւնը՝ մարդկութեան ներքին տարբերութիւններն

ապացուցանելու համար: Մինչդեռ բուշման վազրենի և որսորդ ժողովուրդը խօսում է հարուստ և նուրբ կաղմութիւն ունեցող լեզուով, չինացիները, որ Ասիայի ամենաբարձր և ամենայարատև քաղաքակրթութեան ծաղկեցնողներն են նղել, խօսում են իւրեանց չորսհարիւրյիսուն անփոփոխ մնացող արմատական բառերով: Այսպիսի հանդամանքներում թէւ կարելի է լեզուների մի ճիւղագրութիւն կազմել, սակայն թող չհաւատայնեն մեղ, որ դրանով մարդկութեանը մի որևէ օգուտ բերած կլինին, երբ տեսնում ենք, որ բարձր զարդացման տէր աղգերը խօսում են ամենասոր կաղմութիւն ունեցող լեզուով և ընդհակառակը՝ ստորին զարդացումն ունեցող աղգերը խօսում են վսեմ կաղմութիւն ունեցող լեզուով:

Լեզուի ընդհանրացումը մի պարզ հետևանք է այն իրաղութեան, որ մարդկութեան բոլոր մասերն այնչափ երկար տեսականութիւն են ունենում, որ կարողանում են իւրեանց լեզուական ընդունակութեանց սաղմերն այն աստիճանի զարդացման հասցնել, որ մենք արտայախտում ենք լեզու դաշտաբարով: Միայն չէքէլի «ալալի»ն չէ, որ վազուց արդէն մոռացութեան է տրուել. նաև նրանք, որ տնկատար խօսելով, թռոժութեան կ հետևեցին դրան, չկան ալլես: Սակայն ընդհանրացումն այսուղ աւելի հեռուն է հատնում. այժմեան լեզուների մէջ կաղմակերպութեան աստիճանների տարբերութիւնները շատ չնչին են: Այս տեսականութիւն լեզուն նմանում է որոշ ընդհանրական արուեստների և գործիքների, որոնք բնական աղգերի մօտ աւելի վատ չեն, քան քաղաքակրթ աղգերի. միթէ նոյն կերպ չին ընդհանրանում կրօնական գաղտիարները, արուեստներն ու հասարակ անօթները: Լեզուի հիմքն է հազրդակեցութեան բնական ձևումը. այդ պատճառով և լեզուն չէ արդարիք անհատական մարդու ինչպէս հասարակութեան, նոյնպէս և պատմութեան մէջ: Հաղորդակցութեան համար և միշտովի ենք ձեռք բերում մեր սկզբնական ծանօթութիւնները. հաջորդակցութիւնն է զարդացնում և ճախացնում լեզուն, նաև ստեղծում լեզուի միութիւնը՝ սահմանափակելով բարբառների փոփոխութեանց բաղմանալը: Մինք խօսում ենք, որպէս

զի ուրիշները հասկանան մեզ. լսում և սովորում ենք, որպէս զի հասկանանք. մենք խօսում ենք այն, ինչ որ հասկանալի է ուրիշների համար և ոչ թէ միայն մեզ համար: Այս տեսակէտից լեզուն ամենապարզ և ամենաընդհանուր կերպով ցոյց է տալիս ընկերական կեանքին անհատականը սահմանափակող ազգեցութիւնը:

Այժմեան բոլոր լեզուները հին են ըստ ինքեան, կամ թէ ծագում են հին սերունդներից. բոլորն էլ կրում են պատմական զարգացման հետքերը, բոլորն էլ շատ հեռու են սկզբնական ծագումից և դոցա նշանակութիւնը բացատրելու համար լեզուաբանութիւնն արդէն մի կողմն է ձղել «Վառվառու»-ի տեսութիւնը: Լեզուն կենդանի մարդու շարժուող շրթունքներից արտահոսելով և մօտիկ մնալով հոգուն, որ կեանքի արտայախտութեանց սկզբնակէտն է, կենդանութեան դրօշն է կրում—յարատե փոփոխութեանց է ենթարկւում: Թէև նա աւելի երկար կեանք է ունենում, քան այդ լեզուով խօսող սերունդները, բայց այնուամենալին ասպրում է նրանց հետ և փոփոխութեանց ենթարկւում: Եւ վերջապէս լեզուն էլ է մեռնում: Հին եղիպտական լեզուն եղիպտական քաղաքակրթութիւնից աւելի վաղ մեռաւ, հին յունարէնն աւելի երկար տեսողութիւն չունեցաւ, քան յոյների ինքնուրոյն գոյութիւնը. Հառվիմի հետ ընկաւ նաև լատիներէնը: Այսոեղ լիշտած երեք լեզուներն անզաւուի չմեռան. դրանք շարունակում են իրենց կեանքը կոպտէն, նոր յունարէն և րոմանական լեզուների մէջ զատ հաղիւ. է պատօնհում, որ լեզուներն անժառանգ մեռնին, ինչպէս օրինակ զոթականը:

Միւնոյն ժամանակ իւրաքանչիւր լեզուի կեանքի ընթացքում տեղի է ունենում աստիճանաբար մահացումն և վերանորագութիւն զանազան ձևերով: Բառերը հնանում, գործածութիւնից դուրս են ձգւում, կամ թէ չէ տարում ևն միմիսոյն քահանաների և բանաստեղծների բերանում: Ապացուցուած է, որ 1611 թուից սկսած անդիմերէն լեզուի մէջ հնացել են երեք հարիւր ութուուն և ութը բառ: Դրա վրայ պէտք է աւելացնել նաև արտասանութեան, ողղագրութեան և մրտ-

քե բազմաթիւ փոփոխութիւնները։ Բնական ազգերի մտքերով աղքատ կեանքում յաճախ պատահում է, որ շարունակում են գործածել այնպիսի խօսքեր, որոնց նշանակութիւնը փաղուց արդէն անհասկանալի է դարձել։ Այսպէս օրինակի համար՝ կրուի միջոցին մուրտի հրաւիրող Փիդշին աղաղակում է դէպի իւր հակառակորդը. «Sai tava; sai tava! Կա յաւ մայ կա javia a bure!» («Կտրիր, կտրիր, տաճարն ընդունում է»)։ Բայց ոչ ոքի յայտնի չէ այդ խօսքերի միտքը, որ ամենքի կարծիքով շատ հին է։ Բայց միւս կողմից՝ թէ ինչպէս նոր իրերի հետ ի միասին նոր բառեր և դարձուածքներ են մտնում լեզուի մէջ, պարզ ցոյց տուեց երկաթուղիների և շոգենաւների գարաշրջանը, այդ միջոցով բոլոր քաղսուքակրթուած աղգերի լեզուները հարիւրառը նոր բառերով ձոխացան։ Ազանգեհները պնդում են, որ շատ խօսքեր, որոնք գործածական էին իրենց նախնիքների ժամանակ, այժմ այլեւս չեն դորձաւում։ Ի՞նչե՞ն ընդհանրապէս ընդունում է աֆրիկական լեզուների արագ փոփոխումն, իսկ Լեպուտուը մեծ արժէք չէ տալիս այդ լեզուների բառարանին և ցոյց է տալիս նրանց նոյն իսկ համաձայնական կանոնների աչքի ընկնող փոփոխութիւնները։ Հարկաւ փոփոխութիւններն աւելի մեծ են այն լեզուների մէջ, որոնք զիր չունին, որովհետև զիրը, կարելի է ասել, քարացման ազգեցութիւն է ունենում լեզուի վրայ։ Եւ եթէ իրաւացի համարենք լեզուարանների պնդածը՝ թէ լեզուի կեանիքը եռում է ոչ թէ գրաւոր լեզուի, այլ բարբառերի մէջ, և թէ բարբառների մէջ են նիրհում նոր լեզուների կազմութեան սաղմերը, այն ժամանակ կհասկանանք թէ ինչպէս կարելի է վերջապէս լեզուներին վերագրել այն փոփոխական յօրինուածութիւնը, որ յատուկ է բոյսերին և կենդանիներին։ Մինչդեռ զիրը ձգտում է մի որոշ լեզու հաստատելու, միւսոյն ժամանակ զիր ունեցող ազգերի հաղորդակցութեան նպատակն է՝ մի բարբառի կամ լեզուի տարածութեան շրջանն ընդարձակել։ Կարելի է հաստատ ասել, որ զիր չունեցող աղքերը միայն բարբառներով են խօսում, մինչդեռ լեզուն գործ են ածում միմիայն զիր ունեցող ազգերը։ Սակայն նոյն է լե-

զուի և բարբառի մէջ եղած սահմանը։ Լեզու ասելով այսօր հասկացում է մի բարբառ, որ զրի շնորհիւ հաստատուն կերպարանք է ստացել և հաղորդակցութեան միջոցով՝ ընդարձակ ծաւալով տարածուել։ Գրականական լեզուն առհասարակ աւելի արուեստական, քան թէ ընական ձևն է խօսակցութեան։ Բարբառները թւում են մեզ տւելի աղքատ, աւելի պակաս հաստատուն և կանոնաւորած, այդ պատճառով և աւելի միծ չափով ենթակայ փոփոխութեան, նոյն իսկ կամայականութեան և այդպիսով՝ ստորագաս լեզուներ։ Բայց այդպէս են թւում զրանք մեզ՝ միայն երբ համեմատում ենք զրանցը զըրաւոր լեզուների հետ։ Արդեօք բազմալեզուեան կօլխիսի երեք հարիւր ցեղերից—որոնց համար հռովմայեցիները, ըստ Պիկնիոսի, հարիւր երեսուն թարգման էին զործածում—որն էր լեզու գործածում և որը բարբառով խօսում։ Այդ աստիճանի վրայ միայն բարբառներով են խօսում, իրաքանչիւր ցեղ ունի իւր յատուկ բարբառը, և եթէ նոր յունարէն լեզուին հօթանասուն բարբառ է վերագրում, այլաս այնքան էլ զարմանալի չպէտք է թուան մեզ կօլխիսի բազմաթիւ բարբառները։ Թէ ինչն է լեզու առաջ բերում և բարբառներ պահպանում շատ լաւ կերևայ, եթէ համեմատենք բիրմանական լեզուի ընդարձակ ծաւալուիլը Բիրմայի, Պեզուի և Արականի խտաբնակ, հաղորդակցութեամբ հարտաս երկրներում և Վելին իրաւագիի հենց զրանց մերձակայ լեռնոտ երկրներում, որտեղ Գրանց միմիայն Մանիպուրի շրջանաւմ տասներկու բարբառներ յայտնագրծեց և որտեղ յաճախ երեսուն կամ քառասուն ընտանիք խօսում են իրենց յատուկ ու միւս ընտանիքներին անհասկանալի բարբառով։ Այս մաշտաբով պէտք է չափուին այն տեղեկութիւնները, որ յաճախ փոքր ազգերին վեշագրում են չափից գուրս շատ լեզուներ։ Բուշմանների խօսած բարբառների բազմատեսակաւթեան և նոյն իսկ միմիայն բլրակների շղթայով կամ թէ գետի հոսանքով միմեանցից բաժանուած խմբերի լեզուների տարբերութեան պատճառով Մաքքառը համարում է քաղաքակրթութեան այն աստիճանը, որի վրայ զտընում են զրանք. ոչ ընդհանուր կենդրոն ունին զրանք և ոչ

քնդկանուր շահ. կարճ ասելով՝ դրանք չունին այն միջոցները, որ նպաստում են լեզուի գործածութեան հաստատուելուն։ Հետաքրքրական երևոյթ է՝ թէ ինչպէս «բեչուան-բուշման-ներ»-ի լեզուն, (բալալաների, որոնք իրեւ Պարիա ցեղին պատկանող բեչուանների մէջ են ապրում), շատ փոփոխական և ցեղիցեղ տարբեր յատկութիւններ արտայատող գաւառաքարբառ. է, մինչդեռ բեչուանները, դրանց իշխողները, հրապարակային խորհուրդներում և յաճախ նաև խմբական խօսակցութիւնների և երգերի միջոցին մաքուր պահպանում են իւրեանց զիչուանան և սերնդէ սերունդ շարունակում։

Սակայն սխալ կլինի եթէ նշանակութիւն չտրուի այն լեզուին, որ միւնոյն ժամանակ պահպանողական ոյժ է ներկայացնում, և ընդհակառակին առանց քննութեան ընդունուի շատ հեշտութեամբ փոփոխուող լեզուի ձևերը։ Ճվախֆորտի շնորհիւ արդէն գիտենք, որ Զռուր և Բելլանա ցեղերը՝ չնայելով իրենց տարածական բաժանմանը, համարեա թէ անփոփոխ են պահել շիլտուկ լեզուն։ Ի նկատի պէտքէ ունենալ նաև հեռաւոր բանտու բարբառների չնչին տարբերութիւնները։ Մենք կարող ենք միայն իրեւ գիտողութեան կոպիտ սխալ ընդունել, որ Վալդէկը, ինչպէս որ նա գրում էր Յօմարդին Պալէնքէ երկրից, 1833 թ., այլևս չէր կարողանում օգտուել այն բառայուցակից, որ կաղմաւել էր 1820 թույլու ինտոյ միայն։

Սակայն այնուամենաչնիւ միշտ կարելի է իրեւ կտնոն ընդունել, որ որչափ միծ է մի ազգ, որչափ սերտ նրա հաղորդակցութիւնը, որչափ հաստատուն է կաղմակերպուած նրա հասարակական բաժանմունքը, որչափ սերտ միութիւն են կաղմում նրա սովորութիւններն ու հայեացքները, այնչափ ևս անփոփոխ է նրա լեզուն։ Հրապարակական ժողովներում առած ժողովրդական երգերը, ազգային օրէնքներն ու պատգամախօսութիւնները փոքր չափով նոյն աղղեցութիւնն են ունենում, ինչ աղղեցութիւն որ ունի գիրը։ Թրանք որոշ սահման են զնում բարբառների բնական բաղմանիւղ ծաւալմանը և տեսականութիւն են տալիս լեզուի այնպիսի կաղմակերպու-

թիւններին, որոնք առանց այդ արտաքին աղղեցութիւնների շատ վազանցուկ կլինէին։

Այս իրողութիւնները պարզ ցոյց են տալիս՝ թէ որտեղ պէտք է որոնենք լեզուների զարգացման ճշմարիտ և էական տարբերութիւնը։ Յարատեւ աճումը բարձրացնում է թէ քաղաքակրթութեան և թէ լեզուի արժէքը։ Այն լեզուն կհասնի զարգացման ամենաբարձր աստիճանին, որն ընդունակ է ամեն տեսակ արտայալութիւնների՝ առանց միտքը մթնացնելու և որը թէ վերացական և թէ իրական զաղափարներն արտայալում է ամենալավագատար, ամենահասկանալի և ամենակարծ ձևերով։ Այսուղից կարելի է հետևեցնել նաև, որ լեզուի և քաղաքակրթութեան զարգացման մէջ դուզակութիւն կալ, որովհետեւ ամենաբարձր գործութեանը պէտք ունի և ամենազնուածը է չէրացների արդայացութեանը։ Ուրեմն ամենաբարձր քաղաքակրթութեանց ներկայացուցիչ ազգերը, առանց լեզուի կազմութեան տարբերութեանը վնասելու, կարող են խօսել այնպիսի լեզուներ, որոնք արժանի են «գերազանց գործիք» կոչմանը։ Գերազանց գործիք սաելով այստեղ չենք հասկանում այնպիսի գործիքներ, որոնք իրենց որոշ նպատակին ամենալաւ կերպով են հասնում, որովհետեւ աւտորալիացիների հասարակ պահանջների համար լիակատար կերպով բաւականեն իրենց աղքատ լեզուները։ Լեզուները մենք համարում ենք իրեւ առանձին «յօրինուածութիւններ» իրենց յատուկ զարգացմամբ։ Ինչպէս որ մենք մեքենական գործիքների գասակարգում գութանն աւելի բարձր աստիճանի վրա ենք գնում, քան թէ կացինը—թէ և վերջինս հասարակ պահանջներին նոյնչափ բաւարարութիւն է տալիս, որչափ առաջինը մեծ պահանջներին—աղղպէս էլ աւելի մեծ նշանակութիւն ունին մեզ համար հնդկադեմանական ցեղի ճկուն, պարզ և ճոխ լեզուները, քան թէ բանտու ցեղի աղքատիկ լեզուները։ Թէև մի աղղի լեզուն համարում է մասշտաբ նրա քաղաքակրթութեան աստիճանի, սակայն միայն զգուշութեամբ պէտք է լեզուի զարգացումից եղալիացնել նաև քաղաքակրթութեան զարգացումը, որովհետեւ շատերի թւում, լեզուն

միայն մի արտայայտութիւն է և ունի իւր յատուկ կեանքը: Նա մանաւանդ որոշ գաղափարների լեզուական գործածութիւնը չի կարելի իբրև այդպիսի մասշտաբ ընդունել: Համարելն ու հաշուելը հարկաւ շատ կարեռ բաներ են, որոնց զարգացումից կախումն ունի ազգերի հոգեկան և դրանով նոյնպէս քաղաքակրթութեան զարգացման մեծ մասը: Ինչ վերաբերում է այն խնդրին, որ իբրև թէ բնական ազգերից շատերն անընդունակ են երեք կամ հինգ թուից աւելի մտածելու, պէտք է ընդհանրապէս ուշադրութիւն դարձնել այն հանգամանքի վրայ, որ մի որևէ գործիքի անբաւարար լինելուց դեռ ևս չեկարելի եղակացնել, թէ շարժուղ ձեռքն է ընդունակութիւնից զուրկ: Ճարունակ կրկնում է թէ՝ որովհետև այդ ազգերի լեզուներն երեքից աւելի թիւ արտայայտող բառ չունին, ուրեմն և այդ ազգերն երեքից աւելի չեն կարաղ համարել: Քլէկն իրաւամբ նկատում է, որ եթէ այս եղակացութիւնը ճիշտ համարենք այդ դէպքում պէտք է ընդունենք, որ ֆրանսիացիք անընդունակ են տասից կամ քսանից աւելի համարելու, որովհետև զործ են ածում dix-sept կամ quatre-vingt թուերը: Գերմանական լեզուն էլ չունի տասը հազար թուի համար առանձին բառ ինչպէս որ ունի հին յունարէնը. չունենք նոյնպէս հարիւր հազարի (լալ) և տասը միլիոնի (կրօր) համար առանձին բառեր, թէև հնդկական լեզուների մէջ կան այդ գաղափարները: Կուբիացիներն իրենց լեզուի մէջ ունին մինչև քսան թիւը, աւելի մեծ թուերի համար զործ են ածում արաբական բառեր, սակայն հարիւրի համար ունին նոյն հոգեկան անընդունակութեամբ պարապում, իրենց հօտերի համար խիստ մեծ քանակութեամբ բառեր ունին թուի, դեղձան, սպիտակ, խայտարդիտ ու այն գոյների համար: Ճերէրօն խղճի դէմ բան չէ համարում մարդաւետնի և երկնքի գոյնը մինչունին բառով արտայայտելու, սակայն նա հոգեկան անընդունակութեան մեծ ապացոյց կհամարէր այն հանգամանքը, եթէ որ մէկը տարբեր կովերի թուի գոյնի զանազան աստիճանաւորութիւնները մէկ բառի մէջ ամփոփէր: Հետազոտուած է, որ սամօեղներն իրենց արագնթաց եղջերուների գորշ և թուի գոյների աստիճանաւորութիւնները տարբերելու համար տասն և մէկ տասն և երկու բառ ունին: Կոյնպիսի բարձր զարգացման է հասել մալայիան և պօլինեզեան կղղիների բնակչաց նաւական բաւագիտութիւնը: Սակայն միւս կողմից տեղի ունին և դրա հակառակ երկոյթները, ոչ թէ միայն բնական ազգերն են տարբեր գոյների համար մի բառ զործածում, այլ նոյն իսկ բարձր զարգացման տէր ազգերի լեզուների մէջ ևս նկատելի է բարձր զարգացման տէր ազգերի լեզուների մէջ ևս նկատելի է զարգացման գեղցուկը յաճախ մանուշացի թերութիւնը. գերմանական գեղցուկը յաճախ մանուշացի կազոյն ըմբռնում է թուիսի տեղ, իսկ չապօնացին կապուտը կանաչի տեղ:

Ների աստիճանաւորութեանց թուին, սրոնք ցանցալին թաղանթի շնորհիւ ի գիտակցութիւն են գալիս: Որչափ որ սխալ է այդ ենթադրութիւնը, այնչափ ևս հրահանգիչ է լեզուի իսկական էութիւնն ըմբռներու համար այն հետազոտութիւնը, որ շատ կոշտ կոպիտ բնական ազգեր, արտասովոր մեծ քանակութեամբ գոյներ արտայատող բառեր ունեն: Այդպիսի թէ ճոխութիւնը և թէ աղքատութիւնը ծագում են տհասութիւնից: Ինչպէս որ յաճախ միւսնոյն անունը գործ է դրում զանազան գոյների համար, նոյնպէս և ամենատարբեր անունները գործ են ածւում միւսնոյն գոյնի համար: Այս ուրեմն խառնաշփութեան ճոխութիւն է և ոչ թէ բարձրագոյն զարգացման նշան: Այս արտասովոր ճոխութեան առաջացման եղանակի վրայ լոյս է սփռում այն իրողութիւնը, որ այն աֆրիկացի նեղրուները, որոնք, ինչպէս հերէրօները և դինկաները, սիրով են անասնաբուժութեամբ պարապում, իրենց հօտերի համար խիստ մեծ քանակութեամբ բառեր ունին թուի, դեղձան, սպիտակ, խայտարդիտ ու այն գոյների համար: Ճերէրօն խղճի դէմ բան չէ համարում մարդաւետնի և երկնքի գոյնը մինչունին բառով արտայայտելու, սակայն նա հոգեկան անընդունակութեան մեծ ապացոյց կհամարէր այն հանգամանքը, եթէ որ մէկը տարբեր կովերի թուի գոյնի զանազան աստիճանաւորութիւնները մէկ բառի մէջ ամփոփէր: Հետազոտուած է, որ սամօեղներն իրենց արագնթաց եղջերուների գորշ և թուի գոյների աստիճանաւորութիւնները տարբերելու համար տասն և մէկ տասն և երկու բառ ունին: Կոյնպիսի բարձր զարգացման է հասել մալայիան և պօլինեզեան կղղիների բնակչաց նաւական բաւագիտութիւնը: Սակայն միւս կողմից տեղի ունին և դրա հակառակ երկոյթները, ոչ թէ միայն բնական ազգերն են տարբեր գոյների համար մի բառ զործածում, այլ նոյն իսկ բարձր զարգացման տէր ազգերի լեզուների մէջ ևս նկատելի է բարձր զարգացման գեղցուկը յաճախ մանուշացի կազոյն ըմբռնում է թուիսի տեղ, իսկ չապօնացին կապուտը կանաչի տեղ:

Կարիքն է որում լեզուի հարստոթիւնը։ Եւրոպայի այժմեան ամենաքաղաքակրթուած ազգերի համար իրեւ կանոն ընդունուած է, որ միջին զարգացման տէր անհատներն իրենց լեզուի բառարանի միայն շատ քիչ մասն են խսկալէս գործածում։ Անլինական լեզուն մօտ հարիւր հազար բառ ունի, սակայն անզիւացի երկրադործն ըստ ստորականին բաւականանում է երեք հարիւր բառով։ Ուր որ բարձր քաղաքակրթութեան տէր ազգերը շիւում են քաղաքակրթութեան ստորին աստիճանի վրայ եղող ազգերի հետ, վերջիններիս լեզուն դիւրութեամբ աղքատանում է, որովհետև ահագին քանակութեամբ բառեր է փոխառնում առաջիններից։ Սակայն այդ դէպքում լեզուի աղքատանալուց դեռ ևս չի կարելի եղրակացնել նաև քաղաքակրթութեան աստիճանի անկումը։ Իրեւ օրինակ կարելի է առաջ բերել բազմաթիւ արաբական բառերով բարդուած նուրիական լեզուն։ Արևի, լուսնի և աստղերի համար նուրիացիններն առանձին բառեր ունեն, սակայն ժամանակ որւշող գաղափարները՝ տարի, ամիս, օր, ժամ՝ փոխ են առել արաբական լեզուից։ Չուր, ծով և գետ գաղափարները նրանք արտայալում են միջիայն էսոսի բառով, սակայն նեղոսը կոչում է Տօսոի։ Տեղական բոլոր ընտանի և վայրենի կենդանիների համար նրանք ունին սեպհական բառեր, իսկ տների և նաւերի շինութեան վերաբերեալ բոլոր բառերն արաբերէն են։ Աստուած, հոգի, ստրուկ, ազգակցութիւն ցայց տուող գաղափորները, մարմնի մասերը, զէնքերը գաշտավին պտուղները և ինչ որ վերաբերում է հաց պատրաստելուն—բոլորն արտայալում են նուրիական անուններով։ Իսկ ընդհակառակը՝ ծառայ, բարեկամ, թշնամի, տաճար, աղօթել, հաւատալ, կարդալ բառերն արաբերէն են։ Բոլոր մետաղներն արաբական անուններ են կրում, բացի երկաթից։ «Նրանք հարուստ են բերքէր լեզուով, աղքատ են արաբերէնով»։

Թէ չըս-է իսուառ-րդնելը որ աստիճանի հարստացնում են լեզուներն և նպատակայարմար դարձնում՝ եւրոպական լեզուների մէջ ամենից լաւ ապացուցանում է անզիւերէնը, որի մէջ համարեալ թէ նոյն չափով գերմանական ծաղումն ունեցող

բառեր կան, որչափ ոռմանական։ Վատահամբաւ օտար բառերից շատերն այնուամենայնիւ անհրաժեշտ են։ Յիշենք միայն թէ որպիսի յաւելուածների պէտք ունեցան աֆրիկական, աւստրալիական և ամերիկական լեզուները, որպէս զի միսիօնորները կարող լինէին Սուրբ Գրքի նոյն խոկ հասարակ պատմութիւնները և քրիստոնէական հաւատի հիմնական դրուածները Թարգմանել։ Իւրաքանչիւր քարոզութեան շրջանում միմյայն Աստուած գաղափարի թարգմանութիւնն ունի իւր դրուար և սխալներով հարուստ պատմութիւնը։

Մենք զանց ենք առնում այն ծանր նեղութիւնները, որ կը ում են բնութիւնից լեզուազուրկները, համըները, լիշեցնում ենք միայն այն հետաքրքրական լրողութիւնը, որ Կազէմբէսի պետութեան մէջ Լիւնգստոնը գտաւ մի խուլ ու համր, որ ձիշտ նոյն նշաններով էր խօսում, ինչ նշաններ որ գործ են ածում եւրոպաբնակ անկիրթ խուլ ու համըները։ Ինքն ըստ ինքեան հասկանալի է, որ նշաններով և ռէմագնետուրով խօսելն այնքան աւելի զործածական է գառնում, որչափ աղքատ ու պարզ է խսկան լեզուն, որչափ աւելի քիչ բազմազան ու վերացական են այն գաղափարները, որոնք պէտք է արտայալուին։ Յաճախակի զործածման շնորհիւ այս տեսակ լեզուն էլ կարող է այնպիսի կատարելագործութեան հասնել, որ մենք չենք էլ կարող երևակայել՝ չնայելով որ հաղարաւոր բառեր ունինք պատրաստի։ Քաղաքակրթութեամբ աղքատ ազգերն ամենահամարակ նշաններով ու դիմագծերով աւելի շատ բան են հասկանում, քան թէ մենք։ Խորամանկ և միւնոյն ժամանակ լուանեաց հնդիկների մէջ զարգացել է նշանացի խօսակցութիւնը և իրկական «ազգանշանների սխտեմի» վերածուել։ Մալլէրին իւր հնդիկների նշանացի և դիմագծերով խօսելու մասին դրած մեծ աշխատութեան մէջ առաջ է բերում մի շարք գլխաւոր նշաններ, որոնց բարդութիւններից կազմւում են բազմատեսակ նախագասութիւններ ու մտքեր։ Սրանց թւում կարելի է զամել նաև հրգեհի և ծուխի աղղանշանները, Գոմերայի սրնդի լեզուն, որով հովիւները միմեանց հետ զրուցատրում են հետաւոր տարածութիւններից, պատուէրներ են տա-

կիս միմեանց և այլն: Ամերիկայի հնդիկները յաճախ մի ձեռքի վրայ դաշած կրում են մի լիակատար մասշտար՝ զանազան աստղաբաժանումներով: Սրանք արդէն գրի սկզբնական նշաններն են:

Երկրիս բոլոր ազգերն ունին գաղափարները տեսանելի դարձնելու հասարակ միջոց: Այդ պարզ միջոցն է պատճեռգիրը կամ նշանագիրը: Այդ երկուսն էլ յայտնի են բոլոր ազգերի մասունքներին: Մեր տղայքն էլ են գործ ածում պատկերագիր՝ մինչդեռ նրանք իրենց չափած ընկերոջ տան դռան վրայ իշլու են նկարում: Սակայն չափահանները, որոնք անտեղեակ են գրի աւելի բարձր տեսակին, կարողանում են միմեանց մօտշարուած պատկերներով աւելի արտայատել՝ քան առանձին գաղափարները: Երբ այս պատկերներն ընդհանուր համաձայնութեամբ դաշնագրական ընաւորութիւն ստանալով՝ աւելի ընդարձակ շրջաններին հասկանալի են լինում, դառնում են պատկերագիրը: Սակայն այդ նշանները կարող են մի- այն համաձայնութեամբ սրոշուած մի նպատակի ծառայել, ինչպէս օրինակ սեպհականութեան նշանները կարող են մի- այն արտայատել այն իրողութիւնը, որ այն առարկան, որ նը- կարուած կամ փորագրուած է, պատկանում է մի որոշ մար- դու: Ճատ նշաններ, որ դրուագի բնաւորութիւն ստանալով՝ մօտենում են արուեստին և հաղիւ են ճանաչւում, կարող են առաջացած լինել այդպիսի սեպհականութիւն ցոյց տուող նը- շաններից կամ թէ նպատակ ունին մի որմէ գաղափար մեկ- ներ, ինչպէս օրինակ մի որոշ ուղղութեամբ գնացող ոտքը կամ նշան ցոյց տուող ձեռքը՝ ճանապարհ են ցոյց տալիս: Այդ նշաններն արդէն այն սահմանի վրայ են, որտեղից հասնում են աւելի բարձր զարգացման ասոիթամնին: Գրի բոլոր բարձր տեսակներն առաջացել են պատկերագրից: Գրի այդպիսի ծագումը այսօր ևս նկատելի է Մեքսիկայի և Եգիպտոսի մեկնազրերի մէջ, բայց չինական գրի մէջ աննշմարնի է դարձել: Սակայն դրա հետքերն ամեն տեղ կարելի է գտնել: Կոյն խոկ բւեկուա- գրերի մէջ նկատում են այն պատկերագրերի հետքերը, որից առաջացել են: Եգիպտական մեկնազրերի մէջ նկարուած եղը

կամ աստղը ցոյց է տալիս առարկան, բայց նոյնպէս և որոշ հնչիւններ. այս հնչիւններ արտայալող նկարները գոյութիւն ունին նոյն խոկ ամենահին, Քրիստոսից երեք հազար տարի առաջ գրուած արձանագրութիւնների մէջ: Մեքսիկայի պատկերագրերի մէջ նոյնպէս խառը նկարուած են իր և հնչիւն արտայալող նշաններ: Չինացիների միավանկանի լեզուն, որ միենոյն վանկով տարբեր բառեր է արտայալում, հարկաւ գործ է ածում հազիւ նշմարելի՝ իր ցոյց տուող նշաններ, որպէս զի որոշէ ձայնական վանկանիշը: Ընդհակառակ ջա- պօնացիք՝ իրենց բաղմավանկ և ձայնական զրութեան աւելի յարմար լեզուի համար՝ չինական տառերից կազմեցին մի խ- կական ձայնական զիր: Նոյնն աւելի հաստատուն կերպով արին վիւնիկեցիները՝ եղիպտական պատկերագրից գուրս թողնելով աւելորդ իր ցոյց տուող նշանները և ընդունելով միմիայն հըն- չիւններ զրելու համար կարևոր մեհենագրերը: Փիւնիկեցինե- րի տառերի անունները վերցրին լոյները և ապա կազմեցին արևմտեան երկրների բոլոր «ացբուբեն»-ները: Այսպէսով պատ- կերագրի բաղմատեսակ սկզբնաւորութիւններից առաջացաւ տա- ռադիը՝ երկրի միայն մի վայրում. և այս գիրն եղաւ մարդ- կային մտածողութեան ամենանշանաւոր գործիքներից մէկը, ամենաճկունը, բոլոր լեզուներին յարմարուող, հեռագրի և սը- զագրութեան գործածման միջոցին ամենահամառօտագրու- թեան հասնող տառագիրը: Տառագրի գիւտի շնորհիւ մարդ- կութեան զարգացման ընթացքը մի արտաքոյ կարգի նշանա- ւոր քայլ արաւ. որովհետև զիրը հաստատելով և ապահովե- լով աւանդութիւնը, հաստատեց և ապահովեցրեց նոյն խոկ քաղաքակալութութիւնը, որի էութեան մէջ գոյնում ենք իրեւ կենդանի, կարելի է ասել, հոգեսր միջուկ՝ աւանդութեան վը- րայ հիմնուած սերունդների կապակցութիւնը:

Այսպէս ուրեմն՝ այն լեզուները միայն կհասնեն, զարգաց- ման ամենաբարձր աստիճանին, որոնք ընդունակ են մտքերն արտայալու պարզ, կարճ և հասկանալի ձևերով:

Ամենաբարձր քաղաքակալութութեան համար անհրաժեշտ է

ամենաբարձր զարդացման ընդունակ մի լեզու և ընդհակառակ՝ լեզով ամենաբարձր զարդացման համար ևս կարեօք է ամենաբարձր քաղաքակրթութիւնը:



V.

Կ Ր Օ Ն

Բնական աղգերի հրժանակ էւ մասնաշնորհն հետազոտութիւնը գիտար է, որովհետև նրանք վարանելով են տեղեկութիւններ տալիս իրենց մտածած բարձրագույն էակի մասին. շատ անդամ էլ այդ տեղեկութիւնները լինում են անկատար կամ թէ խաբելու մտքով հաղորդուած: Բնական աղգերը բոլորովին գաղափար չունին պարզ միաստուածութեան մասին: Փրանց մտաւոր կեանքը ոչ թէ միայն բաղկացած է անորոշ ցնորական պատկերներից, անկապ և թիւր է, այլ գուրկի է նաև մտքերի սերնդէ սերունդ հաղորդուելով զարդանալու այն յատկութիւնից, որ նախորդ սերունդների մտքերը կապակցում է ներկայ սերունդների մտքերի հետ: Եթէ կան այդ աղգերի մէջ կրօնական գաղափարներ, դրանք էլ յսճախ յախոնի են միայն ազգի մի քանի աւագներին, որոնք նախանձախնդրութեամբ պահպանում են: Վերջին հանդամանքից դուք ևս՝ նրանք երկիւղ կրելով յախոնելու իրենց կրօնական գաղտնիքները, շատ կցկտուր և խեղաթիւրուած տեղեկութիւններ են տալիս:

Այդ պատճառով և ուետս և սգո-շահակ բնական աղգերի հրժանակ նախադպացումներին և մասպատճեներին նշնչուութեան պահուածութեան մասին: Նրանց հոգեւոր ձգտումներն էլ միմիայն դէպի կեանքի գործնական նպատակները չեն ուղղուած. նրանց կրօնը միւնոյն ժամանակէ և' փիլիսոփայութիւն, և' գիտութիւն, պատմա-

կան աւանդութիւն և՛ բանաստեղծութիւն։ Յամենայն դէպութէտք է շատ բան ենթադրել և դեռ շատ հետափուզիկ։ Սակայն նաև խական կրօնական խնդիրներում չպէտք է առաջնորդուել այն տեսակէտով՝ թէ այն ամենը, ինչ որ գոյութիւն ունի ծածուկ, պէտք է նոյնպէս հրապարակ դուրս գալ։ Այս նախապաշտումից առաջանում են ամենաանարդար և ներքին հակասութիւններով լի դատողութիւններ։ «Կատարեալ անկրօնութիւնը, ճշմարիտ անաստուածութիւնը հետևանք է մաշող, զգացմունքներ բթացնող չափազանց քաղաքակրթութեան, սակայն ոչ երբէք աղդեցութիւն կոշտ ու կոպիտ անքաղաքակրթութեան։ Անքաղաքակրթ աղդելն ամենախորին անկման միջոցին էլ պահպանում են կրօնի պահանջը, որ համապատասխանում է կրօնական ընդունակութեան՝ լինի այդ թէկուզ սխալաշատ և խառնաշփութ»։ (Ճտրառաւ)։

Աղքադրութեանը յայտնի չեն առնչութեան աղքեր, այլ միայն կրօնական գաղափարների զարգացման տարեր աստիճանները. այդ գաղափարները մի տեղ սաղմի կամ աւելի ճիշտ է ասել բոժժման մէջ են գտնուում, փոքր և անտեսանելի են, մինչդեռ մի այլ տեղ ճոխ զրոյցներով ու առասպելներով են պահանձուել։ Սակայն մենք էլ անկատարելութիւնների մէջ միշտ սկզբնական զրութիւններ չպէտք է տեսնենք։ Յիշենք թէ ինչ անձանաչելի նուազութեան են հասել կրօնական մեծ գաղափարները Աբիսինիալի քրիստոնէութեան, մոնղոլական բուդդայականութեան և Սուրբանի իսլամութեան մէջ։ Կրօնական գաղափարների տարածման ոյժը նոյնչափ մեծ է, որչափ հաստատ է, որ այդ գաղափարներն այնտեղ նուազութեան կհասնեն, որտեղ առանձնացած, մեծ և կենդանի առասպելաբանութեամբ, կամ թէ ոգեշունչ վարդապետութեան հետ ունեցած կապակցութիւնից անջատուած՝ կնետուեն բնական ազգերի նիւթական կեանքի անապատը։ Արդէն այսօր գտնում ենք քրիստոնէական մտապատկերների եղծուած հատուածներ հնդկական և սոլինէղիական առասպեկտների մէջ, իսկ մահմեղականութեան եղծուած գաղափարները, կտանանք մի այնպիսի պատկեր, որ ըստ էութեան շատ լին չի մնալ վերոյիշեալ բանաստեղծական ար-

ման պատմութիւնը չգուշակէինք, դրանք կը ծառայէին իբրև ապացոյց՝ թէ այդտեղ միաստուածութեան սաղմերն են գտընւում։ Բնական աղդերի բանաստեղծութիւններն ևս շատ տեղ կասկած են յարուցանում, որ երրոպական հեքաթների, առածների և այլն մի որևէ ճիւղը պատահմամբ այդ երկիրն է ընկել և աճման ուժի շնորհիւ, որ յատուկ է երևակայութեան այդ պատկերներին, խկոյն օտար հողի մէջ շիղեր է արձակել։ Մասս «Մի-լէրը Կալւու-այ» «Nursery tales of the Zulus» (1866) երկի մի ծանօթութեանը կցել է այն խորին միտքը, որ դրանք, ինչպէս և մեր ժողովրդական զրոյցները և այն, գոնէ այն չափով, որ չափով որ դրանք վերաբերում են ոգիներին, ըղձանուշներին և հսկաներին, մատնացոյց են անում մի հեռաւոր քաղաքակրթութիւն կամ առ սակաւն՝ շատ երկարատև աճման գործողութիւն։ «Ինչպէս լեզուի զարտողութիւնները, զրանք էլ հէնց իրենց առանձնայատկութեան շնորհիւ ցոյց են տալիս, որ կար մի ժամանակաշրջան, երբ այսօրուայ անկանոնն ու անմիտը՝ մի որոշ նպատակով և կանոնաւոր էր կազմւում»։

Արտայատութեան անկատարելութեամբ չպէտք է չափել մտքի խորութիւնը։ Պօլինեզիական առասպելաբանութեան մասին խօսելիս՝ պէտք է ի նկատի ունենալ, որ այդ ձևերով ճոխ զրոյցների հիւսուածքը ոչ թէ նման է պարզ խօսակցութեան, այլ մանկական թոթովանքի, որի միջոցին մեր ուշագրութիւնը դարձնում ենք ոչ թէ ասելու ձեի, այլ ասածի բովանդակութեան վրայ։ Ճատ անգամ մի նման հնչիւն բաւական է լինում, որ այդ աղդերը դրա հետ կապակցեն իրենց մտքերի ընթացքը և շարունակեն։ Մի բնազանցական յարաբերութեան նոյն դիտողութիւնն աւելի տպաւորիչ կերպով նկարագրուած կը լինի մի որևէ լորին բանաստեղծի մագաղաթեալ գրչագրի մէջ, քան թէ պօլինեզիական կամ աֆրիկական քահանալի կամ կախարդի բերանացի աւանդութեան մէջ։ Սակայն եթէ բնական մարդու թոթովանքից դուրս բերենք հասկանալի մտքերը, կտանանք մի այնպիսի պատկեր, որ ըստ էութեան շատ լին չի մնալ վերոյիշեալ բանաստեղծական ար-

տայալութիւնից: Համեմատենք օրինակ հաւայի չաղէս զրոյցը յունաց համապատասխան զրոյցների հետ. «Մի ցեղապետ, որ իւր կնոջ մահուան պատճառով շատ անմիջաբար դրութեան մէջ էր, իւր խնդրանաց համաձայն քահանայից իրաւունք ստացաւ, որ ցեղապետների աստուածն առաջնորդէ իրան Մելով պետութիւնը շրջագայելու: Երկուսն էլ ճանապարհորդեցին մինչև աշխարհի ծայրը, ուր նրանք հասան մի ճեղքուած ծառի մօտ և նրա վրայով ցած սողացին դէպի անդունդը: Վատուած այստեղ մի ժայռի յետեւը թագնուեց և ցեղապետին թույլ տուեց առաջ գնալով՝ նախապէս թաթախելով նրան գարշահոտ ձիւթի մէջ: Հասնելով Միլով պալատը՝ նա տեսաւ, որ դղեակը լիքն է մեծ քանակութեամբ ակուաներով (Հոգիներ), որոնք այնքան խորասուզուած էին իրենց խաղի մէջ, որ ցեղապետն առանց նկատուելու խառնուեց զրանց մէջ: Բայց երբ նկատեցին նրան, մի նորեկ հոգու տեղ ընդունեցին և ծաղրեցին իրեւ գարշահոտ հոգի՝ ենթադրելով որ այդ գարշահոտութիւնը ստացել է երկար ժամանակ նեխուած մարմինների մօտ մնալով: Երբ ամեն տեսակ խաղերից յետոյ՝ դրանք մտածում էին մի նոր խաղ հնարել, ցեղապետն առաջարկեց, որ ամենքն իրենց աչքերը դուրս հանեն և մի կոյտի վրայ ձգեն: Ամենքն արագ կատարեցին այդ առաջարկութիւնը. ցեղապետն ուշադրութեամբ զիտեց թէ ուր ընկան Միլով աչքերը և խսկոյն վերցնելով թագցրեց իր կոկոսի բաժակի մէջ: Այսպէսով երբ ամենքը կուրացան, նրան յաջողուեց հասնել Վաքէսի պետութիւնը, ուր իրաւունք չունէին գնալու Միլով խմբերը: Միլուն երկար բանակցելով Պակէայի հովանաւորութեան ներքոյ եղող ցեղապետի հետ, իր աչքերը յետ ստացաւ միայն այն պայմանով, որ ազատ թողեց ցեղապետի կնոջ հոգին. հոգին վերադարձաւ կը կին աշխարհ և միացաւ մարմնի հետ:

Կրօնն ամեն տեղ կազ ունի մարդուս այն պատճառականութեան պահանջի հետ, որ ամեն մի պատճառի պատճառութ կամ կեղինակին է որոնում: Նրա ամենախորին արմատները շօշափում են դիտութեան հետ և սերտ կապակցուած են ընական զգացմունքի հետ: Ագութիւնն ալեմանների մասին ասում է, որ

նրանք սարեր և հովիտներ, ծառեր ու առուներ են պաշտում. ամեն բանին հոգի տալը, որ այս պաշտաման հիմքն է կաղմում, մենք համարձակ կարող ենք վերագրել ամբողջ մարդկութեանը: Այս պահանջին շատ համապատասխան է այն հակումն, որով բոլոր բնաւթեանները կենդանութիւն, մինչև անգամ մարդկացին կերպարանք են ստանում, որովհետեւ դրանց վերաբերութիւնները մօտաւոր և հեռաւոր շրջակայքի հետ: Դայեակների հայեացքով՝ բոլորն էլ, մարդկանց պէս, հոգի ունին. երբ բրինձը փոխութիւնները և ապա նոյն իսկ դրանց յարաբերութիւնները մօտաւոր և հեռաւոր շրջակայքի հետ: Դայեակների հայեացքով՝ բոլորն էլ, մարդկանց պէս, հոգի ունին. երբ բայց նա կարող է միւս աշխարհը գնալ, նորից մարմին առնել ու իրեւ կերպարու ծառայել: Պատճառի և ներդրծութեան օրէնքի սխալ գործադրութիւնն այլպիսի ու մարդկանց հոգիների մէջ յարաբերութիւններ է առաջացնում, որոցից յետոյ պատճառաբանութեանց մի խստ ցանց է հիւսւում: Յաճախ պատմում է Կօղա ցեղապետի զրոյցը. այդ ցեղապետը մեռնում է՝ երբ կոտըել է տալիս ափը դուրս ընկած մի խարիսխի կտորը. այդ օրից սկսած այդ խարիսխը պաշտաման առարկայ դարձաւ: Այսպէս կապակցում են հազարաւոր թելեր, որոնցից ոչ մէկը չէ մոռացւում. և աւանդութեանց այս ցանցի մէջ է թրապետում բնութեան պարզամիտ որդին, ինչպէս սարդի սստախնի մէջ ընկած ճանճը և քանի փորձում է գտնել խսկական թելը, այնքան ևս առաւել խճճում է: Հոգին այսպէս է ըմբռնում բառացի կերպով. մի թել, որի վրայ ամրացած են բազմաթիւ բաց օղակներ, պահում է տերեւնների մէջ. եթէ այն անձը, որի համար պատրաստուած է այդ, պատահմամբ տեսնում է թելը, իր հոգին դրանով բռնուած է համարում, տիրում է և մեռնում. Բանկ կղզիների վրայ այս փորձուած միջոցն է գործադրուում՝ մարդկանցը միւս աշխարհն ուղարկելու համար: Այդ պատճառով և բնական մարդու աչքի ընկնող յատկութիւններից մէկն է՝ իւր երեակայութեան ուժի ցնորդից վախենալը: Երբ մելանեղցիներին հարցնում են՝ թէ ովքեր էք, նրանք պատասխանում են. «մարդիկ», որպէս

զի արտայալտեն, որ իրենք ողիներ կամ ուրուսկաններ չեն (Կօրէնքառ): Բնական մարդն աւելի է վախենում գիշերից, քան թէ վատ գաստիարակուած մանուկը: Փէշինը զրում է վերին Նեղոսից. «Բնիկներն երբէք չեն համաձայնում գիշերով ճանապարհ գնալ երկիւղ կրելով վայրենի գաղաններից և լուսնի վատ աղղեցութիւնից: Ամբողջ տարուայ կէսը ցերեկն էլ վատ են զգում իրենց և անտեսանելի զօրութեանց շնորհիւ իրենց վտանգաւոր դրութեան յարատև զգացմունքն աշխատում են դոնէ մասսամբ ապահովել՝ ընդհանուր մարդկային հայեացքով ընդունուած դժբաղդ օրերի թիւը չափազանց մեծացնելով: Այստեղ միայն երկուշաբթի, հինգշաբթի և շաբաթ օրերն են յաջող համարուած ճանապարհորդութեան համար. չորեքշաբթին ոչ լաւ և ոչ վատ է, իսկ կիրակին, երեքշաբթին և ուրբաթը դժբաղդութեան օրեր են»: Եւաւ կղզու վրայ բաղդաւոր օրերն ընտրելու համար նոյն իսկ գողերն ունին իրենց արծաթեայ և ժամացոյցի նմանուող թուացոյցը, որ օրացոյցի նման յարձակման կամ աւազակութեանց համար ամենալաւ ժամանակն է յոյց տալիս: Սպիտակ մարդիկն էլ, ինչպէս ամեն անսովոր և նոր բան՝ այլպիսի նախապաշարմանց նիւթ են դառնում: Երկրի անյայտ մասերի յայտնագրին թուացութեան պատմութեան մի քանի ցաւալի միշադէպերը բացատրում են այդ երևոյթով, որ շատ բնական է Նեղոսի ուրուականներով լի հոգու համար: Լիւինգտոնն իւր «առաքելական ուղևորութեան» մէջ նկարագրում է այն երկիւղը, որ ազգում էր ինքը Նեղոսների վրայ՝ իրեւ առաջին սպիտակ մարդն այդ երկրում, չնայելով որ նա սեամորթների ամենալաւ սպիտակ բարեկամն էր: Սպիտակ մարդու ունեցած կամ գործածած իրերը նոյնպէս շուտով դաստում են հրաշագործ առարկաների, կուռքերի շարքը: Արևմտեան աֆրիկացիները զբուած թուղթը կուռք (ֆէտիշ) են համարում և կախարդական գործ: Երբ Բախոհուց կապում է ծանր վիրաւորուած մի հիւանդի վէրքը, աննկատելի կերպով նրա գրպանից մի թղթի կտոր է վայր ընկնում. երբ նա երկրորդ անգամ հիւանդին այցելութեան է գնում, տեսնում է, որ այդ տունը բոլորովին դատարկ է. ընակիչները փոխադրուել էին

ուրիշ տեղ, որովհետև կախարդուած էին համարում այդ տունը: Սակայն թղթի կտորը հանդիսաւոր կերպով վերադարձնում են տիրոջը: Մի բակվիրի կողջ թաղման օրը նեղոսների կողմից պատգամաւորներ են գալիս բուխհօլցի մօտ և սաստիկ թախանձում, որ նա զբօսանքների միջոցին թղթի կտորներ չը թափէ, որովհետև իրենք ստիպուած են լինում այդ ճանապարհներից և տեղերից փախուստ տալ: Երբ Խապմանն այցելեց նզամի վրայ եղող Լէտշուլատերէս քաղաքը, ջերմից մեռնողների թիւը խիստ շատ էր և ցեղապետը սաստիկ երկիւղի ու լուզման մէջ էր՝ «ամեն տեղ թափառող մահուան» վերաբերմամբ: Նա բոլորովին չէր զուրս զալիս խրճթից, իւր կանանցն ու երեխաներին ամեն տեսակ լուացումների էր ենթարկել տալիս և շարունակ աշխատեցնում էր իր բժիշկներին՝ զանազան եփած խոտերի ջրով անդադար սրսկել տալով խրճթի շեմքը: Ննջեցեալների մերձաւորներին հրամացուած էր, որ ուրիշների հետ հաղորդակցութիւն ունենալուց առաջ՝ երկարատև լուացումների և մաքրումների ենթարկուին:

Այսպիսով ուրեմն ագի պատող շնչով ցուռած է ո՛չ միայն բնութեանը, այլև բոլոր երեւը: Ամեն մի զործողութեան, նոյն իսկ մարդկանց զարդարանքի և իրերի զբուագների մէջ աւելի շատ ոգեկան պարունակութիւն և նպատակ կայ, քան թէ մենք կարծում ենք: Այդ պատճառով ամեն կրօնի ստորին աստիճաններին յարմարուած է բազմաստուածութիւն խօսքը: Ամեն տեղ երևում է մտապատկերներ բազմապատկելու միտումը. այն մութը ոգին, որից ծնունդ է առնում այս ամենը, ժամանակի ընթացքում, հետզհետէ, սիրով և հեշտութեամբ է աստուածներ ստեղծում: Ուր որ ազնիւ մարդիկն իրեւ. կէս կամ ամբողջ աստուածներ էին պաշտում, ուր որ հոգիները ոչ թէ միայն շարունակում էին ապրել, այլ և այս աշխարհի հետ սերտ յարաբերութեան մէջ էին մնում, որտեղ ամեն մի ընտանիք իւր յատուկ պահապան հոգին ունէր՝ կենդանու կամ այլ կերպարանքով, այնտեղ հարկաւ պէտք է աստուածներն ու կուռքերն աճէին ու ծաղկէին և ամբողջ ոգին երևակայական առասպելների թաւուտներ դարձնէին: Սակայն այդ չպէտք է

նկատել միայն իբրև ստորին և երկիւղից առաջացած իրողութիւն։ ոգի տալը բարձր աստիճանների վրայ ձգտում են բանաստեղծութիւնն ու փիլիսոփայութիւնը։

Ո՞րտեղ են գտնւում այն աղբիւրները, որոնցից անդագար դուրս են գալիս ողիներն ու ուրուականները միլիօնաւոր թուերով։ Նոյն խոկ մարդու կամ նրա մերձաւոր յարաբերութեանց մէջ եղած ամենապդու փոփոխութիւնն առաջացնում է հիմնարկութիւն, ու և մահ։ Կախապաշտամանց գլխաւոր պատճառը ոչ թէ բնութեան երկիւղն է, այլ մահուան կամ մահացածների երկիւղը։ Համանների, հեքիմների, կօրաչիների և այլ անուններ կրող բոլոր կախարդների առաջին գործն է լինում միշտ՝ որոնել մահուան և հիւանդութեանց պատճառները և ապա մեռածների հոգիների հետ հաղորդակցութիւնը, որ ականատես մերձաւորները դիտում են երկուութեամբ, յաճախ երկիւղով և զղումով։

Արդպիսով առաջանում է նախ առաջնադաշտութիւն (ֆէտիշամուս), որ խառնաշփոթ կերպով յարաբերութիւններ է ստեղծում անթիւ հոգիների և այն ամեն տեսակ առարկաների, որոնց մէջ հաստատում են դրանք իրանց բնակութիւնը։ Կախական հաւատի համակարգութեանց հիմունքներն այնպէս չեն կազմուել, որ արտաքին բնութեան առարկաներն ուղղակի աղդած լինէին մարդուս հոգու վրայ, այլ ընդհակառակը, նրան շրջակայքում իրկիւղով մի որևէ է լինակէտ որոնող երևակացութիւնը քմահաճութեամբ այնպիսի առարկաների է կպչում, որոնք յաճախ արժանի չեն լինում այդպիսի կապակցութեան։ Խոկ բնագանցական աղդեցութիւններ առաջացնելու համար անընդհատ փորձեր են լինում։ Մարդիկ ոչ թէ միայն աշխատում են նոր ողիներ գտնել՝ տարօրինակ ձեւակերպութիւն ունեցող քարեր գնելով մի որևէ ծառի վրայ փորձելու համար թէ արդեօք ծառի պտղաւէտութիւնը չի աւելանայ, այլ նաև վաղուց արդէն յայտնի ողիները փորձի են ենթարկուում նրանց առաջը վատ, օրինակի համար փտած միս ձգելով։ Ինչու Աքրիկայում բոլոր նեղրուները նախամեծարում են եղջիւրները. նրանց կախարդներն իրենց գարդարում են մեծ քանակութեամբ

եղջիւրներով։ քրմագետները, այսինքն թաղաւորները, եղջիւրների մէջ են պահում իրենց երկիւղ պատճառող դեղերը։ Ո՞րտեղից է առաջանում դայեակների և ալֆուրների համարեա թէ ծաղրածութեան հասնող կիրակակի պաշտամունքը։ Ինչ որ աչքի ընկնող բան կայ, տեղ է գտնում կաֆր կախարդների վզից և մէջքից կախուած տարօրինակ խառնակոյտի մէջ։ մի տարօրինակ զուգադիպութեամբ կապի առաջին անգամ զտնուած մեծ աղամանդի կտորը յայտնուեց մի կախարդի վզից կախուած կաշուի քսակի մէջ։ Քարապաշտութիւնը բաւականին տարածուած է, բայց սովորաբար պաշտուում են մերձակայ մեծ քարաժայուերը։ Սակայն Աքրիկայում ամեն մի քարի կտոր կարող է պաշտաման առարկալ (ֆէտիշ) դառնալ, եթէ փաթաթուի խայտաճամուկ լաթի մէջ և վզից կախուի։ Մուսդուներն իրեն կուռք պաշտուում են երկար ձողեր, զանդէհները՝ տձեւ փայտի կոճկեր, մեխերով ծածկուած, իսկ կամերուն լերան շրջակայքում պաշտաման առարկայ են երկաթակնեալ (բազալտի) սիւները։ Հաղիւ կարելի է մի աքրիկացի դտնել, որ պաշտաման առարկայ չունենայ կախուած և որովհետև շատ ցանկութիւններ, գործողութիւններ իրենց յատուկ պաշտաման առարկան ունին, այդ պատճառով և շատերը սաստիկ ծանրաբեռնուած են արդպիսի փրկարար իրերով։ Այսպէս օրինակի համար կան այնպիսի հմայական բժժանքներ, որ խմելուց առաջ փորձում են ջրի համը և նրա մէջ եղած վտանգաւոր բաներից զգուշացնում են խմողին, որովհետև չար ողիները սիրով են ապրում այդ փայլվող, փրփրացող և շարունակ փոփոխուող հեղուկի մէջ։ Խոկիմոսի զէնքը միշտ կրում է մի փոքրիկ պահապան առտուած։ Դրանցից միայն մի աստիճանով են տարբերուում արապէս կոչուած կուռքերը, մեռածների պատկերները, որոնք շինուում են փայտից, մետաղից, կաւից, մոխրից և գրւում խրճիթներում կամ զերեղմանների վրայ։ Երկուսն էլ հոգի ունին, միայն թէ նախնեաց հոգին, որ որոշ և յալտնի մարմին ունէր, այժմ բնակւում է կուռքի մէջ և յաճախ բնուում է իր սովորական տեղը, ինչպէս օրինակ շամանների (բուդդայական քրմի) կուռքերն իւրտի մէջ։ գրւում են երենց հին տեղը,

մինչեւ որ նրա յիշատակը շատ անգայ տօնելուց յետով՝ ոչնչացնելում է: Ելապիսով ողիների տեսանելի պատկերները ստեղծելուց յետով՝ հիմնելում են նաև հոդեպաշտութեան համար առանձին վայրեր, ինչպէս օրինակ Աֆրիկայի պաշտամանց առարկաների խրճիթները, մայայացիների և պօլինեզիացիների տախտակամածները և վերջապէս տաճարները: Այդ հիմնարկութիւններն յաճախ կցուած լինելով գերեզմանատներին, այսինքն ննջեցեալների հոդիների բնակարաններին, ձիշտ մեր եկեղեցիների շուրջն եղող հանգտարանների նման, ցոյց են տալիս այն կապակցութիւնը, որ տեղի ունի հանգուցեալների հոդիների հոգացութեան և աստուածապաշտութեան մէջ: Զանգանութիւնը միայն այն է, որ այն նախնական տաճարները յաճախ իրենց սկիզբն առնում են գերեզմանատնից: Հիւսիսային ասիսցի շամանն իրեն շրջապատում է ահագին քանակութեամբ փայտեալ կուռքերով, որոնց հետ նա զրուցատրում է կախարդական կրչումների միջոցին և որոնցից խորհուրդներ է ստանում: Այդ կուռքերի թւում կան նաև կենդանիների պատկերներ, նաև մանաւանդ արջերի. նրա խրտը խսկական հոգիների բնակարան է: Առայժմ անորոշ է մնում՝ թէ արդեօք աւելի բարձր աստիճանի վրայ են գտնում պաշտամանց խըրճիթները, ուր չկան պատկերներ և այլ հոգիների մարմնացումները: Ազգպիսի խսկական խրճիթներ կան Աֆրիկայում, իսկ Պվկիանեան աշխարհում գտնուում են փոքրիկ հոգիների տը-նակներ:

Քոյոր ազգերի Աստվածաշնչերը նոյնպէս մի կտոր կրօն են պարունակում իրենց մէջ: Այդ բոլոր եղանակների հիմնական միտքն այն է, որ հոգին խկոյն չէ բաժանում դիակից, կամ թէ չէ առ սակաւն մի որոշ կապ է պահպանում երկուսի մէջ: Պօլինեզիացիները պարզ ասում են, որ մահուանից յետով հոգին մի առժամանակ թափառում է գերեզմանի շրջակայքում, մինչեւ որ վերջապէս իջնում է Միլուէ կամ Վաքէայի պետութիւնը: Այդ մասին պարզ գաղափար ունին նաև Մալայացիները, հիւսիս-արևմտեան ամերիկացիներն ու արևելեան ասիսցիները: Այդ է պատճառն ահա, որ դիակն ըստ մեծի

մասին մի առ ժամանակ անթաղ է մնում: Խիրիկուիսի հսդիկները մի ամբողջ տարի անցնելուց յետոյ են թաղում ննջեցեալի մարմինը: Նոյնպէս և գերեզմանի մէջ իրեր դնելու տարածուած սովորութիւնը, դիակի մումիայի նման ձևակերպութիւնը, գերեզմանների վրայի հողակոյտի ճանաչելի դարձնելը, որ բօնգոների մօտ յուշարձանի բնաւորութիւն է կրում և ցեղապետների գերեզմանների վրայ իսկական շքեղ դամբարանների կառուցուիլն ու պահպանուիլը՝ ցոյց է տալիս, որ «անհոգի» դիակն էլ չէ նկատում իբրև լոկ առարկայ: Ճատ ազգեր ենթագրելով, որ ննջեցեալների հոգիները ժամանակ առ ժամանակ վերադառնում են իրենց փոտութեան մատնուող բնակարանները, գերեզմանի մէջ մի բացուածք են թողնում և երեխն-երբեմն նոր կերակուր և ըմպելիք են դնում դիակի մօռ, կամ թէ գերեզմանի մէջ են ածում: Այդ ճանապարհորդութիւնների միջոցին հոգին կարող է ուրիշ մարդկանց մէջ մտնել, նրանցը կախարդել, ոչնչացնել կամ թէ անսպասելի բարձրութեան հասցնել: Ուգանդա երկրում ենթագրում է, որ իւրաքանչիւր կախարդի մէջ բնակւում է մի արքայի հոգի. իսկ սովորական հոգին, մուզիմուն, կարող է ամեն մարդու մէջ մտնել: Որ հոգին գերեզմանի մէջ մտնելով՝ գեռ ևս չէ հանգստանում, ցոյց է տալիս այն հանգամանքը, որ գերեզմանի հողարլուրի վրայ մի նաւակ է դրում. հիւսիսում նաւակին փոխարինում է այն սահնակը, որով դիակը բերում է վերջին հանգստարանը: Գերեզմանի վրայ նաւակ դնելու այդ սովորութիւնից են առաջացել հիւսիսալին գերմանների նաւակածեւ գերեզմանաքարերը: Կախարդական զօրութեամբ՝ հոգու դէպի դիակը վերադառնալը նոյնպէս կարելի է համարում, ինչպէս որ կենդանի մարմնից դուրս գալը և մի որևէ է անսունի կերպարանք ստանալը. Վերջինս աֆրիկացի կախարդների սիրած մասնադիտական զբաղմունքն է: Ամեն առարկալին հոգի վերագրող երևակայութիւնն առհասարակ ոչ մի սահման չէ գծում հոգիների թափառականութեան առաջ՝ թէ և ամենից առաջ ի նկատի է առնելում կենդանական աշխարհը: Դիակին պատուիվ վերաբերուելու զօրեղ պատճառներից մէկն է նաև

Երկիւղը: Դիակի շուտավայլթ ծածկելը, ձողի վրայ կրելը, դըռներից խուսափելը, խրճից բաւականին հեռու արագ թաղելը և ալին երկիւղով լցուած զործողութիւններ են: Այս խնդրի վերաբերմամբ տարօրինակ կերպով ամենահակասական երեսիթներ են տեղի ունենում, որովհետև մինչզեռ կաֆրները յաճախ դիակները պարզապէս անտաւն են տանում և բորեանների կերակար գարձնում, ուրիշները թաղում են քարեալ գերեզմանների մէջ կամ իրենց ազարակներում: Կամերուն երկրում տղամարդը թաղում է իր խրճիթի մէջ, լուկ կինը ճանապարհի վրայ: Եթե հանդուցեալի խրճիթը դատարկում կամ քարութանդ է լինում, տան կահ-կարասիքն աւերտում և յաճախ մինչև անգամ նրա ստրուկներն ու հօտերը կոտորում և նոյն լուս անունը մոռացութեան է տրում—այս բոլորին գործակից է լինում տրուականների երկիւղը:

Բնական ազգերի կարճամիտ ու թերակատար դատողութիւնը թող է տալիս այսպիսի բազմատեսակ ձևերով արտայալտուղ և խորին հատաւու ունենալ մարդկավին մարմնի հոգի ընդունելու մասին և կարիք չէ զգում իրեն հաշիւ տալու այն վայրերի մասին, ուր որ մնում են հոգիները: Սակայն այդ հաւատը նախապատրաստում է հանգերձեալ աշխարհի գաղափարի յօժարակամ ընդունելութիւնը: այդ զաղափարը հին եւրոպացիների, պօլինեզիացիների և հնդիկների մէջ զարմանալի նմանութեամբ առաջ գալով՝ աշխարհազրական տարածման մի նշանաւոր իրողութիւն է ներկայացնում՝ աւելի շուտով մարդաբանական-աշխարհազրական, քան ժողովրդների հոգեբանութեան տեսակետից: Մի փոքր առաջ լիշուած առասպելը հոդի յափշտակող հաւայացի ցեղապետի մասին պարզ ցոյց է տալիս՝ թէ որ աստիճանին են հասնում այդ նմանութիւնները: Ստորերկեալ պետութիւնն իշնելը, այնտեղ իշխողին խաբելը, միւս հոգիների նախանձը և այն հիմնական գծերով տեղի են ունենում շատ ազգերի առասպելական պատմութիւնների մէջ: Ուրիշ են այն մտապատկերները, որոնք իրականութեան անմիջական արտացոլումներ լինելով՝ որոշ կարեորութիւն են ներկայացնում և ուրիշ այն մտքերը, որոնք երկրորդական կամ երրոր-

դական շարքերով կապակցուում են առաջինների հետ. Վերջիններիս ծաղումը միշտ պէտք է հիմնաւորապէս քննութեան ենթարկուի:

Այն, ինչ որ մենք կուտաս ենք անուանում, ծաղմամբ ոչ այլ ինչ է, եթէ ոչ հանգուցեալների արձան, նախնեաց պատկեր: Քիչ է պատահում, որ հոգուն նշանակական (սիմբոլական) մարմնացումն տրուի, ինչպէս օրինակ այն վայսոյց շինուած և հոգի տանող թռչունը, որ սաւառնում է շամանների զիսին՝ մեռեալների լիշտատակը տօնող հանդիսների միջոցին: Սովորաբար մարդու պատկերն են վերցնում իր ամբողջ էռթեամբ, որ յաճախ մի օրինակ է լինում: Այս պատկերների և կռապաշտութեան—որ բնականաբար կախումն ունի այն բարեպաշտութիւնից, որով յարգում են հանդուցեալները—մէջ եղած կապակցութիւնը նոյնպէս կրօնի մի հասուածն է: Այսպիսով կարելի է բացատրել այն ուրիշ կերպ անբացատրելի տարբերութիւնը, որ տիրում է երկու մօտիկ ազգակից ցեղերի մէջ, ինչպէս օրինակ նոգուխէալում մաֆուրէդները մեծ քանակութեամբ կուռքերի պատկերներ (կարօվար) ունին, մինչդեռ արֆակները ոչ մէկն էլ չունին: Այժմ հասկանալի է նաև այն ներքին կապը, որ դոյմութիւն ունի կռապաշտութեան և գանդպապաշտութեան մէջ. չէ որ գանգն էլ մեռածի արձան է: Որչափ աւելի տեղի է տալիս լիշտութիւնը, այնչափ ևս առաւել պատկերը կորցնում է իր անհատականութիւնը: Տահիտիում, ուր Տիր անհատական-ընտանեկան կուռքերը տարբերում էին Տու ժողովրդական կուռքերից, զլիսաւորապէս վերջիններն էին, որ աներեւոյթ դարձան. այդ կուռքերը յափշտակելու համար յաճախ կույներ էին տեղի ունենում ցեղակից ժողովրդների մէջ:

Պահուան հետ ի միասին կեանքը և ծնելն ու ծնուիլը նոյնպէս իբրև առեղծուածական և նշանակալից երեսիթ՝ բնագանցական յարաբերութիւնների մէջ են ինձուել: Թէ ծընելու և թէ ծնուելու վայրկեանը սիրով են ներկայացնում պատկերների վրայ. ոտքերի առաջ երևալն էլ որոշ յարաբութեան մէջ է դրում առասպելաբանութեան հետ: Կող կհանքի

մէջ կայ մի հաստատութիւն, որ հակադիր է ոչնչացնող գօրութեանց: Զանազան ազգերի մէջ արական սեռի անդամը գործէ ածւում իբրև պաշտպանութեան նշանակ՝ չար ոգիների դէմ: Իրարից բոլորպին տարբեր ազգերը զանազան ծխալատարութեամբ տօնում են ծնունդը, հասունութիւնն ու պսակը և այդ դէպքերի առաջնակարգ նշանակութիւնը շօշափելի դարձնում: Զարգացման աւելի բարձր աստիճանի վրայ՝ կեանքը շարունակելու այս մտապատկերների վրայ աւելացել է նաև հանդէրջեաւ աշխարհի վարչադրութեան ու դատիժը: Սակայն շատ ազգեր զաղափար չունին այդ մասին: Բնական ազգերը նոյնպէս տարբերում են հանդերձեալ աշխարհը, սակայն ոչ թէ բարյական, այլ ընկերավարական մտքով. ինչպէս օրինակ պօլինեզիացիները Վիլուի և Մակէալի պետութիւնները զանազանում են միմեանցից. առաջինն աղմկալից է, այդտեղ ժողովւում են ստորին դասակարգի մարդկանց հոգիները և գուարճանում են խաղերով ու աղմկելով. իսկ երկրորդում տիրում է հանգիստն ու արժանաւորութիւնը՝ համապատասխան այդտեղ բնակուող ցեղապետների հոգիներին: Վալհալան միմիշայն արխասիրտ և պատերազմի դաշտում ընկած քաջերի համար է. հնդիկ քաջամարտիկը նոյնպէս իւր արտօնեալ երկինքն ունի: Էական խնդիր է շեշտել, որ բարոյական ուսմունքները կրօնի անհրաժեշտ բաղկացուցիչ մասերը չեն կազմում, այլ աւելի բարձր աստիճանների վրայ կազմուող խառնուրդը:

Բնաւեան երեալներից երկու դասակարգ ամենախորին աղեցութիւնն են դարձում անապահովութեան բնածին զգացման վրայ. մարդ ստիպուած է դրանց հետ որևէ յարաբերութեան մէջ մտնելու: Բնաւեան սածերի զըրեղ գործադրութեան առաջ մարդս իրեն համեմատում է բնութեան ոյթի ու վեհութեան հետ և գիտակցում է իւր ստորագաստութիւնը: Ամեն կողմից անթիւ արգելքներ սահմանափակում են նրա գործունէութիւնը և խափանում նրա կամքը: Նրա հոգին երկիւղ է կրում անսահման և անհիմն երկոյթներից և հազիւ թէ նեղութիւն է կրում այդ վեհ մեծութեան բաղկացուցիչ մասերով հետաքրքրուելու: Դաշտում դժունուող լեռն անտարակոյս շրջապատ-

ուած է առասպելներով. մթին անտառը պարփակում է իւր մէջ ոգիներ. փոթորիկները, երկրաշարժները, հրաբուխները աղեցութիւն են ունենում իրենց անսպասելիութեամբ և շփոթեցնելով. այն ֆանտաստիկական կուռքերը, որոնցով լի են Աֆրիկայի անտառներն ու դաշտերը, յաճախ կայծակի հարուածներից առաջացած պատկերներ են և այն: Ամենախորին տըպատրութիւնը թողնում են ասոբէղապարտ երշնչի երեալներն իւրենց շարժողութեան վեհապանձ հանդարտութեամբ և կանոնաւորութեամբ: Այդ տարօրինակ, երկրավին իրերից տարբերուող երեսովների զոյտութիւնը, դրանց լուսը և մեծ քանակութիւնը նոյն իսկ սկզբնական մարդու վրայ հարկաւ մեծ աղեցութիւն պէտք է անէին: Բոլորը, նոյն իսկ բուշմաններն ու աւստրալիացիք, անուններ են տալիս համաստեղութիւններին: Արևի տաքացնող զօրութիւնը պէտք է ցուրտ երկրներում հարկաւ շնորհակալութեան աւելի մեծ զգացմունքով ընդունուէր, քան թէ տաք երկրներում: Բնական ազգերն երկիւղ կրելով ուրուականներից՝ լուսնի և աստղերի լուսը կրկնակի սիրով են ընդունում: Դրա ապացուց կարող է համարուել այն հոդացողութիւնը, որով նրանք լուսնի խաւարման միջոցին ամեն կերպ աշխատում են խաւարեցնող ողին դուրս քշելու և այն բարձր գիրքը, որ տրում է լուսնին ազգերի կրօնական մտապատկերների և առասպելների շրջանում: Ասել թէ՝ արևն իրեւ լուսոյ աղբիւր ամեն ազգերից պաշտում է իրեւ աստուածային էութիւն և ընդհանուր բարեկարուէի ընդունում չափազանցութիւն կինի: Սակայն արևապաշտութիւնը բաւականին տարածուած է նա մանաւանդ երկրագործ ժողովուրդների մէջ և բարձր զարգացման հասած մտապատկերների շրջաններում. նոյն իսկ Լապերի քըմերի կախարդական թմբուկների վրայ արևի պատկերն է նկարուած: Զատ տարածուած են այն առասպելները, որոնք կապակցուած են արեւի երկրի հետ ունեցած զանազան գիրքերի և տարուայ եղանակների փոփխութեանց հետ: Մայր երկրի հետ ի միասին արգասաբեր արեգակն էլ ստեղծում է այն ամենը, ինչ որ կենդանի է, նոյնպէս և աստղերը: Հանդուցեալ հերոսների հոգիները ձգտում են

դէպի երեկոյեան արեւը: Արևի հետ է կապակցում նաև էրա՞ն պաշտամունքը. կրակն երբէք չպէտք է հանգնել և երդմամբ պէտք է վառել: Ճապօնացիք նոր տարուաւ օրը հանդիսով են տուն տանում կրակը, որ որոշեալ օրեր միայն ծխական կարգով վառում է տաճարում՝ փայտերը միմեանց շփելով: Այս, նոյն իսկ Թուսները (Տամբովի շրջանում) ըստ կարելոյն շատ մոխիր և մի քանի քարեր են տանում հին օջաղից դէպի նոր տունը, որովհետեւ դրանք բաղդ են բերում. այս սովորութիւնը կրակի տեղափոխութեան մնացորդն է:

ՕՇԻ ԳՐԻՒԽԻ-ԸՆԿԱ երեսոյթներն անմիջական ազդեցութիւն են ունենում և վնասում տնտեսական բարգաւաճմանը, այդ պատճառով և հասկանալի է՝ թէ ինչ մեծ զեր են խաղում մարդկանց հաւատի և նախապաշարմանց մէջ արեւ ու անձրեւ քերող և պտղաբերութիւն պատճառող երեսոյթները: Փրանից յետոյ գալիս են այն երեսոյթները, որոնք անմիջական յարաբերութեան մէջ չեն գտնուում մարդկանց հետ և վերջիններից ինչ առնելու միայն այն ժամանակ, երբ բռնանուած են իրենց վրայ: Նոյն իսկ բնական մարդը, մարդկալին ցեղի նախապաշարումներով լի արարածը, ամենանեղ հայեցակէտ աւնեցող մարդը տպաւորութիւն է ստանում ծիածանից-երկնքի կամուրջից-ծովի ալիքների շաւաչիւնից, անտառի ծառերի խշողից և աղբւրի կարկաչնից: Այս երեսոյթները նախապաշարմանց մտապատկերների շրջանն են մտնում, որոնք նոյն պէս իրենց կողմից մտաւոր պատճառներից են առաջցել: Միթէ ոգիների պաշտամունք է, երբ Ալինօն դժուար ծովադնացութիւնից կայ ձկնորսութիւնից առաջ յաջողութիւն է խնդրում: Բնական ազդեցին ծանօթ է օդաքարերի—մէտէօրների-անկումը, որոնց մասին նրանք աւանդաբար տեղեկութիւն են ստանում. երկրի մէջ խրուած քարի այդ հարուածներին նրանք շանթաքար են անուանում: Նրանք դիակով բեռնաւորուած նաւակը հրում են ծովի ալիքների մէջ, մութն անտառներին «տաքու» են վերադրում և ամեն մի առուակի մէջ ողի են երեւակայում: Այստեղ բանաստեղծութիւնն իւր արմատները հիւսում է կրօնի հետ և բոլորին աւելորդ է հան-

դիսանում այն հարցը՝ թէ արդեօք այդ ազգերը բնական խելք ունին:

Սակայն ընկերավարական շարժառիթներ նոյնպէս խառնուում են վերոիշշեալների հետ: Մեղ ծանօթ է և այն հանգամանքը, որ կենդանիներն ընկերավարական խմբակցութիւններով են ապրում: Համանը կենդանիների հետ վարում է ինչպէս իրեն հաւասարի հետ. գլխին դնում է եղջերուի արհետական եղջիւլներ, սնամէջ կենդանակերպ անօթից շան արիւն է խմում, իր գլխի վրայով սնամէջ թռչուն է թռցնում, գետի աստուծուն զոհարերութիւն է անում ձկնակերպ ամանից: Ֆիլեակները կախարդական նպատակների համար պահում են, նա մանաւանդ հիւանդութիւնների ժամանակ, արջեր, խոզուկներ և կրիաներ: Գեր արջի միսը նրանք իւրաքանչիւր տարի հանդիսաւոր կերպով են ուտում՝ յատուկ փայտեալ ամաններով: Աչքի է ընկնում այն հանդամանքը, որ կենդանիներին և բոյսերին վերաբերեալ առասպելները սկզբնական ազգերի գրականութեան մեծագոյն մասն են կազմում: Կենդանիներին տեղ է տրւում նոյն իսկ ցեղերի և ցեղապետների տոհմաբանութեան սկզբումը: Որչափ ընդարձակ ծաւալ է ստացել հնդկական տշխարհահայեցողութիւնը, այնչափ ևս տարածուել է հոգեփոխութեան գաղափարը և նա մանաւանդ կապկից առաջանալը. նոյն իսկ ճապօնիան ունէր մի անդամ իւր սուրբ կապիկները: Մարդակեր վայրենիներն իրենց աղդակից են համարում մարդակեր գիշատիչ կենդանիներին: Այս կենդանիներին իննայելը (Մալայացիները և Սենգամբիայի Եօլօֆները կոկորդիսներին պահում են սրբազան լճակներում) ուրիշ կերպարանք է ստացել, ինչպէս օրինակ մատաբէների արքայ Լօբէնգուլան մահուան պատիթ է նշանակել կոկորդիլոս սպանողի համար, որովհետեւ սպանուած կոկորդիլոսով կարելի է վտանգաւոր կախարդութիւններ անել: Կենդանիներին պաշտելը կարող է և անուղղակի ձևով արտայալուիլ:

Բազմաթիւ կրօնական հայեցողութիւններից անմիջապէս չէ ծագում մի Աստուծոյ, երկնքի տիրոջ և ամեն բանի արարչի գաղափարը. միայն պատահաբար է լուսոյ ճառագայթով լու-

աւորւում այդ գաղափարը: Աւելի պակաս պարզ հասկացողութիւն ենք ստանում նրա էութեան մասին: Անկասկած նախնիքներին մեծարելու պաշտամունքը աստիճանաբար դառնուժ է ականաւոր մարդկանց ամբոխից վեր բարձրացնելու և մինչև երկինք հասցնելու սովորութիւն: Այսպիսի առտուածացումն կարելի է ապացուցանել թէ Աֆրիկայում և թէ Պվկիանեան աշխարհում: Ինկաների մօտ այդ արդէն սկսում է նրանց կենդանութեան միջոցին: Մարդկանց երկինք են տեղափոխում, որպէս զի այնտեղից աւելի մեծ չափով ազդեցութիւն ունենան: Հանգուցեալների միջիօնաւոր հոգիները պէտք է իրենց առաջնորդող տէրերն ունենան, իսկ այդ բանի համար ամենից յարմար են նոյն իսկ նրանց երկրային տէրերը: Եթէ մի Աստուծոյ էութեան պատկանում է և այն յատիւութիւնը, որ նա մի տեղից զանազան բաներ է կատարում՝ առանց կապուած լինելու գործողութեան իրի և տեղի հետ, պէտք է որեմն նրան վեհ նշանակութիւն տալ: Յիշողութեան թուլութիւնն էլ օգնում է, որ նրա երկրային կապերը մոռացում և անորոշութեան են մատնում: Այսպիսով հոգիների մեծամասնութիւնը դառնում են ողիներ և մարմնանում են կուռքերի մէջ, իսկ փոքրամասնութիւնն էլ դառնում են ցեղական աստուածների խոցանից առաջանում են ընդհանուրից ճանաչուած և տարածուած աստուածներ և վերջիններից էլ ծագում է աշխարհը ստեղծող մի Աստուծոյ գաղափարը: Ստեղծագործութեան համար կարեոր են առ սակաւն առաջին մարդը և մի Աստուած, որ ստեղծելու կարողութիւն ունի: Սովորաբար երկինքը կամ արեգակն են արժանի համարուել այդ կոչմանը. երկնքումն են ապրում սուրբ նախնիքը, որ կերպարանափոխելով՝ դառնում են ստեղծող Աստուած: Եւ վերջապէս բնական հայեցակէտը պահանջում է մեծ և տիրապետող ողիներ՝ մեծ բաների համար և անթիւ փոքր ողիներ՝ փոքր բաների համար: Երկնքի ողին, որ միւնոյն ժամանակ և ստեղծող է, հարկաւ առաջինը կը լինի: Այսպէս ուրեմն տարբեր ծալքերից ամենքը դիմում են դէպի մի բարձրագոյն էութեան, դէպի մի Աստուծոյ գաղափարը: Ամեն տեղ լսում ենք մի բարձրագոյն էակի անունը, սակայն

կամացուկ և անորոշ: Յաճախ այդ գաղափարը բառացի կերպով նշանակում է՝ ամենամեծը, ցեղի: Կողեւոր պետը, հանգուցեալ հոգիների տիրապետողը և ստեղծողը: Նախնեաց պաշտաման վրայ հիմնուող այն իրողութիւնը, որ իւրաքանչիւր ժողովրդի մէջ զանազան ողիներին զանազան խմբեր են յատկացում, որոնք զադոնի զաշնազրութեամբ իրենց զործն առաջ են տանում և որոնք յաճախ այդ կապակցութեան ուժով են գործ գնում հարկաւ արգելք է լինում մի աստուածութեան գաղափարին, մինչև որ մէկի մէջ չէ ձուլում բազմաթիւը: Պաշտաման դասակարգութիւնն այնքան էլ ապահով չէ, որովհետեւ տարբեր երկրներում փոխում է իրեր ամենաբարձր աստուած պաշտաման անունը: Ըստերական կղզիների նեղ շրջանում բազմաթիւ անուններ են պաշտում իրեր ամենամեծ աստուած՝ Տահիտի, Արմէս և Թայատէա կղզիների վրայ պաշտում է Քուան, Հոլարօլայի վրայ Տաօն, Մառլուախ վրայ Տուն, Տարուաէմանուի վրայ Տանգարօան կամ Տարաւան, Տահաաի վրայ Օրօն: Կոր Զէլանդիայում բոլոր աստուածների գլխաւորն է Համարւում երկնքումն ապրող Բանգին: Հաւափի վրայ Տանէն առաջ է զալիս իրեր կանէ և զրա հետ ի միստին պատերազմի աստուածը, Վակէան և Մասուիին, որոնք նշանաւոր են միայն դիցարանութեան մէջ: Սակայն այս բոլոր բարձրագոյն աստուածները կարող են ըոլորվին զրկուել պաշտաման աստրկայ լինելուց՝ յօդուտ զուտ տեղական նշանակութիւն ունեցող նախնեաց աստուածների: Այդ բանին շատ նպաստեց այն համզամանքը, որ սկաշտողներից շատերը ցանկանում են անպատճառ իրենց յատուկ աստուածը կամ ողին ունենալ: Ուժաղները տկարներին յաղթելով՝ միշտ ստիպել են նրանց՝ երկրպագել իրենց աստուածներին: Ջիլուկների մասին ընդհակառակը լսում ենք, որ Նիկամը համարեալ թէ ամեն մի գիւղում մի տաճար կամ մի տուն ունէր, նոյն իսկ ամբողջ գիւղերի տէր էր, որոնց մէջ յետոյ բնակուցան յարգուած և արտօնութիւններ ուսացած կաստափ անդամները, որոնք մի տեսակ հոգեր որական աղնուականութիւն էին կազմում: Դրանք ստանում էին ամեն տեսակ աւարի մի մասը.

ոչ ոք չամարձակւում դրանց կովերին կպչել և նոյն իսկ կթել: Յեղապետի հարստութիւնները գաղտնի էին պահւում նիկամի շրջանում: Աբբէօկուտայում՝ զնոտի խուրձերը նշան են կայծակի աստուած զանգօի սեպհականութեան, որ անձեռնմխելի է և ով համարձակուի ձեռք տալ դրան, կենթարկուի ջանգօ-քրմերի վրէժինդրութեանը: Նոյն իսկ զանգօն մի հրահանգիչ երևոյթ է ոմանք ենթադրում են, որ նակենդանութեան ժամանակ սաստիկ բոնաւոր թագաւոր է եղել՝ ոմանք էլ ասում են, որ նա ծնուած և ապա անմահութիւն ընդունած աստուածային զաւակ է. երբեմն նա հանդիսանում է իբրև նախամարդ, երբեմն իբրև կայծակի աստուծոյ ուղեկից և ապա նաև իբրև կայծակի աստուած: Այս բոլորն ապացոյց է, որ դա մի ցեղապետի հոգի է, որ վերջը Ոլլմառու է բարձրացել:

Որովհետև դիցաբանութեան մէջ միւնոյն աստուածների և աստուածային գործողութեանց անունների փոփոխութիւնները խառնաշփոթութեան մշտական աղբւը են կազմում, նաև մանաւանդ գիր չունեցող ազգերի մէջ, այդ պատճառով և դրանց պարզելը կարելի է միմիայն իրական հիմքերի ուսումնասիրութեամբ՝ առանց ուշադրութիւն դարձնելու դրանց դասակարգութեան վրայ: Եթէ միայն մի առանձնացած իրողութեան վրայ ուշք դարձնելով՝ ընդունենք օրինակի համար, որ մարդկային ցեղի նախահօր վերակեցութիւնն ամերիկական առասպելի մէջ լրհեղեղի մի բնորսշ ձեւն է, այդ կնշանակէ, որ մենք չենք ճանաչում առասպելաբանութեան բազմաձև և փոփոխական էութիւնը: Ընտրութեան և բարձրանալու ձգտումը յատուկ է մարդկային հոգուն և յաջող միջոցները բաւական են, որ տեղական աստուածներն ընդհանրանալով տարածուեն և բարձրագոյն էութիւններ ճանաչուին. Քրիստոնէութեան և մահմեղականութեան տարածուիլը դորա ապացոյցն է:

Մարդու աղերսը մի անձնական էութեան հետ, որ բարձրագոյն որոշում է իբրև և որի հետ մարդու անձնական յարաբերութիւն ունի, ոչ մի տեղ պարզ ձեռվ չէ կազմակերպուել, այլ միշտ թերակատար, անբաւարար և բաղմատեսակ

սխալներով: Կրօնն ևս իւր զարգացման միջոցին մենակ չէ մնացել, այլ հետզհետէ աւելի ու աւելի սերտ կապակցուել է մարդկային հոգու այլ ձգտումների հետ և ամենից առաջ խղճմտանքի յոցերի և պահանջների հետ: Եւ այդպիսով կրօնն ընդունեց ամենաշատութիւն յարացութեան ունեցաւ ընդհանուր քաղաքակրթութեան վրայ: Մինչդեռ կրօնական զարգացման սկզբնական աստիճանների վրայ մարդս առաջ է գալիս համարեա թէ միայն իբրև պահանջող, որ ոգիների և կուռքերի վերաբերմամբ ցանկութիւններ է յախոնում և նոյն իսկ հրամայում նրանցը և նրանք էլ այդ ցանկութիւնները և հըրամանները կատարելու համար գոհեր են ընդունում, այն ինչ այժմ ոգեկանն է իշխանութիւն ձեռք բերում և վարձատրութեան ու պատժի խոստումներով իշխում է մարդու վրայ և ոչ թէ միայն առաջնորդում է նրան, այլև հարկադրում: Կրօնի մէջ եղած բարոյական տարրերի այս զարգացման հետ զուգընթացաբար առաջ է գնում այն բազմաթիւ տարրերի զտումը, որոնք առանց ներքին ազգակցութեան կապակցուած են նրա հետ, ինչպէս որ ստորին աստիճանների վրայ ոչ միայն մարդուց դուրս գտնուող ոգիների ծառայութիւնը, այլև և մարդու մէջ գտնուող հոգու խնամքը, այսինքն թէ զիտութեան, թէ արուեստի և թէ բանաստեղծութեան սկզբունքները կախարդների, քրմերի և դրանց նմանների գործ են: Այդպիսով մենք հասանք մի կէտի, որ կարող ենք համեմատել շատ խառնաշընփոթ ու գալարուած շաւիղների կենդրոնի հետ, որոնք այժմ միաւորում են պարզ և ուղիղ ճանապարհների մէջ: Կրօնի շատ ստորացումների հետ կապակցուած, բայց վերջապէս վեհութեան հասցնող միութիւնը քաղաքացիական օրէնքների հետ, ազատում է նրան ոգեկան ամեն տեսակ զործունէութեան հետ ունեցած կապակցութիւնից, որոնք այնուհետև ինքնուրոյն զարգանում են՝ իբրև արուեստ և զիտութիւն: Այդ բաժանումը նախապատրաստում է, երբ քրմի կատարած գործերը՝ կախարդելը, բժշկելը, անձրև բերելը, պատկերներ շինելը, պալատական երգեցողների խումբ կաղմելը և այն կատարում են ու-

թիշ բաղմաթիւ անձանց ձեռքով, բայց կատարելսպէս իրականանում է արտեստի և գիտութեանց դարսւմ: Պատմութիւնը ժեղ ցոյց է տալիս, որ գիտութիւնը, արտեստն ու բանաստեղծութիւնն ինքնուրոյն գործունէութեամբ զարգանում են միայն հին Յունաստանում: Եղիպտոսում դրանք բոլորն էլ դեռ կտապակցուած էին քրմական դասակարգի հետ:

Աշխարհային և ոգեկան զօր-լւեանց հաղայրո-լւեանց կարելի է գտնել այժմեան մարդկութեան բոլոր աստիճանների վրայ: Մի որևէ է ցեղապետի գորութիւնն անկատար է՝ առանց կախարդական գորութեան, որ կամ ինքը ցեղապետն է անձամբ գործադրում, կամ թէ իրեն հետ ոերտ կապակցուած քբմերի ձեռքով. բացառութիւն կարող են կաղմել միայն պատերազմի զլխաւորները: Արդէն այստեղ բանաստեղծը պէտք է իշխանի հետ ընթանայ: Անձրւ բերելու արտեստի անյաջողութիւնը կարող է մի որևէ իշխանի վարկը բոլորովին կոտրել: Աֆրիկալում յաճախ է պատահում, որ իշխանները դահից զրկում կայ սպանում են՝ եթէ նրանց կախարդութիւնն անյաջող եյք է ունենում: Միւս կողմից էլ հաղիւ թէ մի աւելի գորեղ յենակէտ կարելի լինի երեակալել մի իշխանական տոհմի աւանդական իշխանութեան համար՝ քան նախնեաց պաշտամունքը, որ ամեն մի ինկա կուցիոսի սուրբ դարձրեց: Ովկիանեան աշխարհում բաղմաթիւ օրինակներ են եղել, որ իշխանները կամ պատերազմի հերոսները աստուածների շարքն են դասուել: Այսպիսով է ապէս դորացաւ իշխանութեան ժառանգականութիւնը: Յիշենք այստեղ Փ. Մէրիմէլի մի նկատողութիւնը, որ հռովմայեցիք բուր իտալիուների մէջ սուաւելութիւններ տուին խորուսիներին, պատվիշետև ծանօթ էին դրանց հին կրօնական աւանդութիւններին և հմայութիւններին: Այս ինչ որ լաւ է կասարակութեան և պետութեան համար՝ ցոյց է տրւում և իրեւ աստուծուն հաճելի. այս ողիները, որոնք յարաբերութեան մէջ են գրւում ընտանիքների, ընկերութեանց և պետութիւնների երշանկութեան հետ՝ կարող են միմիայն բարիք գործել: Աստուածային պահանջների անփոխութեանց հետ կապակցուում են բարոյականութեան փոփոխական պահանջները, որ բաւական

նացնում է հասարակութեան խորին միտք պարունակող և մասամբ աղնիւ պահանջները՝ պատուիրելով յարգանք գէպի ծերութիւնը, ամուսնութիւնը և երեխանների պաշտպանութիւնը, բայց նաև սեպհականութեան պաշտպանութիւնը (վերին աստիճանի եսական Տարու օրէնքները): Այդպիսով առաջանում է աշխարհային և ոգեկան շահերի միմեանց հետ խառնուիլը: Իշխանի հետ միասին մի տանիքի տակ՝ ժողովրդին յիմարացնող գործեր կատարող խորամանկ քուրմը, մանաւանդ այս աստիճանի վրայ, միայն հնարովի բան չէ: Եթէ ցեղապետը սուրբ մարդ է, ուրեմն և այն կարգի գէմ յանցանք գործելը, որի գչուխը նա է, մեղք է և այդ պատճառով կրօնն էլ ծառախում է ինուարաբներին և ցեղափոխականներին հեշտութեամբ զսպելուն:

Բարեայ և չորե տարբերութիւնը, որ մովսիսական աւանդութիւնը խորը զգացմունքով մարդուս ստեղծագործութեան ոկիզըն է դնում, ուրիշ ճանապարհով էլ պէտք է վաղ և ինքն իրեն առաջացած լինի: Բնութիւնն ինքը ցոյց է տալիս վնասակարն ու օգտակարը: Ճնորհակալութեան զգացմունքը գէպի բարին մշտապէս նորոգում է: Պէտք է ունենալ այդ զգացմունքը և խնամել կարողանալ: Խոկ երբ բոլոր բարին վերագրւում է նախնիքներից մէկի հոգուն, զրանով բարին զիցաքանական մարմնացումն է ստանում: Վակայն այստեղ բարին դեռ երկար ժամանակ միայն անհատներին է բարութիւն անում և ոչ թէ ամբողջ հասարակութեանը: Բարույ մօտաւորապէս այլպիսի հասկացողական է տիրում Նոր-Պոմերանիայում, որովհետեւ ալյտեղ բոլոր լաւ բաների ստեղծագործութիւնը՝ թէ երկրների, թէ կարգ ու կանոնների, վերագրւում է միմիայն մի էակի՞ Տօկարինանային, (իմաստուն), խոկ բոլոր վատ բաների ստեղծագործութիւնը մի արիշ էակի՞ Տօկարուիսին (անշնորհք?): Բարույականութիւնից զուրկ և բարոյական սկզբունքներով լի կրօնների մէջ եղած խորին անդունդը փաստաբանում է երկնքի ընակիչների մարդկային թուլութիւնը: Ինչու արդեօք դիցաբանական է տկները, աստուածները, յաճախ բարոյապէս աւելի պականուած ու վատ են՝ քան թէ զրանց պաշտող մարդիկը:

Ուժի և զօրութեան այն սխալ ըմբռնումը, որով նրանք աւելի բարձր պէտք է երեան ամբոխից՝ ստեղծում է մի սխալ իդեալ աստուածային մեծութեան մասին։ Դրան աւելանում է դիցաբանութեան մէջ և այն առասպելական տարրը, որ ամբողջ աշխարհում տարածուիլ է սխալ իդեալ՝ սիրոյ, պատերազմի և նոյն իսկ գաճառականական արկածների մէջ խաբող խորամանկ աստուծու մասին։

Քրմի մէջ մարմնացած է այն ոգիների աշխարհը, որոնց հետ նա հաղորդակցութիւն ունի և որոնց նա պէտք է հալածէ ու կանչէ։ Նրա կրթութիւնը կայանում է նրանում, որ դուրս քշէ սովորական հոգին և նրա տեղը մի նորը բերէ։ ամենից լաւ յարմարում է նա այդ բանին՝ եթէ հոգեպէս տարբերում է մեծամասնութիւնից, հոգեկան հիւանդութիւն ունի, ընկնաւոր է և հակումն ունի յոտակատեսութեան և երազատեսութեան։ Քրմերի աւանդութիւնները տարածում են այն դաստիարակութեան շնորհիւ, որ տրում է այդ բանին յարմար պատանիներին։ Քուրմը բնական մարդուց կերպարանափոխելով և ոգիներին հրամայող դառնալով՝ հրաշագործի և մինչև անգամ մի տեսակ հոգեփոխի բնաւորութիւն է ստանում։ Երբ ֆէտիշը սիրում է, իւր սիրոյ առարկան տանում է թփերի մէջ, թաղում կռատանը, որ յաճախ մի քանի տարի շարունակ մնում է թաղուած։ Երբ թաղուածը կրկին կենդանանում է, սկսում է առաջուայ պէս ուտել և խմել, սակայն նա այլ ևս առաջուայ հասկացողութիւնը չունի և քուրմը պէտք է նրան դաստիարակէ ամեն տեսակէտից, ինչպէս մի փոքրիկ երեխայ։ Սկզբումն այդ դաստիարակութիւնը միմիայն փայտի միջոցով է կարելի լինում, սակայն հետզհետէ նրա գիտակցութիւնը զարթնում է և կարելի է լինում խօսել նրա հետ։ իսկ երբ այդ դաստիարակութիւնը կատարելագործութեան է հասնում, քուրմը վերադարձնում է նրան ծնողներին, որոնք յաճախ չեն կարսղանում ճանաչել իրենց որդուն՝ մինչև որ նա անցեալի լիշողութիւնները չվերականգնէ։

Քրմի արուեստի միջուկն է հանգուցեալների հոգիների հետ ունեցած հաղորդակցութիւնը, սակայն իրեւ չափարդ՝ նա

բոլոր գիտութեանց, լիշողութեանց և նախազգացումների բովանդակողն է։ Եւրոպացիներից ոմանք գնահատել են նրա խոտերի և արմատների միջոցով բժշկութիւնները։ Կախարդական արուեստը բժշկական արուեստի բարձրագոյն աստիճանն է։ Բլէէքը հաստատապէս ասում է, որ նատալի կաֆրների դոկտորները կենդանիներին անդամահատում են, սակայն պատերազմի ժամանակ գաղտնի կերպով անդամահատում են նաև մարդկանց։ Սակայն այդպիսի օրինակները շատ սակաւաթիւ են։ Յամենայն դէպս թէ այդ դոկտորները և թէ դրանց հիւանդները չեն բաւականանում միայն բնական միջոցներով՝ բոյսերով և կենդանիներով, այլ իրեց կարծիքով ամենից ապահով և արմատական միջոյն է՝ բնագանցական գօրութիւնների օդնութիւնը, որով բժշկուում են ոչ թէ միայն հիւանդութիւնները, այլ նաև որիշ չարիքներ, օրինակ սիրոյ թախիծը, ատելութիւնը, նախանձը և այն։ Զգալութեանց պատրանք առաջ ըերելու արուեստը լաւ գիտէին քրմերը և այդպիսով ստեղծում էին հաւատի նոր յենակէտներ։ Հիպնոտիզմի գաղտնիքը նրանց աւելի վաղ էր յայտնի քան գիտութեանը։ Փողովուրդը ինքն էլ շատ բան գիտէ, սակայն տմենամեծ գաղտնիքները յայտնի են կախարդին։ Յաճախ այդ աղղերի պատմական գիտութիւնը կազմում է միայն այն նշանաւոր իրողութեանց աւանդութիւնը, որոնք գաղտնի և ժառանգաբար աւանդում են քրմերին և խորհուրդ խնդրողներին անսպասելի երեւում են բնագանցական գիտութեան շնորհիւ։ Այդ գիտութիւնը հարկաւ կարող է ծառայել նաև քաղաքականութեան և իշխողների նպատակներին։ Աւանդութեան սրբացնելը նպատակ ունէր աւելի հաստատուն հիմքերի վրայ դնելու այդ. այդ մտքով կարելի է ասել, որ նա փոխարինում է զրին։ Դիրն ու զրքելի տպագրութիւնը վնասեցին հոգեւորական դասակարգին. ուրեմն աւանդութեան արուեստը բոլորովին այլ կերպ է զարգանում. աւանդութեան ըշանների ու պատկերների զիտենալը և առա զրելու ու կարգալու արուեստը, ըստ կարելոյն յատուկ զրերով, ինչպէս օրինակ եղիպատական քրմերինը, այդ արուեստի առանձնայատկութիւններն են։ Երկրիս զանազան ժողովրդների մէջ պատա-

Հում ենք առանձին քրմական լեզուի: Այն նետերը, որ արձակում են փախող «չար սուռ» լետերց, թէ ստորին Ամուրի վրայ, թէ Աֆրիկայում, Ամերիկայում և թէ Ավկիանեան աշխարհում, կախարդական գործիքների շարքն են դասում:

Դիմունք գործածութիւնը կրօնական ծիսակատարութեանց միջոցին՝ տարածուած է բաղմասուածեան հաւատ ունեցող բոլոր երկրներում. թէ մարդկանց և թէ կենդանիների գիմակները և սարսահարացիները ու բարդ գլխարկները գործածութիւն են գտնում կրօնական արարտութեանց միջոցին: Զինաստանում, Տիբեթում, Հնդկաստանում, Յէցուում, Հին մեքսիկացիների և պերուացիների մօտ տեսնում ենք նոյնը՝ ինչպէս նաև էսքիմոսների, մելանեզիացիների և աֆրիկական նեղրների մօտ: Ալւտաների գերեզմաններում գիտակների հետ թաղուած են նաև գիմակներ, որոնց գիմազերը ծաղրական ձեւերով են աբտայալաւած և նմանւում են պարելու գիմակներին, որոնք մի ժամանակ հասարակ նպատակների էին ծառայում, իսկ այժմ կեանքի լուրջ մտապատճերների և մահուանից յետոյ յարութիւն առնելու մտքելի հետ են կապակցուած:

Կապակցուած միայն մի ամբողջ զիտութիւն են ենթադրում: Գրանք այնչափ բաղմաթիւ են, որ ամեն բան պարփակում են իրենց մէջ և ամեն կողմից անցկացնում են կեանքը, բերենք միայն մի քանի օրինակներ կաֆջներից. որոտման ժամանակ եթէ կաթն ուտեն՝ կայծակը գէպի իրենց կըպշն: Եթէ ուլիշի ամանով կաթն ուտեն, եղեւնազորթութիւն կապատահի: Բագէ սպանողը կմեռնի: Եթէ բաղէն իջնի մի խրճթի վրայ, խրճթի տիրոջը դժբաղութիւն կապատահի: Կէսդիշելից առաջ եթէ աքառաղը կանչէ, նշան է, որ մարդ կմեռնի կամ թէ անսուն կատակի: Եթէ մէկն առանց գիտենալու կերակրի մէջ լէօպարդի ընչացք ուտէ՝ կհիւանդանակ կամ կմեռնի. իսկ ով որ այդ ընչացքն ուտէ լէօպարդի մի կտար մօի հետ իմիասին՝ սրտու կլինի և որսի ժամանակ յաջողութիւն կունենայ: Ով փշերի մէջն է մտնում, պէտք է ուտէ այդ փշերը, որպէս զի հետևեալ անգամ պաշտպանուի: — Այն սարսափելի և շատ տարածուած հաւատը, թէ ոչ մի

անսովոր մահուան գէպք չի կարող բնական լինել, առաջացնում է բազմաթիւ կախարդութիւններ, որոնք ենթադրում են անհատների և նրանց ազգեցութեան ճանաչողութիւն: Անձրւելու կախարդութիւնը, կրակի վերանորոգութիւնը, դաշտավին աշխատանքների սկսելը և որսը խիստ ծիսակատարութեամբ է տեղի ունենում:

Քաղաքական առաջնորդութիւնը միշտ պարագան էնթագութիւնը: Եւ որովհետև զարգացման ընթացքում հէնց դրանք են առաջ մղող ոյժերը, պարզ է, որ զբանից առաջանում է նաև կանգ առնելու մեծ հակումն, որի անհրաժեշտ հետևանքն է յետադիմութիւնը: Այս բանում ամենից աւելի խրատական է կրօնի պատմութիւնը: Եթէ հարցնենք՝ թէ ինչ տարբերում մեծամեծ փոփոխութիւններ առաջացրեց քրիստոնէութիւնը Աբիսինիաբում և բուդդայականութիւնը մօնղոլիայում, պատասխանը կինի-սպեկան: Բոլոր կրօնակների հմանադիրներն աւելի վեհ իդէալներ են ունեցել, քան իրենց յաջորդները. և կրօնակների պատմութիւնն ամենից առաջ ցոյց է տալիս անկումն այն բարձրութիւնից, որին հասել էր մաքուր ողերութեան շնորհիւ և գէպի որը ձգտում են յետոյ բարենորոգիչները և իրենց դաւանողները:

Միաստուածութեան զաղափարով մարդ ճաշակում է առաջընթաց ծերութեան և կեանքի փորձառութեան կծու զառնութիւնը: Այդ պատճառով զարմանալի չէ, որ մատաղ, պարզամիտ ազգերը չեն գնահատում միաստուածութեան զրտուարժանիքը: Ամբոխն ընդունակ չէ վերացական զաղափարներն ըմբռնելու: Նոյնը կարելի է ասել նաև դաւանաբանութեան մասին: Ամբոխի ֆանատիկոսութեան համար նշանակութիւն ունի ոչ թէ դաւանաբանական սկզբունքների ճշտութիւնը, այլ հաւատի սովորութեանց անխախտ մնալը: Թէ որպիսի դիւրութեամբ կրօնի տարբեր սկզբունքներն անխախտ ունենալութեան առաջ ամենից լաւ ցոյց է տալիս այն հանգամանքը, որ Բիրմափ և Յէցոնի շատ տաճարներում միաժամանակ պաշտուած են թէ Բրահման և թէ Բուդդան: Կամբոջա-

լում զտնուող Անցկորֆատի աւերակները՝ կրօնական սկզբունքների խառնակութեան հոյակապ վկաներն են:

Անկման արտաքին նշաններն են յեկ և էռ-լեռն երկու-սառ-թեռն: Սբդուղից են առաջանում առաջին պառակտումները: Յետոյ դրան աւելանում են արտաքին աւերիչ հանգա-մանքները (ոյժի նուազումն, աղքատութիւն, անկախութեան կորուստ, թուփ պակասելը) և շարունակում են քայլայումը: Վրուեստի հմտութիւնը զուգընթացաբար չէ առաջ գնում ողե-կան ստեղծողական ոյժի հետ: Համեմատեցէք, օրինակի հա-մար, պոլինեղիական դիցաբանութեան ողեկան ստեղծագործու-թիւնները նրանց փայտեայ կամ քարեայ ձեռակերտների հետ: Պղին ցնդում է առանց այնպիսի ստեղծագործութիւնների, ո-րոնք բոլորովին համապատասխանում են նրա ուժին և մեծու-թեանը: Սակայն ձևերը մնում են: Այդ պատճառով և բնա-կան աղջերի մօտ յաձախ նոյն իսկ ամենաանկատար ձևերն աւելի բարձր են կանգնած՝ քան էութիւնը և այդ միայն ար-դին սպացուց է անկման: Բարձրագոյն մտապատկերների խե-ղաթիւրուած հետքեր գտնում ենք համարեա թէ բոլոր կրօն-ների մէջ և ոչ թէ միայն ողեկան, այլ նոյն իսկ զուտ նիւ-թական. ինչպէս Բուդդայական պաշտաման իրերը կամ քրի-սոնէական խաչերը, որոնք Տռ-էռնց ժամանակ իրեւ ֆէտիշ կրում էին ստորին Կոնդոյի վրայ: Քրիստոնէական մի քանի գաղափարները մինչօնարներից առաջ էին մուտք գործել այդ-տեղ: Երբ Գոբրէց հոքէն իմպալադօի գուարանիներին քրիստո-նէութիւն էր քարոզում, մի ծեր Կացիկէ սպատասխանեց նրան. «Տէր հայր, զուք զուք էք եկել, մեզ քահանայ հարկաւոր չէ: Սուրբ Թոփմասը վաղոց արդէն իւր օրհնութիւնը հաղորդելէ մեր երկրին»: Սատանայի կամ առաջնակարդ չար ոգու գողա-փարը քրիստոնէութիւնից առաջ տարածել են անկիրթ Եւրո-պացիները և առիթ տուել ընդունելու «սատանայապաշտու-թեան» կամ բարի և չար ողիների երկուութեան գաղափարները: Ինչ վերաբերում է մասամբ կասկածելի ստեղծագործու-թեան և ջրհեղեղի առասպեկտների նմանութիւնը սուրբ գրքի այդ պատճառութիւններին, դրանք այնքան տարածուած են և

սերտ կերպով հիւսուած ամբողջ դիցաբանութեան մէջ, որ չենք կարող դրանց պատահական կամ նոր ժամանակի ծագումն վերագրել. դրանք մասամբ պատկանում են համաշխարհային առասպեկտաբանութեանը, որոնց ծագումը քրիստոնէութիւնից առաջ է:

Արդեօք կրօնը կղզիացած է զարգացել, թէ նման է մի հիւսուածքի, որի գործուածքը տեղ տեղ խիտ է, տեղ տեղ անուր: Պատասխանն աւելի շատ բան է պարունակում, քան կարող է տալ մի որևէ գասակարգութիւն. գասակարգութիւն անել կարելի է միայն այն ժամանակ, երբ մեզ համար պարզ լինի, թէ ինչն է մարդութեան ընդհանութիւնը: Ինչ որ այդ մա-սին այսուղ ասենք՝ կապ կունենայ մարդկութեան ընդհանուր սեպհականութեան մասին մի փոքր առաջ մեր ասածների հետ: Ամենից առաջ ընդհանուր մարդկալին են ոգիներին հաւաքառը և հանինեներին պաշտելը. Բառականը տարրական մտքեր է անուանում այդ բանները: Ինչպէս որ տեսնում ենք թաղման սովորութիւն-ներից, դրանք յաձախ ամենափոքր մանրամասնութիւններով համապատասխանում են իրար: Գրանից կարելի էր բնական աղգերի մի ընդհանուր հոգեգիտութիւն կազմել: Այդտեղ զար-մանալի կերպով իրար հետ համաձայնում են թէ ցնական և հանդիկական և թէ զերմանական և աւստրալիական հատակո-տորները և կազմում են մի միացած և հիմնական ճիշտ հե-տեղողութիւն ունեցող ուսմունք: Գրա հետ կապակցւում է բնու-թեան այն բանին հռգի վերագրելը: Թէև Գրեօնլանդիայում և Փիզիում տարրեր իրերին է հոգի տրւում, սակայն միենոյն աղբիւրից բացարձակապէս միատեսակ սովորութիւններ են ա-ռաջանում: Այդ պատճառով և այն մարդիկը, որոնց իշխանու-թիւն է տրուած այդ բանների վրայ վերին աստիճանի միա-նման են կազմակերպուած. հիւսիսային ասիայի շամանը, ափ-րիկացի անձրեւ բերողը, ամերիկացի բժիշկը և աւստրալիացի կախարդը թէ ըստ էութեան, թէ ըստ նպատակի և մասամբ նաև օժանդակիչ միջոցներով և մեթոդով նման են:

Համաշխարհային առասպեկտ ամենամեծ յատկանիշն է եր-

կնքի և երկրի հակադրութիւնը։ Երկինքը համարւում է երբեմն երկինք, երբեմն արեգակ կամ թէ արեգակն երկնքի աչքն է։ Երկուսն էլ փոխարինում են միմեանց։ այսպէս օրինակ հարաւային ամերիկացիները հիւսիսային ամերիկացիների պարզ հաւատի փոխարէն, սրանք արևու ընդունում են իրրեւ հոգու ապագայ բնակարան, երկինքն են ընդունում իրրեւ այդպիսի բնակատեղի։ Ստեղծագործութեան մէջ արեգակը երկնքի օդնականն է։ Երկիքը երկուսի գլոմացն էլ հաւատար դիրք առնի բոնած և դրա արարածները ստորագրուած են առաջիններին։ նա միշտ միւնոյն կինն է, որի հետ երկինքը միանալով ստեղծեց այն ամենը, ինչ որ գոյութիւն ունի, նա մանաւանդ մարդկանց։ Արևի, կայծակի (որոտման աստուած), կրակի, հրաբուների և երկրաշարժների շուրջն են խմբւում նաև ստեղծողի օլնականի մտապատկերները։ այդ օդնականը նոյնչափ մօտենում է երկրին՝ արևի ընթացքի, կայծակի փայլատակելու, հրաբուների ժայթելու ժամանակ, որչափ որ երկինքը հեռու է մնում նրանից։ Հեփեստոսն ու Պլոմէթէորը, Թէմէլորդն ու պատժուած հրաբերը, կենդանացնողն ու աւերողը կենդրոնումն են, իսկ երկինքը, ամենքի հայրը, նրանից շատ յետ է մնում։ Մառսի—առասպեկները ընդհանուր մարդկային են և ոչ թէ մասնաւրապէս պօլինեզիական։ Դրանց կարելի էր նոնպէս Լօքի կոչել, որ մի ստորերկրեայ կաղ է, կամ գարամուլում, ըարաւային՝ աւտրալիայի ցեղերի որոտման աստուածը, որի անունը Ծի՛լշի՛ բառացի թարգմանում է։ «ոտքը մէկ կողմի վրայ» եմ «կաղ» կամ թէ հոթինդուների թղուփոար, որ նշանակում է «վիրաւորուած ծունկ»։ Մառլին չեփեստակ նման խեղանդամ է և բնակւում է երկրում։ հարաւային աֆրիկացիները հաւատում են մի կաղ աստուած, որ ապրում է գետնի տակ, դա էլ նոյնն է……

Ճատ ազգեր ընդունում են, որ արևելքում ապրող լուսոց և երկնքի աստուածն իրենց ստեղծողն ու բարերարն է և այդ պատճառով էլ իրենց սկզբնական հայրենիքը արևելքն են համարում, որտեղ մեքսիկացիները ստեղծեցին «Ացտլանը» լուսոց երլիքը և աւելի յաճախ՝ հոգիների աշխարհը երեկոյեան երկնքի յաճախական իրավուածութիւնը է։ Մեծ նմանութիւնների հետ գտնում ենք նաև փոք-

քում, որտեղ հանգուցեալների կղզիները մայր մտնող արևե ոսկեփայլ ճառագայթների մէջ են երևում։ Հոգու անցնելիք ճանապարհի նկարագրութեան, նրա վտանգների և փրկանքների մէջ այնքան շատ ընդհանուր կէտեր կան, որ միսիօնարն իր բոլոր կամքի եռանգով չի կարող մէկ ազգից միւսին հասցնել։ Վերևս արդէն յիշեցինք այն հաւայի զրոյցը՝ հոգու ստորերկրեայ աշխարհից յետ բերելու մասին։

Հազիւ թէ ստեղծագործութեան վերաբերեալ մի պատմութիւն լինի, որի մէջ յիշուած ըլինի դրախտի ծառը, որ երկինքը միացնում է երկրի հետ։ աստուածները դրա վրայով են ցած իջնում, իսկ հոգիները վերև բարձրանում։ վերջապէս ամբողջ ստեղծագործութիւնը դրանից է առաջացել։

Այս ամբողջ դիցաբանութիւնը կիսով չափ առանց հասկանալու միացած, իր այժմեան դրութեամբ երևում է ինչպէս հին ժամանակներից մնացած և օտար քարերով շինուած մի շէնք, որտեղ այժմեան մարդկութեան իսկական աստուածները, հանգուցեալների վերաբարձող և թափառող հոգիները հազարաւոր ձևերով վիտում են։

Հոգեպաշտութեան սկզբունքներն ուրիշ ժամանակներից և ուրիշ աղբիւրներից են երկրիս վրայ ասրածուել, քան համաշխարհային առասպեկները, աստուածների մասին։ զրոյցները և միւս աշխարհի նկարագրութիւնները։ առաջինները հարկաւ աւելի վաղ ժամանակների ծնունդ են քան թէ վերջինները։ Երկուսն էլ նոյն իսկ միմեանցից ամենահեռու գտնուող երկրներում աչքի ընկնող նմանութիւններ ունին։ բայց ամեն տեղ էլ նրանք երկու առանձին առանձին մտքերի շրջան են կազմում, որոնք մի քանի կէտերում միախն աւելի սերտ յարաբերութիւն ունին և որոնց մէջ տեղն է «ազատ հնարագիտութիւնը» կամ առ սակաւն «ազատ ալապիխութիւնը»։ Մենք այն կարծիքի չենք, որ այս աւանդութիւններից զուրկ ազգերի ամեն մի սովորութիւնը պատճական խորն արմատներ պէտք է ունենայ։ Ճատ բան խաղալով է հնարաւում։ բալուրաների ըխամբայի պաշտամունքը քմահաճութեան միակ յաջող թելադրութիւնը չէ։ Մեծ նմանութիւնների հետ գտնում ենք նաև փոք-

բերը, որոնք օգնում են բացատրելու այն երևոյթները, որոնց մնացորդները, արմատները կամ շիւերն են իրենք:

Ինչպէս որ մենք երկրս բոլոր մասերում, որտեղ Եւրոպացիները տներ են շինել և երկիրը մշակել, միւնոյն հայահատիկ բոլորն ենք գտնում, այդպէս էլ մի ինքն ըստ ինքեան չնչին նշանակութիւն ունեցող նախապաշարման սպորտութիւններ զոյութիւն ունեն ինչպէս մնացորդներ և հետքեր ամենտեղ տարածուած մտքերի: Ոչ թէ միայն չար աչքին հաւատալը, այլ նաև ձեռքն ու պայտն իբրև միջոց չար աչքի դէմ տարածուած են չնողլաստանում, Արաբիայում, հիւսիսային Աֆրիկայում և Եւրոպայում: Որ Մարօկկոյում կանաչք սուգի միջոցին կամ հիւսիսութիւնից յետոյ իրենց մազերից փունչ շինելով որոշ ծառերից կախում են, սա մի այնպիսի սովորութիւն է, որ մենք իբրև «մազերի զոհաբերութիւն» ամենատարբեր ձևերով երկրիս ամեն մասերումն էլ գտնում ենք. դա կազմում է այն սովորութիւնների մի մասը, որոնց նպատակն է մարմնի անպէտք մասերի պահպանելը կամ զոհաբերութիւնը: Այդ կարգին է պատկանում նաև թլապատութիւնը, որ զուլուները զոյծ են դնում, իսկ բէջուաները ոչ. սովորական է նոր-կալէզօնիայում, իսկ Լոյեալիսէտ կղզիների վրայ—ոչ:

Զանազան կրօնների տարածման վրայ մի ընդհանուր ակնարկ ձգելու համար՝ սովորաբար կրօնները բաժանում են մի քանի մեծ խմբերի: Եթէ ուզում ենք, որ այդ բաժանումը հիմնով խորիմաստ տարբերութիւնների վրայ, որպէս զի մարդկութիւնը պատահական մասերի չբաժանուի, այլ ըստ զանազան կրօնական հաւատալիքների զարգացման վեհութեան և խորիմաստութեան՝ չպէտք է միայն արտաքին ձևերն ի նկատի առնուին և այդպիսով խմբերի բաժանուին, ինչպէս՝ քրիստոնէութիւն, կռապաշտութիւն, միաստուածութիւն, բազմաստուածութիւն: Եթէ մի հայեացք ձգենք մարդկութեան կրօնական և ընդհանուր զարգացման վրայ միաժամանակ՝ կտեսնենք, որ կրօնական զարգացման ամենամեծ հիմնաքարերն ուրիշ տեղ են գտնում: Միաստուածութիւնը նոյն իսկ կռապաշտութերի բազմաստուածութեան մէջ առաջ է գալիս իբրև բնական

ձգտումն՝ մի բարձրադոյն էակի ստեղծագործութեան համար և միաստուածական հաւատալիքների մէջ նոյնպէս բնական ձգտումն կալ բաժանելու մէկը, հեռաւորը՝ աւելի մատչելի սրբերի:

Այսօրուայ մարդկութեան կրօնական զարգացման սկզբում մենք գտնում ենք՝

I. Կրօններ, որոնց մէջ առառածացինը հարդէայինից վեհ ու բարձր չէ հանգուած և որոնց զօրեղ բարոյական պարբեց զրուի են: Դրանց հիմքն է միմիայն հոգիներին և ուրուականներին հաւատալը. դրա հետ կապակցուած է գուշակութիւնը, բժշկութիւնը, անձրև երերու արտեստն ու այլ նախապաշարմունքներ:

Կրօնների մի խմբի մէջ տեսնում ենք շատ թող կապակցութիւն բնական երևութների հետ. այդ պատճառով և զօրեղ հանգուած գործարկայտագուշտները. այդ նկատում է շատ նեղը ժողովուրդների և հիւսիսային ասիացիների մէջ: Ուրիշ խմբերի մէջ գտնում ենք պէտքառչուն և առանպէշտին մարդունքների բարձրագույնից առաջացած ամբողջ սիստեմներ. դրանք ոլկանացիք և ամերիկացիք են:

II. Այս կրօնները, որոնց առառածացինը բարձր բարդութային շարժութային շրջանից և ուրիշ՝ գիտնական, բանաստեղծական և այլ հակումների հետ խառնուելուց հետզհետէ ազատում են, բայց դրա փախարէն աւելի և աւելի զարգացնում են բարյական տարրը: Հանդերձեալ կեանքի զարափարն ընդունելով վարձատրութեամբ և պատժով հանդերձ դարձեալ ընդունում է հոգիներին հաւատալը:

Բաղմաբուածութեանը տեղական շատ փոփոխական աստուածներին իշխող դիրք է տալիս՝ առանց նոյա մի որևէ բարոյական արժէք վերագրելու. այդպէս են բրահմային և բուդային հաւատացողները, եւրոպացիք քրիստոնէութիւնից առաջ և նախկին ամերիկացիք:

Միաստուածութեանը զարգացման տարբեր աստիճաններ ունի՝ նայելով մի կտուծոյ և մարդկանց մէջ եղող Աստուածային ազգականների, սուրբերի թուին ու նշանակութեանը: Միակ կտուածն երևան է գալիս ամենաբարձր բարյական կատարելութեամբ. այդպէս են՝ հրեաները, քրիստոնեաները և մահմեդականները:

Քրիստոնէութիւնը սերտ յարաբերութիւն ունենալով Եւ-
րոպակից դուրս գտնուող ազգերի հետ՝ թողեց այն նախապա-
շարումը՝ իբրև թէ նրանց հոգիները փրկութեան համար չեն
որոշուած։ Եւ 16-րդ դարու սկզբէց արդէն միսիօնէրներն ան-
հրաժեշտ լնկերակիցներն են վաճառականութեան, տիրապե-
տութեան և նոյն իսկ ստրուկների վաճառման գործում։ Մի-
տիօնէրների առաջ գալը մեծ նշանակութիւն ունի ազգագրա-
կան տեսակէտից՝ ոչ միայն իբրև կրօնական նպատակով հիմ-
նուած մի հաստատութիւն, այլ առ հասարակ իբրև օտարնե-
րի գործունէութիւն մի ազգի մէջ, որի էական յատկանիշնե-
րի մասին նրանք շատ քիչ գաղափար ունեն, բայց մեծ ձրգ-
տումն ունին ուսումնասիրելու։

Միաստուածեան կրօնները թէև չեն կարող ընդունել նե-
կերները—շատ դէպքերում նրանք չեն կարողացել նոյն իսկ
բարձրագոյն էակի անունները գործ ածել իրենց մի Աստուծոյ
համար, որովհետև թիւրիմացութիւններ շատ կլինէին—բայց
բնական ազգերի կրօնների ուրիշ մտքերի մէջ կայ միացման
կարելիութիւնը և եղածի հիմնաւոր շարունակութիւնը։ Այդ
կարելիութեան շեշտելը տեսականապէս նոյնչափ նշանակութիւն
ունի բնական ազգերի արհամարհուած կրօնի ճանաչողութեան
համար, որչափ գործնական՝ քրիստոնէութեան ակնկալութիւն-
ների արժէքը որոշելու համար։ Հանգուցեալների հոգիների յա-
րատեւ կենդանի մնալու միտքը նման է քրիստոնէութեան հո-
գու անմահութեան ուսմանը։ Խախնեաց հոգիները լիշելու մասին
տածած խնամքը չէ հակասում քրիստոնէութեան։ բայց բանը
չպէտքէ հասցնել նախնեաց աստուածացմանը. այլտեղից արդէն
սկսում է կուապաշտութիւնը։ Քրիստոնէութիւնը բնական ազգերի
տիեզերական առասպեկների մէջ կրկին գտնում է ստեղծագործու-
թեան ուսման սկզբունքները և շատ անդամ աչքի ընկնող
նմանութեամբ։ Դէմիուրգների հետ կարելի է կապակցել վեր-
ջապէս քրիստոնէական ըմբռնումը չալր Աստուծոյ և Որդի
Աստուծոյ մասին։

Անդունդն աւելի խորը կրացուի, եթէ մերձենանք բարոյա-

կան օրէնքներին, որ քրիստոնէական ուսման էական բաղկա-
ցուցիչ մասերն են։ Միսիօններներ՝ չնայելով Աբրահամի զոհաբե-
րութեանը, յաճախ պէտք է հանդիպեն մարդկանց զոհաբերու-
թեան և կեանքի չնչին գնահատման և որ աւելի գժուարն
է, նրանք պէտք է իրենց աշակերտողների բարոյականութեան
վրայ ազգեն զուտ աշխարհային շրջանից շատ աւելի հեռանալով՝
քան թէ կուապաշտ քրմերը։ Դրանց քրիստոնէութիւնը պէտք
է ընկերապարական և տնտեսական կողմեր ունենայ, որպէս զի
յեղափոխական ազգեցութիւն ունենայ։ Բազմակնութիւնն ու
ստրկութիւնը դայթակղութեան երկու մեծ քարերն են։ Միսիօ-
ններներն աշխատում են իրենց նպատակին համնել իրենց աշա-
կերտողների տնտեսական գոյութեան յեղափոխութեամբ, բայց
դիւրութեամբ չափից անցնում են, որովհետեւ աղքատ, բայց
յարմար դրութիւնից դէպի աւելի լաւ, բայց պահանջներով լի
դրութեան փոխակելը կարող է միայն տնտեսական յեղափոխու-
թիւնն առաջացնել, որի հետևանքները կարող են թէ օգտա-
կար և թէ վնասակար լինել և աւելի շուտ վերջինը, քան
առաջինը։ Կրակապաշտների զոյութիւնը կարող է Եւրոպացի-
ների աչքին սարսափելի երեալ, բայց իրենց՝ կրակապաշտների
աչքին շատ լաւ։ Միսիօնները պէտք է հարկաւ այն տեսակէտով
առաջնորդուի, որ բարձր քաղաքակրթութիւնն առանց այն
էլ աւերիչ կերպով է ներգործում կրապաշտների կեանքի հան-
գամանքների վրայ, ուստի և ինքը պէտք է աշխատէ, որ
զործնական կերպով մեղմացնէ իւր աշակերտողների դարձը։
Սակայն նա արհեստաւորի կամ վաճառականի գեր չպէտք է
կատարէ, որովհետեւ այդ կհակասէ այն խորհրդաւորութեան
տարրին, որ կայ բնական ազգերի քրմապետութեան մէջ՝ նա-
խապաշարմանց ահազին քանակութեան հետ ի միասին։ Զի
կարելի բանի տեղ չգնել այդ լիշենք օրինակ Աֆրիկայում շատ
տարածուած հրաժարման ուխտը, որ առանձին ծէսով է տեղի
ունենում. և կամ շամանի հոգեկան և մարմնաւոր ինքնակամ
չարչարանքներով հոգին աւանդելը։ Հրաժարման և գործնա-
կան աշխատանքի յաջող կապակցութեան մէջ են կայանում Հո-
գեոր միաբանութիւնների միսիօնների գործունէութեան բա-

րեյածող հետևանքները: Եթէ գերմանական միսիօներները լաջողութիւն ունեցան հերերօների մէջ, պատճառը սրանց տընտեսական և ընկերական զարգացումն էր, որ պատրաստ էր ընդունել քրիստոնէութիւնը: Խօսքով քարոզած ուսումից աւելի լաւ է ազդում զործը, որ երեսում է միսիօների բռնած դիրքից և այն խաղաղ ու անդորր եղանակից, որով նա աշխարհի իրերն է ըմբռնում և գործադրում: Նախապաշարմանց խառնակոյտի մէջ միայն քահանան կարող է խրամասու փուլել. քահանան կարող է միեւնոյն ժամանակ և բժիշկ լինել:

Երերի իշխանների և քահանաների մէջ եղած և ամեն տեղ լայտուող կապակցութիւնն ի նվատի առնելով՝ անկատկած է, որ առաքելութեանց յաջողութիւնը կախումն ունի նաև քաղաքական հանգամանքներից և դրանց ուղիղ գնահատութիւնից: Ուր որ միսիօներները կարողանում են մի զօրեղ իշխողի հովանաւորութեան տակ լինել՝ այնտեղ էլ կարելի է լինում իրենց խնդրի յաջող լուծումը: Գօնդոկօրոյում մեծ յոյսերով հիմնուած աւստրիական առաքելութիւնը ոչնչացաւ՝ առանց իր գործունէութեան հետքն անգամ թողնելու, որովհետև գրինաւորապէս միմիայն իւր ուժերով էր ուզում զործ առաջացնել: Այնտեղի կառավարութիւնը փոխանակ քաղաքականապէս բոլորովին ընկած Բարի ժողովրդին զափելու և իր կարուածքները պաշտպանելու, իւր էտ թեսամբ և նայ ստակներով բոլորովին հակառակ էր առաքելական գործունէութեան և զբաղուած էր ստրկավաճառութեամբ: Բոլորովին տարբեր հետեւանքների հասան միսիօներները, երբ չհալածուելով ցեղապետից, կարողացան իրենց գործունէութիւնը գարգացնել, ինչպէս օրինակ Մօֆֆատը Պօգիլիկատղէի մօտ, կամ թէ ուր որ կարողացան հզոր ցեղապետների պաշտպանութիւնը զանել, ինչպէս Լիւխնդուսը բազուտօ-մակօլոլոյի մօտ կամ թէ զանգան դաւանութեանց միսիօներներն Ուգանդայում:

Այս բոլորից պէտք է պարզ երևալ, որ քրիստոնէական առաքելութեան գործունէութիւնն յաջող հետևանք կոնհենալ, երբ նախապէս ուսումնասիրուին ընտկան աղքերի կրօնական հայեացքները և աշխարհապէս կարգ ու կանոնները: Այդ

բանն ըմբռնող շատ միսիօներներին ազգագրութիւնը պարտական է շատ մեծ արժէք ունեցող աշխատութիւններ: Յաճախ լեզուի անհրաժեշտ ուսումնասիրութիւնն էր պատճառ լինում ժողովրդի կեանքը հիմնաւորապէս ուսումնասիրելուն: Սակայն ով կամենում է «վայրենուն» ուսուցանել, ինքն էլ պէտք է ըմբռնէ քրիստոնէութեան էութիւնն ու մտքերի խորութիւնը: Յաջողութիւն չեն ունեցել ամենից շատ այն անզարգացած միսիօներները, որոնք իրենց հաւատի էութիւնն անզամ չեն կարսղացել ըմբռնել, լինչպիսիներին որ ուղարկել է Անգլիան և հիւսիսային Ամերիկան. գոքա քրիստոնէական սիրուց զուրկ լինելով՝ յաճախ աւելի վաճառականներ և քաղաքական գործակալներ են եղել, քան թէ քրիստոնէութեան առաքեալներ:

Վերջացնելով մեր խօսքը՝ լիշենք նաև, որ մի նոր հաւատի տարածուելը միւնոյն ժամանակ նշանակում է և քաղաքակըրթութեան իշղափոխութիւն և միմիայն մի սերնդի գործ չէ: Առաքելութիւնը թոյլ չէ տալիս շտապիւու. նա ոչ մի ջանքեց փախուստ չպէտք է տայ՝ աւազի հատիկները միմեանց վրայ ժողովելու. նա չպէտք է արագ հետևանք ունեցող երեսութներից սիսալուի և դրանով իւր խոկական նպատակից փոքր ինչ անզամ չշեղուի:

Քրիստոնէութիւնից յետոյ առաքելութիւն ունի և խալան՝ իրըև երկրարդ միաստուածեան կրօն: Խոլամականութիւնն յառաջադիմում է Աֆրիկայում և Ասիայում: Նա ըստ երեսութիւն տարածւում է ինչպէս Աֆրիկայի նեգրաբնակ երկրներում, որ պահպանում է երկնաքի պաշտամունքը և արևմտեան Աֆրիկայում, ուր մահմեդական հոլեսորականներն աննկատելի կերպով կռապաշտ քրմերի տեղն են բւնում. բայց այնուամենայնիւ խոլանն այլտեղ աւելի է արմատ բւնում քան քրիստոնէութիւնը: Խոլամը տրամսբանական դժուարութիւններ չեն չէ յարուցանում և ինչ որ գոլծնականապէս պատուիրում է՝ դժուար չէ իրազործելը: Բազմակնութեան և ստրկութեան թուլութիւնն անհամեմատ առաւելութիւնն է տալիս նրան՝ քրիստոնէութեան դէմ: Բազմակնութեան արգելքը քրիստոնէութիւնից հեռացնում է՝ մինչև որ տեղի կունենայ բարքերի մի մեծ յեղափոխութիւն—

շատ կին ունեցողներին, որոնց հասարակական բարձր դիրքը
ոչնչով այնչափ աչքի չէ ընկնում, որչափ բազմաթիւ կանայք
պահելով: Այդ պահանջը շատ անգամ միսիօներներն էլ խստիւ չեն
կարողանում անել և հարաւային Ուրալեան կողմերում, նոյն խսկ-
ռուս աստիճանաւորների աչքի առաջ՝ շատ թաթարներ քրիս-
տոնէ ութիւնից հեռացան այդ պատճառով: Խոլամի ազգեցու-
թեան մեծ մասն այդ թողուութիւնից է կախուած: Դրան
աւելանում է նաև այն հանգամանքը, որ խոլամն ընկերական
և պետական կազմակերպութեան աւելի ստոր աստիճանների
վրայ գտնուող ժողովուրդներին աւելի է յարմարում և կապուած
է մի քաղաքակրթութեան հետ, որ այնքան աւելի մօտ է այդ
ժողովուրդներին, որքան դրանք աւելի մօտ են խոլամի ծննդա-
վայրին՝ թէ ըստ աշխարհագրութեան և թէ ըստ կիրմայի:

Պարզկութեան երրորդ մասն անգամ գեռ ևս քրիստոնեան է: Հինգ հարիւր եօթանասուն (570) միլիոն միաստուած պաշտողներից՝ չորս հարիւր քառասուն (440) միլիոնը քրիստոնեան է: Երկրիս բնակիչների մնացած իննը հարիւր (900) միլիոնից մեծ մասը, վեց հարիւր միլիոն, բուդդայական են, որոնք ամենից մեծ գիտարութեամբ են հակում դէպի քրիստոնէութիւնը: Կռապաշտների մնացորդներից կարողացել են միսիօներները, որ այժմ երեք հազարի չափ են, շատերին քրիստոնեայ դարձնել: Աւելի մեծ յաջողութիւն միսիօներներն ունեցել են Ովկիանեան աշխարհում, ուր բազմաթիւ կղզիների բնակիչները քրիստոնէութիւն են ընդունել և իրենց միջից արդէն միսիօներներ են ուղարկում մօտակալ կղզիներում քարտղելու քրիստոնէութիւնը: Աֆրիկայում Պատղակասկարը համարեած թէ ամբողջովին քրիստոնէական ազգեցութեան ներքոյ է. հօթենդօտներն ու հերերօները, Լիբէրիայի և Սիէրա Լէօնէի բնակիչները և Անգոլայի, Պոկեզը և սաուրին Նիգէրի բազմաթիւ ցեղերը քրիստոնեայ են դարձել: Ասիայում չնդկաստանի մօտ չորս հարիւր-երրորդ մասը քրիստոնեայ է մկրտուել. այս թիւն աւելի քիչ է Զինաստանում՝ ժողովրդի քանակութեան հետ համեմատելով. Զինաստանում միայն վաթունու հինգ հազար (65,000) քրիստոնեայ կայ:

IV

Թարգմանութիւններ

1. Պեստալոցցի. Լինհարդ և Գերտըռուդ. վէպ. գինն է 1 լ. 50 կ:
 2. Պօռֆ. Հուրալէյ (Փէքսլի) Տարերք բնական գիտութեանց. գինն է 40 կ.
 3. Դր. Նառաման. Էրզրում. գինն է 15 կ.
 4. Ե. Սպիրի. Վարդ Թեղլին. գինն է 10 կ.
 5. » Ուռենց Յովոէփ. գինն է 15 կ.
 6. » Այծարած Մօնի. գինն է 15 կ.
 7. » Ալպեան Հովիւ. գինն է 20 կ.
 8. » Հայրենագուրկ. գինն է 50 կ.
 9. Եօկայի. Ուրացողը. գինն է 20 կ.
 10. Պրօֆ. Ռամցէլ. Տարերք Ազգագրութեան. գինն է 30 կ.

ՏՊԱԿՐՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ ՊԱՏՐԱԾ Է

Պրօֆ. Մանուելացցա. Սիրոյ բնախօսութիւնը

Աշխատանիր. դիմողները նաև ապահոված չեն վճարում:

Հայոց Արքական Սեմինարիա Ներսիսյան. Իսաակ Արդյունաց.



ՄԱՐԴԱՐԱՆԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

- 1) ԼԵՅՈՒԹՅՈ. Ամուսնական գարզացումն. թարգմ. Ե. Ղալայեանի — 20
 - 2) ԿԸՆԵՍՊԻՐԻՆԻ. Մարդարանութիւն, թարգմ. Ե. Լ. — 80
 - 3) ՊՈԶԱՎՈՅ. Նորագոյն տեսաւթիւններ ընտանիքի,
հասարակութեան և պետութեան ծագման
մասին, թարգմ. Ե. Ղալայեանի — 30
 - 4) ԹԱՏՅԱՆ. Տարերք ազգադրութեան, թարգմ. Ի. Յ. — 50
- Դիմուլ Ե. Լալայնց, Սեմինարիա Ներսիսյան. Թիֆլիսъ.

13124